Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՅՈՒ. Գ. ԲԱՐՍԵՂՈՎ

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔՆ Է

«ՀԱՅԱՍՏԱՆ»

Վ. Գրեբենշչիկով
26.06.90 թ

ՅՈՒ. Գ. ԲԱՐՍԵՂՈՎ

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՋԳԱՄԻՋՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔՆ Է

ԵՐԵՎԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» 1990

ԳՄԴ 67.91
Բ 371

Խմբագրական կոլեգիա՝
Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս
Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ,
պատմական գիտությունների
դոկտոր
Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ,
փիլիսոփայական գիտությունների
դոկտոր
Գ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ռուսերենից թարգմանեց
Մ. Տ. ԽՈՑԱՆՅԱՆԸ

Բարսեղով Յու. Գ.

Բ 371 *Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է։ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի շուրջը [Ռուս. թարգմ. Մ. Տ. Խոցանյանը; խմբ՝ կոլեգիա՝ Գ. Գալոյան և ուրիշն.].— Եր.։ Հայաստան, 1990.— 124 էջ։*

Բ $\frac{0301050700}{701\ (01)-90}$ չհայտարարված

ԳՄԴ 67.91

ISBN 5—540—01065—5

© *Թարգմանված է ռուսերեն.— Խոցանյան Մ. Տ., 1990*

№ 26325

Նախաբան

Մեր երկրում ամբողջ հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի սկսված վերակառուցումը վճռականորեն պահանջեց ազգամիջյան հարաբերությունների լենինյան սկզբունքների վերականգնում։ Ազգամիջյան հարաբերությունները դարձան ծագած սուր հարցերի քննարկման ու լուծման համառ որոնումների առարկա։ Դրանց մեջ հատուկ տեղ է գրավում Ղարաբաղի հարցը, որում ինչպես կիզակետում արտացոլվում են ազգամիջյան հարաբերությունների լենինյան սկզբունքների ու նորմաների ձևախեղման բոլոր կործանարար հետևանքները։ Ղարաբաղի պրոբլեմի ճիշտ լուծումը սկզբունքային վիթխարի նշանակություն կունենար ամբողջովին վերցրած մեր երկրում ազգային հարցի լուծման և ԽՍՀՄ-ի խախտված հեղինակության վերականգնման համար որպես ազգային հարցի լուծման օրինակ դեմոկրատիայի, իրավունքի և արդարության անհողդողդ հիմքերի վրա։

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պրոբլեմը, որ քաղաքական ասպարեզ հանվեց վերակառուցման պրոցեսների ալիքով որպես ազգամիջյան հարաբերությունների ամենասուր պրոբլեմներից մեկը, ահա արդեն երկրորդ տարին է դարձել է խորհրդային և արտասահմանյան մամուլի էջերում աշխույժ քննարկման առարկա, հասարակական լայն շրջանների սևեռուն ուշադրության օբյեկտ։

Կասկած չկա, որ առանց ազգային քաղաքականության բնագավառում խորհրդային հասարակության արմատական վերակառուցման կուսակցության կուրսի այդ պրոբլեմը կմնար յոթանասունամյա փլատակների թանձրաշերտի տակ։ Սա-

№ 10792
«07» 11 2018 թ.

կայն կասկածից վեր է նաև այն, որ Ղարաբաղի, ինչպես նաև համանման այլ պրոբլեմներ, ջրի երես դուրս գալով և վերջին ժամանակներս բացառիկ սուր բնույթ ընդունելով, պետք է համակողմանիորեն քննարկվեն և իրենց արդարացի լուծումն ստանան։ Քանի որ դրանով, ինչպես ընդգծվում է ԽՄԿԿ Կենտկոմի կուսակցության ազգային քաղաքականության վերաբերյալ պլատֆորմում, պայմանավորված են վերակառուցման բախտը, մեր երկրի և խորհրդային ֆեդերացիայի ապագան։

Այդ խնդրի լուծման համար սկզբունքային մոտեցումներ կան։ Դրանք ամփոփված են «Ազգամիջյան հարաբերությունների մասին» ԽՄԿԿ Համամիութենական XIX կոնֆերանսի բանաձևում, ժողովրդական դեպուտատների առաջին համագումարի նյութերում, ԽՄԿԿ պլատֆորմում, ուր, մասնավորապես, նշվում է ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման համար բոլոր միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը։

Պրոբլեմն առկա է և դժվար է վիճարկել նրա գոյությունը։ Ասենք, այն չի ժխտվում նաև կուսակցական ու պետական բարձր մակարդակով։ Ամենից ավելի դժվար է ճշմարտությունը պրակտիկայում մարմնավորել, արմատական փոփոխությունների ճանապարհներին ստերեոտիպերը հաղթահարել, փորձությանը դիմանալ բարի ու իսկական ինտերնացիոնալիզմով, դեմոկրատիայի ճանապարհին հասարակական կարծիքը նախապատրաստել շեշտակի շրջադարձերի, մարդկանց օժտել բարոյականության իսկական արժեքներով, օգնել ըմբռնելու ժողովուրդների բարեկամության բուն էությունը, քաղաքացիներին զինել իրավաբանական կայուն գիտելիքների նվազագույնով, որոնք այնքան անբավարար են և այնքան անհրաժեշտ նրանց այն դեպքերում, երբ խաղաթղթի վրա է դրվում այս կամ այն ազգի կամ նրա մի մասի բախտը։

Դուցե հենց այս վերջինիս մեջ է մեր գլխավոր վրիպումը, պատմաբան-հասարակագետների, իրավաբան-իրավագետների թերամշակումը։ Բայց չէ որ մինչև վերջին ժամանակներս լայն հասարակայնությունը զրկված էր գիտական ճիշտ ինֆորմացիայից ըստ էության ազգային, այդ թվում Ղարաբաղի, վիճելի հարցերի վերաբերյալ, որը հնարավորություն էր բացում որոշակի շահագրգռված շրջանների համար կեղծելու ոչ միայն այդ պրոբլեմի պատմությունը, այլև նրա առաջքաշման դրդապատճառները։

Հաջողվե՞ց արդյոք մեզ վերջին 3—4 տարում փակել այդ ճեղքվածքը, թե՞ գործն ավելի խճճվեց։ Ավաղ, պատասխանը չի կարող միանշանակ լինել։ Քանի որ այդքան կարճ ժամանակամիջոցում չի հաղթահարվի կեղծարարությունների հանդեպ տասնամյակներով արմատավորված բնազդը։ Քանզի այժմ էլ հասարակական ինֆորմացիայի շուկան հեղեղվում է կեղծգիտական մոլախոտով, առանց որից ազատվելու անհնար է կառուցել կամավոր միավորված ժողովուրդների կանգուն շենքը։

Արդեն շատ ամիսներ է մամուլի էջերում շարունակվում Ղարաբաղի պրոբլեմի իրավական ասպեկտների վերաբերյալ վեճը, հակասականորեն, երբեմն քմահաճորեն են մեկնաբանվում լենինյան ազգային քաղաքականության հիմնավոր սկզբունքները, այդ թվում նրա հիմքերի հիմքը՝ ազգերի ինքնորոշման սկզբունքը։

Ընթերցողին առաջարկվող գիրքը առաջին փորձն է միջազգային իրավունքի և մեր պետության ազգային քաղաքականության տեսակետից գիտականորեն վերլուծելու այն կարևորագույն բոլոր փաստարկները, որոնք վերաբերում են արցախյան հանգույցի հիմնական ասպեկտներին, հիմնավորելու և լավագույնս դնելու նրա արդարացի ու դեմոկրատական հանգուցալուծման խնդիրը։ Հետազոտության հեղինակը՝ հայտնի իրավաբան-իրավագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յու. Գ. Բարսեղովն է, որի գրչին են պատկանում միջազգային հարաբերությունների, միջազգային և պետական իրավունքի հարցերի վերաբերյալ մի շարք մենագրություններ և 200-ից ավելի հոդվածներ, նա խորհրդային գրականության մեջ միջազգային հարաբերություններում տարածքների պրոբլեմների վերաբերյալ առաջին մեծալուրջ հետազոտության հեղինակն է։ Նրա աշխատությունները լայնորեն հայտնի են միջազգային գիտական ընկերակցությանը, դրանցից շատերը թարգմանված են օտար լեզուներով (անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, ֆիններեն և այլն)։ Որպես իրավունքի ասպարեզում

ճանաչված միջազգային հեղինակություն ունեցող գիտնական ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընտրվել է միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամ։

Գիտնականի նոր հետազոտության մեջ ընթերցողը պատասխան կգտնի այն հարցերին, որոնք կազմում են շոշափվող պրոբլեմի իրավաբանական հիմքը։

Որպեսզի հեղինակի կողմից դրված տեսական հարցերը ընթերցողը պատմական իրականությունից կտրված չդիտի, խմբագրությունն անհրաժեշտ համարեց ստորև բերել հետևյալ տեղեկանքը։

***

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պրոբլեմը, որը գրեթե մեկուկես տարի է գտնվում է կուսակցության, կառավարության և խորհրդային ամբողջ ժողովրդի ուշադրության կենտրոնում, տարբերվում է պատմական, սոցիալ-տնտեսական, քաղաքական, էթնոմշակութային գործոնների բարդ միահյուսվածքով, նոր և հին շերտավորումների առկայությամբ։

Այն տարածքը, որը XIV դարից սկսեց կոչվել Ղարաբաղ, պատմական Հայաստանի Արցախ մարզի մի մասն է։ Հնագույն ժամանակներից այդ մարզում ապրում էին հայերը, որոնք շարունակում էին կազմել նրա բուն բնակչությունը նաև այն ժամանակ, երբ Հայաստանն ընկել էր օտարերկրյա զավթիչների՝ արաբների, սելջուկների, մոնղոլների, պարսիկների և այլոց լծի տակ։ Հատկապես Արցախի տարածքում ամենից երկար էր պահպանվում հայկական պետականությունը ոչ մեծ իշխանությունների ձևով և հենց այստեղ էլ ձևավորվել է հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշումը, որն արտահայտվել է Ռուսաստանի հետ կապերի հաստատման և ռուսական պետության որպես պարսկական ու թուրքական զավթիչների լծից հայ ժողովրդին ազատագրություն բերող միակ ուժի ճանաչման մեջ։

Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացումը XVIII դարի սկզբներին հայ ժողովրդի սրտերում հույս

էր ներշնչում ռուսական զենքի օգնությամբ ազատագրվելու Պարսկաստանի ու Թուրքիայի լծից։

Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայում հայկական զորականության ներկայացուցիչների 1924 թ. նոյեմբերի 5-ի եզրակացության մեջ ասվում է. «...Նորին կայսերական մեծության հրովարտակի հրապարակումից հետո նույն այն Ղարաբաղի գավառից հավաքագրվել է ընդամենը մինչև 40 000 հայկական զորք, որից 30 000 հեծելազոր և 10 000 հետևակ... Իսկ նրանք, հայ ժողովուրդը, զինվորական և այլոք, միայն Ղարաբաղի գավառում, ովքեր ցանկանում են գալ նորին կայսերական մեծության հովանու տակ, ընդամենը կլինի հարյուր հազար ծուխ, բացի Ղափան կոչվող հայկական մյուս գավառից...»[1]։ XVIII դարի վերջերին ռուսական կառավարությունը հղանում էր Ղարաբաղում «հայկական անկախ, բացի Ռուսաստանից, ոչ մեկին չպատկանող մարզի» ստեղծման իրական պլաններ։ 1783 թ. մայիսի 19-ին իշխան Գ. Ա. Պոտյոմկինը Եկատերինա II-ին գրել է. «...Հարմար առիթի դեպքում նրա (Ղարաբաղի Իբրահիմ խանի— խմբ.) մարզը, որը բնակեցված է հայերով, հանձնել ազգային կառավարման, և դրա միջոցով Ասիայում վերականգնել քրիստոնեական պետությունը համաձայն ձ.կ.մ. բարձրագույն խոստումների, որ իմ միջոցով տվել եք հայ մելիքներին»[2]։

1813 թ. ըստ Գյուլիստանի հաշտության պայմանագրի, որով ավարտվեց 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Ղարաբաղը, Արևելյան Հայաստանի հյուսիսարևելյան մյուս մարզերի հետ միասին միացավ Ռուսաստանին։ Ռուսաստանի կազմում Ղարաբաղը դարձավ արևելյան հայերի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի ճանաչված կենտրոններից մեկը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից և Անդրկովկասում ազգային հանրապետու-

---

[1] «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», т. II, ч. II, 1967, с. 204—205.

[2] **О. И. Марков.** Россия, Закавказье и международные отношения в XVIII в. М., с. 161, 183.

թյունների կազմավորումից հետո երկրամասը կտրվեց Խորհրդային Ռուսաստանից։ 1918—1920 թվականների ընթացքում Լեռնային Ղարաբաղի բնակչությունը բազմիցս կասեցրել է երկրամասը զավթելու մուսավաթական հրոսակների և թուրքական զորքերի փորձերը։ Ղարաբաղի բնակչությունը հայրենիքի՝ Հայաստանի մեջ մտնելու իր վճռական կամքն է արտահայտել։ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Անդրկովկասում իր քաղաքականության մեջ ելնում էր Ղարաբաղը Հայաստանի մի մասը ճանաչելու փաստից, անգամ այն ժամանակ, երբ Ադրբեջանում արդեն հաղթանակել էր խորհրդային իշխանությունը։ Իսկ Հայաստանը շարունակում էր մնալ բուրժուական հանրապետություն։

1918—1920 թթ. Լեռնային Ղարաբաղը կառավարում էր Հայկական Ազգային խորհուրդը, որը կազմակերպում ու գլխավորում էր պայքարը մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականության դեմ։

1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի հայերի առաջին համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ և նահանգի ժողովրդական կառավարություն։

1918—1920 թթ. Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ներկայացուցիչների համագումարների բանաձևերում բազմիցս հայտարարված է, որ մարզը Հայաստանի անբաժան մասն է։

1920 թ. մայիսի սկզբներին Լեռնային Ղարաբաղի հայերի իններորդ համագումարը որոշեց. «Հայտարարել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հանրապետությանը որպես նրա անբաժան մաս միավորվելու մասին»։

1918—1920 թթ., նախքան Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը, Լեռնային Ղարաբաղն անկախ էր։ Լեռնային Ղարաբաղը զավթելու և այն Ադրբեջանի «անբաժան մասը» դարձնելու մուսավաթական Ադրբեջանի բոլոր փորձերն անհաջողությամբ վերջացան։

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեց խորհրդային իշխանություն։ Սակայն խորհրդային Ադրբեջանի

կառավարությունը չհրաժարվեց Հայաստանի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի նկրտումներից։

Արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինը 1920 թ. հունիսի 29-ին այդ մասին Վ. Ի. Լենինին գրեց հետևյալը. «Այդ վեճի վերջին փուլը Ադրբեջանի կողմից հավակնությունների հայտարարությունն է մշտապես Հայաստանին պատկանած և փաստորեն Հայկական հանրապետության ձեռքում գտնվող վիթխարի օկրուգների նկատմամբ։ Ադրբեջանի կառավարությունը հավակնություն է հայտարարել Ղարաբաղի, Զանգեզուրի և Շարուր-Դարալագյազի գավառի նկատմամբ՝ Նախիջևանի, Օրդուբադի և Ջուլֆայի հետ միասին։ Այդ վայրերի մեծ մասը փաստորեն գտնվում է Հայկական հանրապետության ձեռքին»[1]։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն, գիտենալով ադրբեջանական նացիոնալիստների ագրեսիվ նպատակների մասին, 1920 թվականի հուլիսի 7-ի նիստում Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշեց ժամանակավորապես գրավել այդ տարածքները, հետագայում դրանց ճակատագիրը որոշել Ռուսաստանի ներկայացուցչի նախագահությամբ խառը հանձնաժողովի միջոցով։ «Ընդ որում»,— ասվում էր որոշման մեջ,— խառը հանձնաժողովը կղեկավարվի բնակչության էթնիկական կազմով և նրա կամքի արտահայտությամբ»։ Այս էր Վ. Ի. Լենինի և կուսակցության քաղբյուրոյի կարծիքը, որը ելնում էր ազգերի ինքնորոշման իրավունքից։ Այդ հայկական տարածքների բնակչությունն իրավունք ստացավ ինքը որոշելու իր բախտը։

1920 թվականի նոյեմբերի 29-ին խորհրդային իշխանությունը հաղթեց Հայաստանում։

Ադրբեջանի հեղկոմը նոյեմբերի 30-ին Նարիմանովի և Հուսկինովի ստորագրությամբ ողջույնի հեռագիր ուղարկեց Հայաստանի հեղկոմին. «Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությունը, հաղորդում ստանալով Հայաստանում ապստամբած գյուղացիության անունից խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակման մասին, ող-

[1] ЦПА ИМЛ, ф. ЦК КПСС, общий отдел, 6-й сектор, д. 44—3/3а, л. 55.

ջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը։ Այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի նախկին սահմանները հայտարարվում են չեղյալ։ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում են Հայկական Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մասը։

Կեցցե՞ Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի բանվորների և գյուղացիների եղբայրությունն ու դաշինքը»[1]։

Այդ որոշումը հավանությամբ ընդունեցին Վ. Ի. Լենինը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ս. Մ. Կիրովը և կուսակցության ու պետության այլ գործիչներ։

1920 թ. դեկտեմբերի 2-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն հաղորդեց Մոսկվա, որ «Ադրբեջանը երեկ արդեն պաշտոնապես հայտարարեց Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին»։

1921 թվականի հունիսի 3-ին ՌԿ(բ)Կ Կովբյուրոն իր նիստում, որին մասնակցում էին Օրջոնիկիձեն, Մախարաձեն, Նարիմանովը, Մյասնիկյանը և ուրիշներ, միաձայն որոշեց. «Հայկական կառավարության դեկլարացիայում նշել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու մասին»։ Այդ որոշմանը համապատասխան, 1921 թ. հունիսի 12-ին Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհը հրապարակեց մի դեկրետ, որում հաղորդվում էր, որ «Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի սոցիալիստական հանրապետությունների պայմանավորվածության հիման վրա հռչակվում է, որ այսուհետև Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անբաժան մասը»[2]։

Սակայն շուտով Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ արմատական փոփոխությունների ենթարկվեց։ Ադրբեջանական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ն. Նարիմանովը պահանջեց այն թողնել Ադրբեջանի կազմում, հակառակ դեպքում սպառնալով կառավարության պաշտոնաթողությամբ։

[1] «Խորհրդային Հայաստան», Երևան, 1921 թ., հունիսի 19։
[2] «Կոմունիստ», Երևան, 1920 թ., դեկտեմբերի 7։

Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար 1921 թ. հունիսի 4—5-ին հրավիրվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենում, որն սկզբում որոշեց Լեռնային Ղարաբաղը թողնել Հայկական ԽՍՀ կազմում, իսկ ապա, Ն. Նարիմանովի կրկնակի բողոքից ու սպառնալիքներից հետո ազգությունների ժողկոմ Ի. Ստալինի մասնակցությամբ որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի մեջ մտնելու մասին՝ նրան վերապահելով մարզային ինքնավարություն։ Դրանից անմիջապես հետո Հայկական ԽՍՀ-ի և Ադրբեջանական ԽՍՀ-ի միջև սահմանազատումը տարվեց այնպես, որպեսզի Լեռնային Ղարաբաղն ընդհանուր սահման չունենար Հայկական ԽՍՀ-ի հետ. նրանց միջև ստեղծվեց հինգկիլոմետրանոց կորդոն։ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն 1921 թ. հուլիսի 16-ին իր անհամաձայնությունն արտահայտեց Կովբյուրոյի նման որոշման հետ։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի այդ դիրքորոշումը հաստատեց Հայաստանի կոմկուսի I համագումարը 1922 թվականի հունվարին։

Հարկավոր է նշել, որ ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի ուղղակի որոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ՝ լինի այն հօգուտ Հայաստանի կամ հօգուտ Ադրբեջանի, չի կարող իրավական ճանաչվել, թեկուզ այն պատճառով, որ Կովբյուրոն կուսակցական մարմին էր, որի իրավասության մեջ չէին մտնում պետականության ձևերի որոշման, առավել ևս՝ երկրամասի տարածքային բաժանման հարցերը։ Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը ոչ միայն ծնունդ է վարչահրամայական համակարգի, որը մեղավոր է ազգամիջյան հարաբերությունների բնագավառի բազմաթիվ ձևախեղումներում, այլև ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի թույլ տված կոպիտ սխալի հետևանք։

Քաղաքական այդ սխալի հետևանքները բավական լավ են հայտնի։

Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ վերջին մեկուկես տարում կուսակցության ու կառավարության բոլոր որոշումներում ընդունվում է, որ մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելու ընթացքում սոցիալ-տնտեսական և մշակութային բնույթի բավական շատ պրոբլեմներ են կուտակ-

վել. ըստ էության ԼՂԻՄ-ը վերածվել է Ադրբեջանական ԽՍՀ-ի հումքային կցորդի, մարզում հետևողականորեն իրականացվում էր հայ բնակչության խտրականություն բոլոր ուղղություններով, կոպիտ կերպով ոտնահարվում էին նրա ազգային արժանապատվությունն ու իրավունքը, ստեղծվել էր ժողովրդագրական բարդ իրադրություն, որն արտահայտվում է հայ բնակչության նվազման բացահայտ միտումով[1]: Ղարաբաղի հայ բնակչությունը ամենայն որոշակիությամբ պատկերացնում էր, որ իրեն սպասում է Նախիջևանի ԻԽՍՀ-ի հայ բնակչության ճակատագիրը, որն ամբողջովին դուրս մղվեց այստեղից ադրբեջանական ղեկավարության քաղաքականության հետևանքով:

Լեռնային Ղարաբաղի հայերը չէին հաշտվում նման դրության հետ, անցած տասնամյակների ընթացքում նրանք բազմիցս դիմել են երկրի ղեկավար մարմիններին մարզը Հայաստանի՝ Հայաստանի գիրկը վերադարձնելու խնդրանքով: Բայց բոլոր ելույթները կանխվում էին, բողոքները մնում էին անհետևանք: Այս ամենը վկայում է այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի սրումը պատահական չէր: Մեր երկրում սկսված հեղափոխական վերակառուցման ու նորացման, դեմոկրատացման ու հրապարակայնության պրոցեսը ԼՂԻՄ-ի հայ բնակչությունն ընկալեց որպես օբյեկտիվ հիմք, որը վերջապես հույս է ներշնչում ուղղելու անցյալում թույլ տրված սխալները:

Ինչպես հայտնի է, 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին հանդես բերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սպասումների խոր ըմբռնում և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմին հանձնելու հարցը: Ղարաբաղի հայ բնակչության այդ շարժումը չէր հակասում խորհրդային սահմանադրությանը, հիմնվում էր իրենց տարածքում ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքների վրա:

[1] Տե՛ս Нагорный Карабах. Историческая справка. Ереван, 1988, էջ 96.

1988 թ. հունիսի 15-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, արտահայտելով հայ ժողովրդի կամքը, պաշտպանեց ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի արդարացի որոշումը: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի խնդրանքը համարեց անընդունելի և մերժեց այն, դրանով իսկ հարցը մտցվեց փակուղի:

ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեն, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը և ԽՍՀՄ կառավարությունը բազմիցս անդրադարձան Լեռնային Ղարաբաղի պրոբլեմին՝ որոնելով դրանց լուծման ուղիները: Կազմվեցին զանազան հանձնաժողովներ, անցկացվեցին երկու հանրապետությունների ղեկավարության, Հայաստանից ու Ադրբեջանից ընտրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատների հետ ստեղծված դրության քննարկումներ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշմամբ ուղարկվեց ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հատուկ հանձնաժողով Ա. Ի. Վոլսկու գլխավորությամբ:

Մի ամբողջ շարք հանգամանքներ բարդացրին պրոբլեմը, հանգեցրին ամբողջ ռեգիոնում ծայրահեղ լարված դրություն ստեղծվելուն: Դա ամենից առաջ 1988 թ. փետրվարի վերջին օրերին կազմակերպված հայ բնակչության կոտորածն էր Սումգայիթում, որը հայ ամբողջ ժողովուրդն ընդունեց որպես ցեղասպանություն: Նացիոնալիստական մոլեռանդության սանձարձակության պայմաններում հնարավոր դարձած այդ կոտորածին քաղաքական գնահատական չտրվեց, նրա իսկական կազմակերպիչները չեն բացահայտված և չեն պատժված: Հենց հայերի ջարդը Սումգայիթում Ադրբեջանական ԽՍՀ հայ բնակչության նկատմամբ բռնության ու ահաբեկչության զանգվածային ակտերի և Հայկական ԽՍՀ նրա գաղթի գլխավոր պատճառ ծառայեց, դա իր հետևից բերեց Հայաստանի ադրբեջանական բնակչության գաղթը Ադրբեջան:

Հայ ժողովրդի բնդհանուր վրդովմունքը հարուցեցին երկրի զանգվածային լրատվության միջոցների ոչ օբյեկտիվ դիրքը, սկսված շարժմանը գնահատական տալու շտապողականությունը, Հայաստանի կոմկուսի նախկին ղեկավարության սխալ դիրքորոշումը, որը փաստորեն ինքն իրեն հեռացրեց

սկսված ժողովրդական հզոր շարժումից, չկարողացավ տիրել դրությանը։ Նույնիսկ 1988 թ. դեկտեմբերի 7-ի Հայաստանին հասած աղետաբեր երկրաշարժը հասարակական գիտակցությունից դուրս չմղեց Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, այլ միայն է՛լ ավելի բարդացրեց հանրապետության ծայրահեղ ծանր դրությունը։

Այդ պայմաններում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1989 թ. հունվարի 12-ին հրամանագիր ընդունեց ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին, որի համաձայն ստեղծվեց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտե Ա. Ի. Վոլսկու գլխավորությամբ։ Այնուհետև դադարեցվեցին մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը, ինչպես նաև կուսակցության մարզային կոմիտեի գործունեությունը։ Որոշվեց, որ կոմիտեն օժտված է ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի լիազորությունների լրիվ ծավալով։

Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծման ժամանակից հետո անցած ամիսները ցույց տվեցին, որ այդ ժամանակավոր արտակարգ միջոցառման իրականացումը քիչ է նպաստում իրադրության նորմալացմանը, առավել ևս՝ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի ճիշտ լուծմանը։ Քանի որ մարզը թողնված է Ադրբեջանական ԽՍՀ կազմում, փաստորեն հատուկ կառավարման կոմիտեն չունի իշխանության ամբողջ լիիրավությունը։ Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը շարունակում է վարել մարզի հայ բնակչության դուրսմղման քաղաքականություն, իր հայեցողությամբ արագացնում է ԼՂԻՄ-ի ադրբեջանական բնակավայրերում արտադրական ու սոցիալական ոլորտի օբյեկտների կառուցումը։ Չի ապահովված մարզի հայ բնակչության կյանքի ու գույքի անվտանգությունը։ Բնակչությունը գտնվում է ծայրահեղորեն ծանր հոգեկան վիճակում, չեն վերացված ազգամիջյան ընդհարումները կրկնող պատճառները։ Մարզում պայթունավտանգ իրադրությունը պահպանվում է. դա խոստովանեց Ա. Ի. Վոլսկին ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարում ունեցած իր ելույթում։ Հատուկ կառավարման ձև մտցնելն ամենևին չմոտեցրեց պրոբլեմի լուծումը։ Այդ ամենը

խոսում է այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմն առաջվա պես սպասում է իր արմատական քաղաքական լուծմանը ժողովուրդների ինքնորոշման անհողդողդ հիմքի վրա։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ինչպես համաշխարհային փորձը ցույց է տալիս, ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմները և մասնավորապես ազգատարածքային սահմանազատումների պրոբլեմները դասվում են ամենաբարդ, սուր և դժվարլուծելի պրոբլեմների շարքը։ Այդ պատճառով նման պրոբլեմների խաղաղ, դեմոկրատական և արդարացի լուծման ուղիների որոնումները մարդկությանը հանգեցրին ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի ընդունման անհրաժեշտությանը որպես պետության կողմից տարածքի տիրապետման ու տնօրինման համապատասխան իրավական հիմքի։

Ազգերի ինքնորոշման իրավունքը քաղաքակրթության բարձրագույն նվաճումներից մեկն է, անխտիր բոլոր ժողովուրդների իրավունքների փոխադարձ հարգման վրա հիմնված միջազգային հարաբերությունների քաղաքակիրթ ձևերը տանող նրա երկարատև ու փշոտ վերելքի արդյունքը, որը կբացառի հողի համար նախնադարյան, վայրենի, արնահեղ ընդհարումները, երբ գերակշռում էին տարածքային զավթումների, ուրիշ, ավելի թույլ ժողովուրդների ստրկացման, արտաքսման կամ ոչնչացման, անասնական բնազդներն ու կիրքը։

Միջազգային հարաբերություններում ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի, ինչպես նաև բազմազգ պետությունների ժողովուրդների և ամենից առաջ ԽՍՀՄ ժողովուրդների միջև հարաբերությունների մշակման ու հաստատման գործում պատմական մեծ դերը պատկանում է Վ. Ի. Լենինին, նրա ստեղծած կոմունիստական կուսակցությանն ու խորհրդային պետությանը։

Դեմոկրատական այդ սկզբունքի ակտիվ խոր ներգործությամբ միջազգային հարաբերություններում տեղի ունեցան

խորագույն վերափոխումներ. ժողովուրդների ստրկացման վրա հիմնված կայսրությունների տեղում ստեղծվել է պետությունների ժամանակակից համակարգը, որը հիմնվում է ժողովուրդների իրավահավասարության և նրանցից յուրաքանչյուրի իր բախտն ազատորեն տնօրինելու իրավունքի ճանաչման վրա։ Չափազանցություն չի լինի ասել, որ աշխարհի բոլոր ժողովուրդներն իրենց ազգային գոյության համար մղվող պայքարում հենվել են ինքնորոշման սկզբունքի վրա։ Հետպատերազմյան տասնամյակներում այն դարձավ իմպերիալիզմի գաղութային համակարգի վերացման իրավական հիմք։ Ժողովուրդների ինքնորոշման լենինյան սկզբունքը դարձավ այն ժողովուրդների ազատագրական պայքարի իրավական հիմքը, որոնք զավթամոլության ու բռնակցումների զոհ դարձան։

Թեև այսօր ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը անխտիր բոլոր պետությունների համար պարտադիր միջազգային և պետական իրավունքի հիմնարար հանրաճանաչ նորմա է, դրա իրականացումը, ինչպես և առաջ, հանդիպում է այն բոլոր ուժերի դիմադրությանը, որոնք այս կամ այն պատճառով պաշտպանում են իրենց համար ձեռնտու քաղաքական ու տարածքային ստատուս-քվո։ Ղեկավարվելով իրենց շահադիտական նպատակներով՝ նրանք միշտ ձգտել են սահմանափակել և աղավաղել իրավունքի այդ նորմայի բովանդակությունը։ Այդ պատճառով էլ այդ սկզբունքի կենսագործման, նրա աղավաղումների և խեղաթյուրումների դեմ մղվող պայքարը շարունակվում է համաշխարհային մասշտաբներով։

Բնական է, որ մեր երկրում սկսված վերակառուցման մեծ հեղափոխական պրոցեսն այդ պայքարին նոր զարկ է տվել։ Այսօր, երբ մեր երկրում ազգամիջյան պրոբլեմները նախաբեմ են դուրս եկել, ազգամիջյան հարաբերությունների լենինյան սկզբունքների վերականգնման, դրանք ստալինյան աղավաղումներից և լճացման ժամանակաշրջանի շերտասնամյակներից մաքրելու խնդիրը դարձել է հրամայական պահանջ, որից շատ բանով կախված է մեր երկրում հեղափոխական վերակառուցման բախտը, իսկ վերջին հաշվով, հաշվի առնելով ԽՍՀՄ-ի տեղը համաշխարհային համակարգում, նաև խաղաղության բախտն ամբողջ աշխարհում։ Ազգային շինարարության լենինյան նորմաների վերականգնումը և, մասնավորապես, սոցիալիստական ազգերի ազգատարածքային սահմանազատման լենինյան նորմաների վերականգնումն այնտեղ, որտեղ դրանք խախտվել էին, պետք է դառնա մեր հասարակության տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի օրավուր հզորացող վերակառուցման պրոցեսի բաղկացուցիչ մասը։

Ազգամիջյան հարաբերությունների լենինյան սկզբունքների վերականգնմանը բոլոր ուժերով դիմադրում է հակավերակառուցողական վանդեան։ Ըմբռնելով, որ ազատ ինքնորոշման իրավունքի հիման վրա այդ հարցերի դեմոկրատական և արդարացի լուծումը նրան զրկում է ազգամիջյան վեճեր հրահրելու, դրանք հավերժացնելու, հասարակությանը վերակառուցումից շեղելու հնարավորությունից, նա սերտորեն համագործակցում է շովինիստականորեն տրամադրված տարրերի հետ ինչպես համամիութենական, այնպես էլ հանրապետական մակարդակով, որոնք հանդես են գալիս թվում է թե անցյալի գերկն անցած «միասնականների և անբաժանների» գաղութատիրական լոզունգներով։

Ինքնորոշման լենինյան սկզբունքի աղավաղումները հատկապես ցինիկ բնույթ են ընդունել ԽՍՀՄ սահմաններում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման մասին հարցադրման հետ կապված։ Դրա հետևանքով ինքնորոշման սկզբունքը դարձել է մակերեսային դատողությունների և գիտակցական այն աղավաղումների առարկա, որոնք լիովին անտեսում են և կոպիտ կերպով խեղաթյուրում լենինյան հատակ ցուցումները, հակասում նրա պետական ու միջազգային իրավունքի նորմատիվ բովանդակությանը։ Դա հատկապես դարձրեց դրսևորվեց այդ անբաժան իրավունքը պետությունների տարածքային ամբողջության սկզբունքին հակադրելու փորձերի մեջ։ Ի հաճույս Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշում թույլ չտալու ցանկության հետ կապված օգտատենչ, այսրոպեական գաղափարի, սկսեցին բիրտ ձևերով ամրացնել գլխավորը, հիմնական ինքնորոշման լենինյան կոնցեպցիայում, նրանում մտցնել ազգային հակադրանք, այն բանի, որ նկատի ուներ Վ. Ի. Լենինը՝ ինքնորհրդային սահ-

№ 10792
07 11 2018 թ.
Մեծրոպ Մաշտոցի անվան Գրականության ինստիտուտ
Մեծրոպ Մաշտոցի անվան Հնագիտության ինստիտուտ
Գ. Ս. Ստեփանյան անվան Լեզվաբանության ինստիտուտ
Գ. Ս. Ստեփանյան անվան Գրականության ինստիտուտ
Գ. Ս. Ստեփանյան անվան Արվեստագիտության ինստիտուտ
Գ. Ս. Ստեփանյան անվան Ազգագրության ինստիտուտ
Գ. Ս. Ստեփանյան անվան Ճարտարապետության ինստիտուտ
Գ. Ս. Ստեփանյան անվան Գրադարան
Գ. Ս. Ստեփանյան անվան Գրադարան
Գ. Ս. Ստեփանյան անվան Գրադարան

մանագրության և խորհրդային իրավական պետության գաղափարի ճակատագրի համար առանձնահատուկ տագնապ է հարուցում այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի բուն հայ բնակչության նկատմամբ ինքնորոշման սահմանադրական սկզբունքը չկիրառելը, տարբերական դեմոկրատական նորմաների կոպիտ ու բացահայտ խախտումները հիմնավորվում են հենց սահմանադրության իրավաբանորեն սնանկ վկայակոչումներով։ Ստեղծվել է ԽՍՀՄ պատմության մեջ անօրինակ քաղաքական ու իրավական իրադրություն, երբ միութենական մի հանրապետությունը, հենվելով ինքնորոշման սահմանադրական սկզբունքի վրա (հոդ. 70), պաշտպանել է իր ժողովրդի բռնությամբ անջատած մասի վերամիավորման իրավունքը, իսկ մյուս հանրապետությունը, վկայակոչելով նույն այդ սահմանադրության մյուս հոդվածը (հոդ. 78), սահմանների փոփոխման համաձայնություն չի տվել և դրանով իսկ հրաժարվել է օտար ազգային մարզի բուն բնակչության ինքնորոշման իրավունքի ընդունումից։ Ստեղծված դրությունը զանգվածային լրատվության խորհրդային միջոցները գնահատել են որպես փակուղի, արտաահմանյանը՝ որպես «սահմանադրական ճգնաժամ», երկու մոտեցումների բախումը գնահատելով որպես իբր ազգային հարցը դեմոկրատական ճանապարհով ժողովրդի ինքնորոշման հիման վրա լուծելու սոցիալիզմին հատուկ անընդունակության հաստատում։

Իսկ իրականում իրավաբանության տեսանկյունից ոչ մի փակուղի էլ չկա։ Կա միայն ինքնորոշման սկզբունքի նկատմամբ երկու ուղղակի հակադիր մոտեցում։ Ըստ առաջին մեկնաբանության ինքնորոշման իրավունքը ենթադրում է ժողովրդի իրավունքը՝ լուծելով իր բախտի հարցը, դրանով իսկ լուծել նաև իր բնակեցրած տարածքի կարգավիճակի հարցը, և, հետևաբար, որոշել պետության սահմանները ըստ իր ազատորեն արտահայտված կամքի։ Մյուս մեկնաբանությունը ժխտում է բռնակցված մարզի ժողովրդի սեփական բախտը, դրանով իսկ նաև իր բնակեցրած տարածքի բախտը վճռելու իրավունքը, եթե դրան համաձայն չէ այն հանրապետությունը, որից նա ուզում է անջատվել։ Ակներև է, որ խորհրդային սահմանադրության մեկնաբանության մասին ծագած հարցը դուրս է գալիս Ղարաբաղի պրոբլեմի շրջանակներից, մարտահրավեր նետելով պետական ու միջազգային իրավունքի արմատական սկզբունքներին։ Կասկածի տակ են դրվում ընդհանրապես ժողովուրդների միջև ու պետությունների միջև և մասնավորապես խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միջև հարաբերությունների լենինյան հիմնարար սկզբունքները։

Ակնհայտ է, որ անկախ այն բանից, թե ինչպիսի քաղաքական փոխզիջողական որոշում կգտնվի ստեղծված բարդ իրադրության մեջ, բուն ինքնորոշման սկզբունքին ճիշտ վերաբերմունքը պետք է անհողդողդ մնա ինչպես ներպետական հարաբերությունների առումով, նկատի ունենալով, որ այդ սկզբունքի վրա է հիմնված ԽՍՀ Միությունը, այնպես էլ արտաքին առումով, նկատի ունենալով դրա համաձայնեցումը ԽՍՀՄ միջազգային պարտավորությունների հետ։ Ուստի անհնար է հաշտվել օպորտունիստական այն մոտեցման հետ, երբ հանուն այսրոպեական եսամոլական նեղ շահերի ինքնորոշման սկզբունքը զոհ է բերվում և կասկածի տակ է առնվում նրա նշանակությունը որպես տարածքների տիրապետման ու տնօրինման իրավական բարձրագույն հիմք։

ԽՍՀՄ սահմանադրության այդպիսի կամայական մեկնաբանությունը բոլորովին հեռանում է ժողովուրդների ինքնորոշման լենինյան կոնցեպցիայից, անհամատեղելի է ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագրի հետ, հակասում է միջազգային իրավունքի այդ համապարփակ համադեմոկրատական նորմայի հանրաճանաչ և միակ հնարավոր ըմբռնմանը և անտեսում է ԽՍՀՄ ամենահանդիսավոր միջազգային պարտավորությունները։

Մենք չենք կարող հաշվի չառնել, որ ղարաբաղյան և ազգամիջյան հարաբերությունների մյուս հարցերի դեմոկրատական և իրավաբանորեն հիմնավոր լուծում գտնելու մեր պատրաստակամությամբ խորհրդային հասարակայնությունը դատում է ստալինյան կամայականության և ազգային հարցի զանազան ձևախեղումների հետևանքները վերացնելու, սոցիալիզմի մարդասիրական էությունն իրականացնելու մեր ցանկության և մեր ընդունակության մասին։ Հաշվի առնելով

համաշխարհային գործերում ԽՍՀՄ-ի գրաված տեղը՝ մենք չպետք է մոռանանք նաև այն, որ ԽՍՀՄ-ում ազգամիջյան հարաբերությունների վերակառուցումն ունի նաև համամարդկային, համընդհանուր չափումներ. ազգամիջյան հարաբերությունների վերակառուցմանը և Ղարաբաղի մյուս հարցերի լուծմանը մեր պատրաստակամությամբ այսօր մնացած ամբողջ աշխարհը դատում է դեմոկրատիայի և մարդու իրավունքների ու ժողովուրդների իրավունքների ճանապարհով ընթանալու մեր մտադրության անկեղծության մասին։

Ազգամիջյան հարաբերությունների ոլորտում, ինչպես նաև տնտեսական ոլորտում վերակառուցումը պահանջում է մեծ արիություն, հեղափոխական հետևողականություն և վճռականություն։ Նրան կիսատությունը հակացուցական է, դա համարժեք կլիներ կործանման։ Եթե մենք սահմանափակվենք այն փաստի ընդունմամբ, որ գոյություն ունեցող անարդարությունները և ժողովուրդների իրավունքների խախտումները ստալինականության կամայականության և լճացման ժամանակների անտարբերության հետևանք են և իրավունքի ու արդարության վերականգնման համար եռանդուն միջոցներ չձեռնարկենք, եթե մենք թույլ տանք մեզ վախեցնելու «սումգայիթների» սպառնալիքով և ինքներս վախեցնենք ինքնորոշման պահանջները «անկանխատեսելի հետևանքներով», ապա մենք կկորցնենք բարոյական ամեն մի իրավունք հանդես գալու վերակառուցման ջատագովների դերում։

Ստալինականության ու լճացման ժամանակի ձևախեղումների վերացումը ազգամիջյան հարաբերությունները լենինյան սկզբնական սկզբունքներին ու նորմաներին լրիվ համապատասխանեցնելը հասարակության հեղափոխական վերակառուցման գործում խորհրդային բազմազգ տերության առջև ծառացած կայուն ազգային խաղաղության և ժողովուրդների ստեղծարար փոխգործողության ապահովման խնդիրների լուծման միակ ուղին է։ Ազգային հարցի լուծման լենինյան տեսությունը և լենինյան պրակտիկան հուսալի ուղենիշ են ծառայում վերակառուցման պրոցեսում և ազգամիջյան հարաբերությունների կատարելագործման մեջ։ Միայն այդ հիման վրա կարելի է լուծել մեր առջև ծառացած հարցերը հօգուտ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների և առանձին վերցրած նրանցից յուրաքանչյուրի ընդհանուր շահերի։

Ազգատարածքային սահմանազատման լենինյան կոնցեպցիայի հիմքում ընկած է ազատ ինքնորոշման դեմոկրատական գաղափարը, որը համակողմանիորեն հիմնավորել ու մշակել էր Վ. Ի. Լենինը դեռևս նախքան հեղափոխությունը և առաջ էր քաշել որպես մեր երկրում և միջազգային հարաբերությունների ասպարեզում ազգային-պետական շինարարության հիմք։

1. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՄՔՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՐՑՆ Է։

Ինքնորոշման սկզբունքը, որը Վ. Ի. Լենինի համոզմամբ, պետք է ընկած լինի ազգամիջյան հարաբերությունների հարցերի լուծման հիմքում, ինչպես հայտնի է, ունի երկու տեսակետ՝ միջպետական և ներպետական։ Նրա ներքին տեսակետը զարգացման իր ուղու, իր քաղաքական ու սոցիալ-տնտեսական համակարգի ազատ ընտրության իրավունքն է։ Իսկ ինքնորոշման արտաքին տեսակետը, որ սերտորեն կապված է զարգացման ուղու ընտրության իրավունքի հետ, յուրաքանչյուր ժողովրդի իրավունքն է իր միջազգային կարգավիճակը որոշելու կամ այլ կերպ, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, «ում հետ ապրելու» հարցի լուծման իրավունքն է։ «Եթե մենք ուզում ենք հասկանալ ազգերի ինքնորոշման նշանակությունը, իրավաբանական դեֆինիցիաների խաղ չխաղալով, վերացական սահմանումներ «չհորինելով», այլ վերլուծելով ազգային շարժումների պատմատնտեսական պայմանները, ապա մենք անխուսափելիորեն կհանգենք մի եզրակացության. ազգերի ինքնորոշում ասելով հասկացվում է նրանց պետական անջատումն օտարազգի կոլեկտիվներից, հասկացվում է ինքնուրույն ազգային պետության գոյացումը»[1]։

[1] Վ. Ի. Լենին, երկ, հ. 25, էջ 311։

Շովինիստորեն տրամադրված բոլոր երանգների և մաշտաբների դերժիմորդաներին, որոնք ձգտում են օտար տարածքներ զավթել և պահել, բնականաբար, ձեռք չի տալիս ինքնորոշման իրավունքի հատկապես այդ իմաստը, ուստի և նրանք միշտ փորձել են ու փորձում են ժողովուրդների միջև փոխհարաբերությունների դեմոկրատական այդ նորման ներկայացնել որպես անցանկալի և «օրինական» ստատուս-քվոն խախտող «անջատվողականություն»։ Պատասխանելով նրանց, ովքեր փորձում էին ժխտել ինքնորոշման իրավունքը, դրա իրականացումը համեմատելով անջատվողականության հետ, Վ. Ի. Լենինը հարցնում էր. «Կսկսե՞ն արդյոք մեր լուսավորյալ «սահմանադրական-դեմոկրատները» բացասել, թե միջազգային դեմոկրատիայի ողջ պատմության մեջ, մանավանդ XIX դարի կեսերից սկսած, ազգերի ինքնորոշում ասելով հասկացվում է հենց քաղաքական ինքնորոշումը, այսինքն՝ անջատման, ազգային ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը»[1]։

Նկատի ունենալով իր բախտը տնօրինելու ժողովրդի անկապտելի իրավունքը, Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ բուն ինքնորոշումը տարածքի տիրապետման ու տնօրինման և, հետևաբար, պետական սահմանների փոփոխման բարձրագույն հիմքն է. «Մենք ասում ենք, որ սահմանները որոշվում են բնակչության կամքով»[2]։ Դա նշանակում է, որ իր տարածքի կարգավիճակի վերաբերյալ բնակչության անկախ և ազատ արտահայտված կամքը սրբազան է ու բացառիկ։ Հենց դա պիտի դառնա պետական սահմանների հաստատման կամ փոփոխման հիմքը։ Օգտագործելով ինքնորոշման իր իրավունքը, լուծելով այս կամ այն պետության կազմից դուրս գալու կամ մտնելու հարցը, ժողովուրդը «դրանով իսկ որոշում է նաև այս կամ այն պետությանը իր տերիտորիայի պատկանելության հարցը»[3]։

Պահանջելով ընդունել միացվող տարածքի բնակչության

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 302։

2 Նույն տեղը, հ. 31, էջ 534։

3 Клименко Б. М., Порк А. А. Территория и граница СССР. М., Международные отношения. 1985, с. 57.

կամքի արտահայտման խախտմամբ բռնակցման և բնակչության կամքի արտահայտման հիման վրա օրինաչափ տեղաշարժումների միջև եղած սկզբունքային տարբերությունը, Վ. Ի. Լենինը հանդես էր գալիս ինքնորոշման իրավունքի հիման վրա իրականացվող սահմանների փոփոխումն այն պատրվակով կանխելու փորձերի դեմ, թե դա խախտում է գոյություն ունեցող ստատուս-քվոն։ «Անեքսիա չի կարելի համարել status guo-ի ամեն մի խախտում. դա կլիներ մեծագույն ռեակցիոնություն և ծաղրանք պատմական գիտության հիմնական հասկացությունների նկատմամբ... Պարզ է, որ անեքսիա կարելի է և պետք է համարել միայն տերիտորիայի այն միացումը, որ կատարվում է նրա բնակչության կամքին հակառակ։ Այլ խոսքով՝ անեքսիայի հասկացությունն անխզելիորեն կապված է ազգերի ինքնորոշման հասկացության հետ»[1]։

Նշավակելով բոլոր երանգների շովինիստներին, ներառյալ նաև նրանց սոցիալ-շովինիզմը, ովքեր «շրջանցում են հենց այն պետության սահմանների հարցը»[2], որ բռնի կերպով իր կազմի մեջ է պահում օտարազգի մարզերը, Վ. Ի. Լենինը ինքնորոշման և բռնակցման իր սահմանման մեջ տեղ չէր թողնում օտար տարածքներ զավթողներին խուսանավելու համար. «Ինչքան էլ պատեպատ ընկնեք, դուք չեք կարող խուսափել այն եզրակացությունից, որ անեքսիան ազգի ինքնորոշման խախտումն է, պետության սահմանների հաստատումն է հակառակ բնակչության կամքի։ Լինել անեքսիատումն է հակառակ բնակչության կամքի։ Լինել անեքսիաների դեմ՝ նշանակում է լինել ինքնորոշման իրավունքի կողմնակից։ Լինել «դեմ որևէ ազգ բռնությամբ տվյալ պետության սահմաններում պահելուն...»— դա նույնն է, ինչ որ ազգերի ինքնորոշման կողմնակից լինելը[3]։

Բոլոր դեպքերում գոյություն ունեցող սահմանների հեղափոխական վերանայման լենինյան պահանջը, երբ դրանք հիմնված են բռնության վրա և հակասում են ժողովրդի կամքին, հասցեագրված է առաջին հերթին սոցիալիստական պե-

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 27, էջ 563։

2 Նույն տեղը, էջ 318։

3 Նույն տեղը, հ. 30, էջ 31—32։

տությանը, հասցեագրված է սոցիալիզմին որպես մի կարգի, որը կոչված է միջազգային հարաբերություններում ապահովել իսկական դեմոկրատիզմ։ Այդ պատճառով էլ Վ. Ի. Լենինը խիստ անհաշտ ու սուր պայքար էր մղում նրանց հետ, ովքեր քննադատում էին իմպերիալիստական զավթումները, իսկ միևնույն ժամանակ փորձում էին այդ համադեմոկրատական սկզբունքի գործողությունից հանել սոցիալիստական պետությունը՝ սպեկուլյացիայի ենթարկելով նրանց շահերը։ «Եթե սոցիալիստական կուսակցությունը հայտարարում է, որ նա «դեմ է ճնշված ազգը բռնի կերպով անեքսիա կատարող պետության սահմաններում պահելուն», ապա այդ կուսակցությունը դրանով իսկ պարտավորվում է հրաժարվել բռնի կերպով պահելուց, երբ նա իշխանության գլուխ կանգնի»[1]։

Այդ հարցը իր սրությունը չի կորցրել նաև մեր օրերում, քանի որ ոչ միայն Վ. Ի. Լենինի ժամանակ, երբ ինքնորոշման սկզբունքը դեռևս նոր էր հաստատվում, ոմանք գտնում էին, որ այն կիրառելի չէ սոցիալիստական հասարակության նկատմամբ, բայց նույնիսկ այժմ, երբ այդ սկզբունքը դարձել է պետության վարքագծի հրամայական նորմա, ոմանք փորձում են մարդկային քաղաքականության այդ մեծ նվաճումը ներկայացնել ժամանակավրիպություն։ Դատարկ «լոզունգ», ռեիզիայի ենթարկել, սահմանափակել իրավունքի համապարփակ հրամայական այդ նորմայի գործողության ոլորտը։

Մշակելով ու պաշտպանելով ինքնորոշման սկզբունքը, Վ. Ի. Լենինը նկատի ուներ ինչպես նրա համաշխարհային, համապարփակ նշանակությունը որպես միջազգային հարաբերությունների հիմնադիր նորմայի, այնպես էլ գոյություն ունեցող ազգամիջյան հարաբերությունների ու ազգատարածքային սահմանազատումների հեղափոխական վերակառուցման անհրաժեշտությունը սոցիալիստական հասարակությունում և, ավելի կոնկրետ, մեր երկրի պայմաններում։ Ուստի Վ. Ի. Լենինը, չսահմանափակվելով ինքնորոշման հարցի սկզբունքային ընդհանուր դրվածքով, ձգտում էր խորհրդային բազմազգ պետության կառուցման մեջ այդ համադեմոկրատական սկզբունքի մարմնավորմանը, պահանջում էր իրավունքի այդ նորմայի անշեղ պահպանություն սոցիալիստական պետությունների կողմից։

Ինքնորոշման բացահայտ և թաքնված հակառակորդներին են ուղղված Վ. Ի. Լենինի հետևյալ խոսքերը. «Երբ ասում են, թե ինքնորոշումը սոցիալիզմի ժամանակ ավելորդ է, դա հենց այնպիսի անհեթեթություն է, այնպիսի անճարակ խճճվածություն, ինչպես եթե որևէ մեկն ասեր՝ դեմոկրատիան սոցիալիզմի ժամանակ ավելորդ է»[1]։

Հեղափոխության հաղթանակից ու աշխարհում առաջին բազմազգ սոցիալիստական պետության ստեղծումից առաջ և հետո Վ. Ի. Լենինը միշտ պնդում էր, որ «կուսակցությունն անպայման պետք է պաշտպանի այդ իրավունքը»[2], նշում էր, որ այդ են պահանջում ընդհանրապես միջազգային դեմոկրատիայի սկզբունքները և բուն պրոլետարիատի ազատության շահերը. «Կա մի դեպք, երբ մարքսիստները, եթե չեն ուզում դավաճանած լինել դեմոկրատիային ու պրոլետարիատին, պարտավոր են պաշտպանել մի հատուկ պահանջ ազգային հարցում, այն է՝ ազգերի ինքնորոշման իրավունքը (ՌՍԴԲԿ ծրագրի § 9), այսինքն՝ քաղաքական անջատման իրավունքը»[3]։

Հաստատ ու համոզված պաշտպանելով այդ սկզբունքային դիրքորոշումը, Վ. Ի. Լենինը միանշանակ ու սպառիչ քաղաքական գնահատական տվեց այն սոցիալ-շովինիստներին, որոնք փորձում էին խուսափել սոցիալիստական պետությունների կողմից ինքնորոշման սկզբունքը պահպանելուց. «Մենք պնդում ենք, որ սոցիալիզմի օրոք ազգերի ինքնորոշումն իրագործելուց հրաժարվելը դավաճանություն կլիներ սոցիալիզմին։ Մեզ պատասխանում են. «ինքնորոշման իրավունքը կիրառելի չէ սոցիալիստական հասարակության նկատմամբ»։ Տարակարծությունը արմատական է»[4]։

Կանխատեսելով, որ իմպերիալիստական դարաշրջանը

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 33։

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 159։
[2] Նույն տեղը, հ. 24, էջ 68 (ընդգծումը մերն է— Յու. Գ.), էջ 73։
[3] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 275։
[4] Նույն տեղը, հ. 30, էջ 22—23։

ժառանգություն է թողնելու իրեն փոխարինելու եկող սոցիալիզմին կամայականության ու անարդարության վրա հիմնադրված սահմաններ, մի շարք անեքսիաներ Եվրոպայում և աշխարհի մյուս մասերում[1], Վ. Ի. Լենինը պնդում էր դրանք ինքնորոշման սկզբունքի հետ լիակատար համապատասխանության հասցնելու անհրաժեշտության վրա։ Տեսնելով դրանում ժողովուրդների կամավոր ու ամուր միավորման միակ հնարավորությունը, Վ. Ի. Լենինը չէր վախենում սահմանների «վերաձևումից», բայց, ընդհակառակը, պահանջում էր դրանց փոփոխություն այն բոլոր դեպքերում, երբ դրանք հակասում էին ինքնորոշման իրավունքին. «Մենք չենք պաշտպանում պետությունների տվյալ սահմանները»[2]։

Վ. Ի. Լենինը համոզված էր, որ սոցիալիստական հանրապետությունների հարաբերություններում սահմանազատման համադեմոկրատական սկզբունքները պետք է կիրառվեն առավել լրիվ ու հետևողականորեն. «Այդ սահմանները որոշվելու են դեմոկրատորեն, այսինքն՝ համաձայն բնակչության կամքի ու «հակումների»։ Կապիտալիզմը բռնադատում է այդ հակումները և դրանով իսկ ազգերի մերձեցման գործում նոր դժվարություններ է ավելացնում։ Սոցիալիզմը... լիակատար ազատություն է տալիս բնակչության «հակումներին» և հենց դրանով էլ հեշտացնում և վիթխարի չափով արագացնում է ազգերի մերձեցումն ու միաձուլումը»[3]։

Եթե այսօր մենք ասում ենք, որ «այն պրոբլեմները, որոնք ծագում են ազգամիջյան հարաբերություններում, պետք է որոշվեն հիրավի դեմոկրատական հիմքի վրա, վերակառուցման հունով», մենք չպետք է մոռանանք, որ դեմոկրատիզմի իմաստն ու բովանդակությունը ազգային հարցի լուծման գործում Վ. Ի. Լենինը սահմանել է մաթեմատիկական բանաձևերի հստակությամբ. «Դեմոկրատիա ազգային հարցում (այսինքն՝ ազգերի ինքնորոշումը)»[4]։ Եվ մյուս սահմանումում. «Բռնության դեմ հանուն ազգերի դեմոկրատական

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, հ. 30, էջ 25։
[2] Նույն տեղը, հ. 27, էջ 528։
[3] Նույն տեղը, հ. 30, էջ 26։
[4] Նույն տեղը, էջ 116։

միավորման։ «Անջատման ազատությունը» դեմոկրատիզմի բարձրագույն արտահայտությունն է»[1]։

Վ. Ի. Լենինը մշակեց ոչ միայն պետությունների (ներառյալ նաև սոցիալիստական) ազգաստարածքային սահմանազատման կոնցեպտուալ հիմքը, այլև ժողովրդի կամքի այդպիսի արտահայտության, մեթոդներն ու ձևերը։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ գլխավորը հիրավի կամքի արտահայտության առկայությունն է, իսկ կամքի արտահայտության ձևը, դա երկրորդական հարց է. «միևնույնն է, արտահայտված է այդ ցանկությունը մամուլում արդյոք, թե ժողովրդական ժողովներում, կուսակցությունների որոշումներում կամ ազգային ճնշման դեմ հուզումների և ապստամբությունների ձևով»[2]։

Հաշտության մասին լենինյան դեկրետում և նրա մասնակցությամբ ու նրա ղեկավարությամբ ստորագրված խորհրդային պետության արտաքին քաղաքական ու ներքին քաղաքական ակտերում որպես իր ինքնորոշման իրավունքի իրականացման միջոց ընդունվել են ժողովրդի կամքի արտահայտության հետևյալ ձևերը. ելույթներ մամուլում, հուզումներ, բողոքներ, ապստամբություններ, ժողովրդական ժողովներ, ներկայացուցչական մարմնի որոշումներ, հասարակական կազմակերպությունների բանաձևեր և, վերջապես, անմիջական դեմոկրատիայի բարձր կազմակերպված ձևը՝ պլեբիսցիտներ (հանրաքվեներ)։

Վ. Ի. Լենինը մշակեց ու հիմնավորեց սկզբունքորեն կարևոր հարցի լուծումն այն մասին, թե ում կամքի արտահայտությամբ պետք է լուծվի օտարազգի մարզի բախտը՝ նրա բնակչության, թե այն պետության, որը գերիշխանություն է իրականացնում նրա նկատմամբ։ Նկատի ունենալով բռնությամբ պահվող օտարազգի մարզերի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի նենգափոխման փորձերը նեղող կամ ճնշող պետությունների պառլամենտների որոշումներով կամ ամբողջ պետության մասշտաբով «հանրաքվե» կազմակերպելու միջոցով։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ «ինքնորոշման

[1] Վ. Ի. Լենին, հ. 27, էջ 538։
[3] Նույն տեղը, հ. 35, էջ 14։

իրավունքը... նշանակում է հարցի լուծում հենց ոչ թե կենտրոնական պառլամենտի կողմից, այլ անջատվող փոքրամասնության պառլամենտի, սեյմի, ռեֆերենդումի միջոցով»[1]։

Վ. Ի. Լենինը հստակ ու միանշանակ գնատահական է տվել պահող պետության պառլամենտի որոշմամբ անջատվող մարզի ժողովրդի կամքի արտահայտության նենգափոխման փորձերին. «Բոլոր ռեակցիոներներն ու բուրժուաները տվյալ պետության սահմաններում բռնությամբ պահվող ազգերին իրավունք են վերապահում ընդհանուր պառլամենտում «համատեղ որոշելու» պետության բախտը։ Վիլհելմ II-ը նույնպես բելգիացիներին իրավունք է վերապահում գերմանական ընդհանուր պառլամենտում «համատեղ որոշելու» գերմանական կայսրության բախտը»[2]։

Մերկացնելով «ինքնորոշման փոխարեն համատեղ որոշման մասին փաստարկի» զավթողական բռնակցողական էությունը, Վ. Ի. Լենինն ընդգծում էր. «Բայց հաճախակի կրկնությունը օկտյաբրիստական և ռեակցիոն այս փաստարկը սոցիալ-դեմոկրատական փաստարկ չի դարձնում։ Որովհետև բոլոր ռեակցիոներներն ու բուրժուաները տվյալ պետության սահմաններում բռնությամբ պահվող ազգերին իրավունք են վերապահում ընդհանուր պառլամենտում «համատեղ որոշելու պետության բախտը»[3]։

Վ. Ի. Լենինը ոչ միայն մշակեց ինքնորոշման իրավունքի բովանդակությունը, ոչ միայն սահմանեց ժողովուրդների կամքի ազատ արտահայտության ձևերն ու պայմանները, այլև շատ դեպքերում կոնկրետ մատնանշեց, թե ինչպիսի իրադրություններում, ինչպիսի կոնկրետ դեպքերում և ինչ ձևերով է անհրաժեշտ կիրառել ինքնորոշման սկզբունքը։ Վ. Ի. Լենինի կենդանության օրոք խորհրդային պետության պրակտիկայում խորհրդային հանրապետությունների ազգատարածքային սահմանազատման հարցերը բազմիցս լուծվել են բնակչության կամքի արտահայտությամբ։ Այսպես, Բաշկիրական ԻԽՍՀ կառավարության հետ ՌԽՖՍՀ կառավարության

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 276—277։
[2] Նույն տեղը, հ. 30, էջ 23—24։
[3] Նույն տեղը, էջ 23։

1919 թ. մարտի 23-ի համաձայնությանը համապատասխան անցկացվեց բնակչության հարցում Զլատոուստի գավառի 6 վոլոստներում և Ուֆայի գավառի 4 վոլոստներում։ Մյուս դեպքում Համկենտգործկոմի և Ժողկոմխորհի 1920 թ. մայիսի 27-ի դեկրետը սահմանեց, որ այսուհետև մինչև Բելեբեևսկի և Բիրսկի գավառների տարածքում ապրող աշխատավորների կամքի արտահայտությունը, Թաթարական ԻԽՍՀ կազմի մեջ նրանց մտնելու հարցը ժամանակավորապես պետք է բաց մնա։ Համկենտգործկոմի և Ժողկոմխորհի 1920 թ. օգոստոսի 26-ի Կիրգիզական ԻԽՍՀ կազմավորման մասին դեկրետի համաձայն, կիրգիզներով բնակված, բայց Թուրքեստանյան հանրապետության կազմում մտած տարածքը նրա մեջ մտցնելուն պետք է նախորդեր աշխատավորական զանգվածների կամքի արտահայտությունը[1]։

Ազատ ինքնորոշման հիման վրա խորհրդային հանրապետությունների ազգատարածքային սահմանազատման հարցի լուծման Վ. Ի. Լենինի մեզ ժառանգություն թողած անգնահատելի նախադեպ ունեցող պրակտիկան չպետք է և չի կարող անտեսել մեր բազմազգ սոցիալիստական տերության ոչ մի պետական գործիչ, հատկապես սոցիալիստական հասարակության կյանքի լենինյան սկզբունքների վերականգնման դարաշրջանում։

Ցավոք, Վ. Ի. Լենինը չհասցրեց մինչև վերջ տանել ազգային հարցի գործնական լուծումը սոցիալիստական դեմոկրատիայի սկզբունքային հիմքի վրա։ Ազգամիջյան հարաբերությունների ղեկավարությունն Ստալինի ձեռքն անցնելով սկսվեց այդ հարցերի լուծման հետևողականորեն դեմոկրատական լենինյան պրակտիկայից բացահայտ հեռացում։ Պրակտիկան շեշտակիորեն հեռացավ հռչակվող սկզբունքներից, սահմանադրության դրույթներից։ Դրա հետ մեկտեղ միջպետական հարաբերությունների ոլորտում սկսեց մեծանալ շեղումը ինքնորոշման սկզբունքի պաշտպանության արտաքին քաղաքական կուրսից։

Ազգային հարցում լենինյան ժառանգությունը սկսեց

[1] СУ РСФСР, 1919, № 46, ст. 451; 1920 г. № 51, ст. 222; 1920, № 76, ст. 359.

ձևախեղվել։ Ազգամիջյան հարաբերությունների հարցերի լուծման մի շարք կոնկրետ դեպքերում ինքնորոշման լենինյան սկզբունքը կոպիտ կերպով աղավաղվել էր, ոտնահարվել Ստալինի վոլյունտարիզմով, դեսպոտիզմով և մաքիավելիությամբ։ «Ժողովուրդների հայրը», ղեկավարվելով անձնական համակրություններով ու հակակրություններով, ձևում ու վերաձևում էր սահմանները՝ հաշվի չնստելով ժողովուրդների կամքի հետ։ Ազգամիջյան հարաբերությունների լենինյան սկզբունքներից այդ հեռացումը, որ սկսվել էր Ստալինի կողմից Խորհրդային Հայաստանի սահմանների կամայական որոշումից, իր տրամաբանական ավարտը գտավ ԽՍՀՄ ամբողջական ժողովուրդների՝ Ղրիմի թաթարների, Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, Պովոլժիեի գերմանացիների և այլոց աքսորման պրակտիկայում։ Սկսելով հայերի ցեղասպանությանը հավանություն տալուց՝ Ստալինն ինքն սկսեց կիրառել թուրքական մեթոդներ մեր երկրում, քողարկվելով ինքնորոշման սկզբունքի ձևական ընդունմամբ։ Ղարաբաղի հարցի երևան գալու պատմությունն այդ առումով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ նրանում առավել հստակորեն է դրսևորվում երկու մոտեցումների պայքարն ազգային հարցում՝ լենինյան ու ստալինյան։ Ղարաբաղի հարցի լուծումը, որ սկսվել էր Վ. Ի. Լենինի օրոք ինքնորոշման իրավունքի հիման վրա, «ավարտվեց» Ստալինի կողմից վոլյունտարիզմի, դեսպոտիզմի և մաքիավելիության բոլոր հետևանքներով։

Մեր երկրում ազգամիջյան հարաբերությունների հետստալինյան ժամանակաշրջանի պրակտիկային հատուկ են նրա համար բնորոշ կիսատպռատությունն ու անհետևողականությունը։ Ստալինի խոտելի գործունեության որոշ հետևանքներ այս կամ այն չափով շտկված էին։ Վերականգնվել ու հաճախակի էին դարձել Խորհրդային հանրապետությունների միջև սահմանների կարգավորման դեպքերը, թեև այժմ դրանք իրականացվում էին, որպես կանոն, առանց հանրաքվեի։ Ընդ որում, սակայն, միշտ վկայակոչվում էր, իսկ մի շարք դեպքերում ուղղակի վերապահություն էր արվում ինքնորոշման իրավունքին այդ փոփոխությունների համապատասխանության հարցում։ Խորհրդային հանրապետու-

թյունների միջև սահմանների տեղի ունեցած կարգավորումները արտացոլում էին նրանց պատրաստակամությունը զիջումների՝ հօգուտ հարևան հանրապետությունների սոցիալիստական ինտերնացիոնալիզմի բարձր մակարդակի հիման վրա։ Նման մոտեցման առավել վառ օրինակ տվեց ՌԽՍՖՀ-ն, որը 1954 թվականին Ուկրաինային հանձնեց այնպիսի մի մեծ ու արժեքավոր մարզ, ինչպիսին Ղրիմն է։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1964 թ. նոյեմբերի 17-ի որոշմամբ վավերացվեց «բնակչության խնդրանքով» ՌԽՍՖՀ Սմոլենսկի մարզի մի քանի բնակավայրերի տարածքի հանձնումը Բելոռուսական ԽՍՀ Մոգիլևի մարզին, ԽՍՀՄ սահմանադրության 14 հոդվածի «ե» կետի հիման վրա*։ Մեծ փոփոխություններ տեղի ունեցան Ուզբեկստանի և Ղազախստանի միջև տարածքային սահմանազատման հարցում։ Ղազախական ԽՍՀ կազմից 1969 թ. Ուզբեկստանին հանձնվեցին Կիրովի ու Պախտա-Արալի շրջանները, Չիմքենտի մարզի որոշ գյուղեր 959 հազար հեկտար ընդհանուր հողատարածությամբ, Չիմքենտի մարզի արոտավայրերը և Կիզիլ-Հորդայի մարզի 1 միլիոն 100 հազար հեկտար հողերը։ Կիրգիզիան Տաջիկստանին հանձնեց մի մեծ հողատարածություն, որը Տաջիկական ածխային հնոցարանի շարունակությունն է։ Բելոռուսիան իր տարածքից Լիտվային հանձնեց 2 հազար քառակուսի կիլոմետր։ Մի հանրապետության տարածքի մի մասի այդ բոլոր հանձնումները մյուսին տեղի է ունեցել առանց հիստերիայի, առանց կոտորածների, առանց սպառնալիքների, այլ բարեկամության ու փոխըմբռնման ոգով։

Այնուամենայնիվ, խոսելով այդ ժամանակի պրակտիկայի և հատկապես՝ լճացման ժամանակաշրջանի մասին, ստիպված ենք խոստովանել, որ ոչ միշտ և ոչ բոլոր ծագած հարցերն էին լուծվում լենինյան ոգով։ Դրա հետևանքով նրանք ձեռք էին բերում շարունակական բնույթ, հիվանդությունը խորացվում էր, էլ ավելի բարդացնելով լուծումը։ Ազդել են սուբյեկտիվիզմն ու վոլյունտարիզմը, որոնք չէին վերացել և ձեռք էին բերել ստորաքարշության, խնամիության և

* Ведомости Верховного Совета СССР, 1964 г., № 43, с. 542.

կաշառակերության նոր արատավոր ձևեր։ Դրան կոնկրետ օրինակ կարող է ծառայել Ղարաբաղի հարցի լուծման վրա ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրո թափանցած Ալիևի վնասակար ներգործությունը։

Ազգամիջյան հարաբերությունների հասունացած հարցերի լուծումը որոշ ժամանակից սկսել է արգելակվել արտաքին քաղաքական բնույթի ինքնապահովական նկատառումներով։ Ելնելով «նախագեպեր» չստեղծելու ցանկությունից, ձեռնպահ էին մնում ԽՍՀՄ-ի ներսում ազգային-վարչական սահմանազատումներում հասունացած փոփոխությունները մտցնելուց։ Գոյություն ունեցող սահմանների հավերժացման այդ միտումին մենք պարտական ենք նաև նրանով, որ ԽՍՀՄ բրեժնևյան սահմանադրությունը կազմելիս պատշաճ հստակությամբ չի շարադրված ինքնորոշման սկզբունքը, որով այսօր օգտվում են լենինյան այդ սկզբունքի հակառակորդներն ոտարազգի մարզերի վրա նրանց բնակչության կամքին հակառակ բռնակցական ոտնձգություններն արդարացնելու համար։

Չնայած սոցիալիստական հասարակության ազգամիջյան հարաբերությունների լենինյան կոնցեպցիայից շեղումների մասշտաբներին, չնայած ժողովուրդների բախտի համար դրանց ողբերգական հետևանքներին, ժողովուրդներ, որոնք դարձան ստալինականության ժամանակաշրջանի անհոգի վարչարարության և լճացման շրջանի անտարբերության անմիջական զոհերը, կարելի է պնդել, որ ամբողջովին վերցրած, պատմական հեռանկարում ինքնորոշման լենինյան սկզբունքը դաժան քննություն բռնեց։ Ոչ Ստալինի բռնապետությունը, ոչ լճացման ժամանակաշրջանի անտարբերությունը չկարողացան սասանել խորհրդային ժողովրդի հավատարմությունը ազգամիջյան հարաբերությունների լենինյան կոնցեպցիային։ Ազգամիջյան հարաբերությունների լենինյան սկզբունքներին հավատարմությունն ամրապնդվեց վերակառուցման պատմական պրոցեսի սկզբով, որի էությունը՝ դեմոկրատացումը, ժողովրդական իշխանությունը, նոր մտածողությունը, իրավունքի դերի ամրապնդումը ԽՍՀՄ-ը իրավական պետության վերածելու և քաղաքականության մեջ իրավունքի առաջնության նրա առաջ քաշած սկզբունքի հաստատման միջոցով ամբողջ հասակով դնում են ինքնորոշման սկզբունքին մեր վերաբերմունքի հարցը ինչպես ազգամիջյան հարաբերությունների ընդգավառում խորհրդային բազմազգ տերության ներսում, այնպես էլ միջազգային հարաբերությունների ոլորտում։

2. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆՈՐՄԱ

Սահմանելով ինքնորոշման իրավունքին վերաբերող նորմատիվ նյութերը, չի կարելի զանց առնել միջազգային իրավունքի կարգադրագրերը, որոնք պարտադիր են բոլոր պետությունների, այդ թվում նաև՝ ԽՍՀՄ-ի համար, հետևաբար, նաև նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր միութենական հանրապետության համար։ Դա առավել ևս անթույլատրելի է, որ միջազգային իրավական համապատասխան նորմաները ձևավորվել են ԽՍՀՄ-ի ակտիվ ներգործությամբ և ամենաակտիվ ու անմիջական մասնակցությամբ։ Ժողովուրդների ազատ ինքնորոշման ընդհուպ մինչև անջատման իրավունքի լենինյան կոնցեպցիան որպես տարածքի տիրապետման ու տնօրինման բարձրագույն իրավական հիմք ընկած էր միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման հիմքում։ Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը որպես միջազգային իրավունքի հրամայական նորմա ամրապնդված է ՄԱԿ-ի կանոնադրությունում, բազմաթիվ այլ համապարփակ ու ռեգիոնային բազմակողմ պայմանագրերում ու կոնվենցիաներում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած մի շարք դեկլարացիաներում, որոնք կոնկրետացված ձևով վերարտադրում են միջազգային իրավունքի գործող սկզբունքներն ու նորմաները։

Համաշխարհային պատմական նշանակություն ունեցող փաստաթղթում՝ գաղութային երկրների ու ժողովուրդների անկախության դեկլարացիայում, որ ընդունվել է 1960 թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ ու ակտիվ մասնակցությամբ,

ժողովուրդների ինքնորոշման կոնցեպցիան հետագա զարգացում ստացավ։ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան գաղութատիրությունն ու օտարերկրյա տիրապետության ու շահագործման մյուս բոլոր ձևերը որակեց որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և մարդու հիմնական իրավունքների խախտում։

Պետությունների բարեկամական հարաբերություններին ու համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին դեկլարացիան, որ ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1970 թ. հոկտեմբերի 24-ին ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ, հաստատում է, որ ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրապնդված ինքնորոշման իրավունքի հիման վրա բոլոր ժողովուրդներն անկապտելի և անկասելի իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը առանց դրսի միջամտության։

Ի թիվս (Մ. Ս. Գորբաչովի խոսքերով ասած) «միջազգային օրինականության հիմնական գումարելիների» այդ սկզբունքը հաստատված է նաև քաղաքական ու միջազգային-իրավական այնպիսի մի հեղինակավոր փաստաթղթում, ինչպիսին Եվրոպայի անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության եզրափակիչ ակտն է։ Այդ սկզբունքների դեկլարացիայում, որով ղեկավարվելու են խորհրդակցության մասնակից պետությունները, հանդիսավոր կերպով հաստատվում է, որ, ելնելով իրենց բախտը տնօրինելու ժողովուրդների իրավահավասարության ու իրավունքի սկզբունքից, «բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, թե երբ և ինչպես նրանք կցանկանան, որոշելու իրենց ներքին ու արտաքին քաղաքական կարգավիճակը առանց դրսից միջամտության և իրենց հայեցողությամբ իրականացնելու իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու կուլտուրական զարգացումը»։ Հաստատելով «իրենց բախտը տնօրինելու ժողովուրդների իրավահավասարության և իրավունքի հարգման ու արդյունավետ իրականացման համընդհանուր նշանակությունը», մասնակից պետությունները «հիշեցնում են նույնպես այդ սկզբունքի խախտման ուղածդ ձևի բացառման կարևորության մասին»։

Ինքնորոշման սկզբունքը շոշափում է ոչ միայն ժողովուրդների իրավունքները, այլև պետության ու անձի հարաբերությունները։ Մարդու իրավունքներն ու ազատությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը փոխադարձաբար կապված են և փոխադարձաբար պայմանավորված։ Չի կարող խոսք լինել մարդու իրավունքներից ու ազատություններից օգտվելու մասին, եթե չի ճանաչվում նրա կոլեկտիվ իրավունքը՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ընդհակառակը՝ անհնար է իրականացնել ինքնորոշման իրավունքը, եթե խախտվում են մարդու իրավունքները։ Այդ փոխադարձ կապն ու փոխադարձ պայմանավորվածությունը նշում է, մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952 թ. դեկտեմբերի 16-ի 637 (VII) բանաձևը, որում նշվում է, որ «ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքը նախադրյալ է մարդու հիմնական բոլոր իրավունքներից օգտվելու համար»։ Ուստի մարդու իրավունքի մասին միջազգային բոլոր ակտերը ժողովուրդների ինքնորոշման իրավունքը դասում են մարդու հիմնական, գլխավոր իրավունքների թվին։ Այսպես, մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի 21 հոդվածի 3 կետով սահմանվում է, որ «ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը», իսկ քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի I հոդվածի I կետի և Տնտեսական, սոցիալական ու կուլտուրական իրավունքների մասին միջազգային պակտի I հոդվածի I կետի նույնական դրույթներով հաստատվում է, որ «բոլոր ժողովուրդներն ինքնորոշման իրավունք ունեն», որի հետևանքով «նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական ու կուլտուրական զարգացումը»։

Հետևելով միջազգային պրակտիկային, միջազգային իրավունքի խորհրդային դոկտրինայում լիակատար հիմքով նշվում է, որ ինքնորոշման իրավունքը հանդիսանում է «յուրաքանչյուր մարդու և յուրաքանչյուր ժողովրդի հիմնական

ու անկապտելի իրավունքներից մեկը»[1]: Ելնելով դրանից, միջազգային համապատասխան ակտերը, ինչպիսին են ՄԱԿ-ի կանոնադրությունը, մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիան, քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը և այլն, ուղղակիորեն սահմանում կամ ընդունում են, որ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի խախտումը կամ սահմանափակումն իրենից ներկայացնում է մարդու գլխավոր իրավունքների և հիմնական ազատությունների ուղղակի ու անմիջական խախտում: Դեռ ավելին, քանի որ ինքնորոշման իրավունքը դասվում է մարդու կոլեկտիվ իրավունքների թվին[2], ապա նրա ժխտումն էլ իրենից ներկայացնում է մարդու իրավունքների զանգվածային խախտում:

Խոսելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրավաբանական բնույթի մասին, անհրաժեշտ է նշել, որ այդ սկզբունքի պարտադիր ուժը միայն ինքնորոշման դրույթները բովանդակող կոնկրետ միջազգային կոնվենցիաներին ու պայմանագրերին պետության մասնակցության հետ չէ, որ կապված է: Նա հենվում է ավելի լայն իրավական հիմքի վրա: Ինքնորոշման իրավունքը ձեռք է բերել jus cogens-ի հանրաճանաչ, հիմնադիր, հրամայական ու համապարփակ նորմայի կարգավիճակ:

Ինքնորոշման ժամանակ առաջացող իրավահավասարությունների կողմեր են հանդիսանում իր անկապտելի իրավունքից օգտվելու ձգտող ժողովուրդը և այն պետությունը, որի սահմաններում ապրում է այդ ժողովուրդը: Ինքնորոշման սկզբունքի հետ կապված միջազգային իրավունքի կարգադրագրերի բարեխիղճ կատարման պահանջը հասցեագրված է հենց այն պետությանը, որից անմիջականորեն կախված է այդ իրավունքի իրականացումը, այսինքն՝ այն պետությունը, որից անջատվում է ինքնորոշվող ժողովուրդը: Իրավահարաբերության անմիջական սուբյեկտի՝ ժողովրդի իր բախտի ազատ որոշման ընդհուպ մինչև անջատման իրավունքին համապատասխանում է պետության պարտադիր պարտականությունը հարգելու այդ ժողովրդի կամքի արտահայտությունը:

Միջազգային իրավունքի և միջազգային-իրավական համապատասխան ակտերի, այն ընդհանուր նորմաների համաձայն, որոնք կանոնակարգում են ինքնորոշման իրավունքի իրականացումը, որպես պահանջների նվազագույն, ներառում է պետությունների պարտականությունը՝ ձեռնպահ մնալ ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունքից նրանց զրկող ամեն մի բռնի գործողությունից, հանդես բերել «պատշաճ հարգանք շահագրգռված ժողովուրդների ազատորեն արտահայտված կամքի նկատմամբ»: Իսկ պահանջների լրիվ ծավալը ներառում է այդ սկզբունքի իրականացմանն ակտիվորեն աջակցելու պարտականությունը: Պետությունը ոչ միայն չպետք է խոչընդոտի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ազատ իրականացմանը, այլև ակտիվորեն նպաստի այդ իրավունքի իրացմանը: Պետությունների այն շրջանակը, որին ուղղված է իրավունքի այդ նորման, չի սպառվում նրանցով, որոնցից անջատվում են ինքնորոշվող ժողովուրդները: Միջազգային համագործակցության անդամ բոլոր պետություններն առանց բացառության պարտավոր են հարգել ժողովրդի ինքնորոշման իրավունքը և նպաստել նրա պահպանմանը նույնիսկ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է կողմնակի ժողովրդին: Նրանք բոլորը միասին և յուրաքանչյուրն առանձին վերցրած պետք է իրենցից կախված ամեն ինչ անեն ժողովուրդների ազատ ինքնորոշման ապահովման համար, որտեղ էլ այդ հարցը ծագի: Դա հետևում է ինքնորոշման erga omnes սկզբունքի հրամայական բնույթից և ամրագրված է միջազգային-իրավական համապատասխան այն ակտերի տեքստերում, որոնք ուղղակիորեն կարգադրագրում են բոլոր պետություններին ակտիվորեն խրախուսել այդ իրավունքի իրականացումը, աջակցել նրա իրացմանը: «Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համապարփակ իրացման կարևորությունը» ուղղակիորեն մատնանշում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մի շարք բանաձևեր՝ 2649

[1] Мовчан А. П. Права человека в международных отношениях. М., 1977, с. 43.

[2] Dickinson W. H. Collective human rights of people and minorities-International and Comparative Law Quarterly 1976, 216 p.

(XXV), 2787 (XXVI), 2955 (XXVII), 3070 (XXVIII), 3246 (XXIX) և այլն։ Միջազգային իրավունքի այն սկզբունքների մասին դեկլարացիայում, որոնք վերաբերում են պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան նշվում է, որ «յուրաքանչյուր պետություն համատեղ և ինքնուրույն գործողությունների օգնությամբ պարտավոր է աջակցել ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքների իրականացմանը համաձայն Կանոնադրության դրույթների և օգնություն ցույց տալ Միավորված ազգերի կազմակերպությանը տվյալ սկզբունքն իրականացնելու վերաբերյալ Կանոնադրությամբ նրա վրա դրված պարտականությունների կատարման գործում...»։

Քանի որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ինչպես նշվեց վերը, դասվում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների թվին, ապա ակներև է, որ այն նկատի է առնվում նաև այդ դեկլարացիայի այն դրույթներում, որոնցով կարգադրագրվում է, որ «յուրաքանչյուր պետություն պարտավոր է համատեղ և ինքնուրույն գործողությունների միջոցով նպաստել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համընդհանուր հարգմանն ու պահպանմանը Կանոնադրությանը համապատասխան»։ Ավելին, մարդու իրավունքների մասին միջազգային պակտերը նույնանման արտահայտություններով ուղղակիորեն սահմանում են, որ դրանց մասնակից պետությունները «պետք է, ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան, խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը» (Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին պակտի I հոդվածի 3 կետը և Տնտեսական, սոցիալական ու կուլտուրական իրավունքների մասին պակտի I հոդվածի 3 կետը)։

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952 թ. դեկտեմբերի 17-ի 637 (VII)-ի հատուկ ժողովուրդների ինքնորոշման իրավունքին նվիրված բանաձևը, պետություններին կարգադրագրելով ճանաչել և կենսագործել այդ իրավունքը, բացահայտում էր պետությունների այդ պարտականությունների պրակտիկ

բովանդակությունը նրանց չինքնորոշվող տարածքների նկատմամբ[1]։

Խոսելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ապահովման միջոցների մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն միջազգային իրավունքի առանձնահատկությունն ընդհանրապես, այլև ինքնորոշման իրավունքի սուբյեկտը. այդ իրավունքի կրողը ոչ թե պետությունն է, այլ ժողովուրդը կամ ազգը, իսկ նրանց ինքնորոշման մասին հարցը սովորաբար ծագում է կապված նրանց ստրկացման, կախվածության կամ օտարազգի գերիշխանության ու շահագործման մյուս ձևերի հետ, երբ նրանց իրավասուբյեկտիվությունը չի ճանաչում նրանց բռնակցած պետությունը։

Ինչպես հայտնի է, խորհրդային դոկտրինան և խորհրդային պետությունը շատ բան արեցին ազգային-ազատագրական շարժման օրինականությունը ճանաչելու և առաջինը առաջադրեցին իրենց ազգային ազատագրության համար մարտնչող ժողովուրդների ու ազգերի իրավասուբյեկտիվության գաղափարը։ Ժամանակակից միջազգային իրավունքի սուբյեկտներ են ճանաչված ոչ միայն պետությունները, այլև իրենց ինքնորոշման անկապտելի իրավունքը պաշտպանող ժողովուրդները։

Թեև միջազգային իրավունքի նորմաների ուղղակի գործողությանը ժողովուրդների ինքնորոշման ենթակայությունը դասվում է իրավական անվիճելի աքսիոմների թվին, գործնականում յուրաքանչյուր ժողովրդի ազատ ինքնորոշման անկապտելի իրավունքի իրացման ապահովումը խաղաղ միջոցներով հանդիպում է քաղաքական կարգի խոչընդոտների։ Այսօր դժվար է, երևի, նշել միջազգային իրավունքի մեկ այլ նորմա, որը, թվում է վայելելով համընդհանուր ճանաչում, միևնույն ժամանակ իրականում խախտվում է այնքան հաճախ, ինչպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքը։ Ընդունելով ՄԱԿ-ի խոշոր դերը ժողովուրդների այդ անկապտելի իրավունքի իրականացման գործում, այնուամենայնիվ ստիպ-

[1] Խնամարկյալ երկրների նկատմամբ ինքնորոշման իրավունքի իրացման ապահովման երաշխիքի նպատակով հետագայում ստեղծվել է ՄԱԿ-ի հատուկ կոմիտե։

ված ենք խոստովանել, որ դեռ չկա համապատասխան մի մեխանիզմ, որը բոլոր դեպքերում ապահովեր ժողովուրդների կողմից իրենց իրավունքի խաղաղ ու անարգել իրականացումը։

Եթե պետությունները, ամենից առաջ նրանք, որոնք իրականացնում են մյուս ժողովուրդների ազգային ճնշման զանազան ձևեր, կամավոր ու բարեխղճորեն կատարեին ազատ ինքնորոշման միջազգային իրավունքի կարգադրագրերը, ապա, ակներև է, որ այդ իրավունքի հարկադիր ապահովման միջոցների դիմելու ոչ մի անհրաժեշտություն չէր լինի։ Իսկ քանի որ ժամանակակից աշխարհի իրական պայմաններում ազգային ճնշումը պահպանվում է բռնությամբ, միջազգային իրավունքը, մի կողմից, ուղղակիորեն և միանշանակ արգելում է պետության կողմից ինքնորոշման ձգտող ժողովուրդների դեմ ուղածդ ձևի ուժի կիրառում կամ դրա կիրառման սպառնալիքներ, իսկ մյուս կողմից՝ նույնքան որոշակի և կտրականորեն նախատեսում է իր ինքնորոշման իրավունքը, ներառյալ ազգային ու տարածքային միասնության հասնելը, պաշտպանելու համար ինքնապաշտպանության կարգով անհրաժեշտ միջոցների, ընդհուպ մինչև ուժի դիմելու օրինաչափությունը։ Ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը հանուն իրենց իրավունքների իրականացման, հանուն բռնակցական քաղաքականություն վարող պետությունների կողմից նրանց ճանաչման, պատկանում է ժողովուրդների ինքնորոշման հարկադիր իրականացման օրինական միջոցներին։ Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին դեկլարացիայում ասվում է, որ «ուղածդ ռազմական գործողությունները կամ ճնշողական միջոցները, ինչ բնույթի էլ ուզում է լինեն, որոնք ուղղվածեն ընդդեմ կախյալ ժողովուրդների, պետք է դադարեցվեն այն հաշվով, որ նրանց հնարավորություն տրվի խաղաղության ու ազատության պայմաններում իրականացնել իրենց լիակատար անկախության իրավունքը, իսկ նրանց ազգային տարածքների ամբողջությունը պետք է հարգվի» (կ. 4)։ Միջազգային անվտանգության ամրապնդման մասին դեկլարացիայում (1970 թ. դեկտեմբերի 16-ի 2734 (XXV) բանաձև) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան պետություններին կոչ է անում ձեռնպահ մնալ որևէ բռնի կամ այլ գործողությունից, որ զրկում է ժողովուրդներին, հատկապես դեռ օտարերկրյա տիրապետության ուղածդ ձևի տակ գտնվող ժողովուրդներին, նրանց «ինքնորոշման անկապտելի իրավունքից» և ձեռնպահ մնալ ռազմական ու ճնշողական այն միջոցառումներից, որոնք ուղղված են կախյալ բոլոր ժողովուրդների կողմից ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան անկախության հասնելուն խոչընդոտելուց, ինչպես նաև օգնություն ցույց տալ Միավորված ազգերի կազմակերպությանը և, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության, ճնշված ժողովուրդներին «նրանց օրինական պայքարում» այն հաշվով, որ հասնեն օտարերկրյա տիրապետության ուղածդ ձևի ամենաարագ վերացման» (Կ.18)։

«Գաղութային ու օտարերկրյա տիրապետության և ռասիստական վարչակարգերի դեմ մարտնչող կոմբատանտների իրավական ռեժիմի հիմնական սկզբունքներում» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 3103 (XXVIII) բանաձևը) նույնպես կա այն բանի հաստատումը, որ «ռասիստական վարչակարգերի գաղութային և օտարերկրյա տիրապետության դեմ պայքարը ճնշելու ուղածդ փորձերը անհամատեղելի են ՄԱԿ-ի կանոնադրության, միջազգային իրավունքի սկզբունքների մասին դեկլարացիայի հետ, որոնք վերաբերում են բարեկամական հարաբերություններին ու պետությունների միջև համագործակցությանը՝ համապատասխան ՄԱԿ-ի կանոնադրությանը, մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիային և գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին դեկլարացիային և իրենցից ներկայացնում են միջազգային խաղաղության ու անվտանգության սպառնալիք» (Կ. 2)։

Այն դեպքում, երբ պետությունը զանց է առնում իր միջազգային պարտականությունները և կիրառում է ճնշիչ միջոցներ ինքնորոշում պահանջող ժողովուրդների դեմ, վերջինս լիակատար իրավունք ունի ոչ միայն դիմադրելու, այլև դիմելու միջազգային համագործակցության օգնությանը։ Մյուս բոլոր պետությունները ոչ միայն չպետք է որևէ օգնություն ցույց տան բռնակցող պետությանը, այլև, ընդհակառակը, պարտավոր են բարոյական ու նյութական անհրաժեշտ ամեն օգնություն ցույց տալ իր ինքնորոշման իրավունքը հաստա-

տելու համար պայքարող ժողովուրդներին։ Միջազգային իրավունքի այդ նորմաներն արտացոլված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մի ամբողջ շարք բանաձևերում, համապարփակ բնույթի միջազգային բազմաթիվ կոնվենցիաներում։ Դրանք բոլորը ելնում են այն բանից, որ իրենց ինքնորոշման իրավունքի իրականացման և իրենց ազգային ազատագրության համար պայքարող ժողովուրդներն իրավունք ունեն խնդրելու և ստանալու մյուս պետությունների աջակցությունը, իսկ վերջիններս պարտավոր են այդպիսի աջակցություն ցույց տալ առանց բացառության բոլոր ժողովուրդների ինքնորոշմանը նրանց կողմից իրենց զարգացման տարբեր տեսակետների ապահովման հարցերի լուծման ժամանակ, ներառյալ իրենց քաղաքական ու իրավական կարգավիճակի փոփոխությունը։

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2105 (XX) 1965 թ. դեկտեմբերի 20-ի գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին դեկլարացիայի իրականացման ընթացքի վերաբերյալ բանաձևում ճանաչվում է «այն պայքարի օրինականությունը, որ մղում են գաղութային տիրապետության տակ գտնվող ժողովուրդները հանուն ինքնորոշման ու անկախության իրենց իրավունքի իրականացման»։ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան բոլոր պետություններին առաջարկում է նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ ազգային-ազատագրական շարժումներին (Կ. 10)։ Նույն այդ սկզբունքը գրեթե բառացի հաստատվել է ՄԱԿ-ի 1966 թ դեկտեմբերի 13-ի 2189 (XXI) բանաձևում (Կ. 7)։

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1970 թ. հոկտեմբերի 24-ի 2627 (XXV) բանաձևը ընդունելով իրենց ազատության համար «իրենց տրամադրության տակ ունեցած համապատասխան բոլոր միջոցներով ժողովուրդների պայքարի օրինականությունը և դատապարտելով բոլոր այն գործողությունները, որոնք այս կամ այն ժողովրդին զրկում են ինքնորոշման իրենց անկապտելի իրավունքից օգտվելու հնարավորությունից, կրկին ընդգծում է, որ այդ ժողովուրդներ իրավունք ունեն իրենց արդարացի պայքարում ձգտելու ստանալու բարոյական ու նյութական անհրաժեշտ ողջ օգ

նությունը Կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին համապատասխան» (Կ. 6)։

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի դեկտեմբերի 12-ին ընդունած «Գաղութային և օտարերկրյա տիրապետության ու ռասիստական վարչակարգերի դեմ մարտնչող կոմբատանտների իրավական ռեժիմների հիմնական սկզբունքներում» (բանաձև 3103 (XXVIII), նույնպես հաստատվում է, որ «գաղութային ու օտարերկրյա տիրապետության և ռասիստական վարչակարգերի լծի տակ գտնվող ժողովուրդների պայքարը հանուն իրենց ինքնորոշման իրավունքի և անկախության հանդիսանում է օրինական և ամբողջովին համապատասխանում է միջազգային իրավունքի սկզբունքներին» (Կ. 1)։

Բերված նորմատիվային նյութն արդեն իր բովանդակությամբ բացառում է ինքնորոշման համար շարժումը պաշտպանող երրորդ պետությունների գործողությունները որպես այն պետության ներքին գործերին միջամտություն որակելու հնարավորությունը, որից ուզում է անջատվել ինքնորոշման ձգտող ժողովուրդը։ Սակայն, որպեսզի այդ առթիվ որևէ կասկած չմնա, մշակվել ու ընդունվել են միջազգային իրավունքի հատուկ նորմաներ, որոնք ուղղակի խոսքերով բացառում են իրենց ինքնորոշման իրավունքի ճանաչմանը ձգտող ժողովուրդներին ցույց տրվող նման օգնությունը որպես պետության ներքին գործերին միջամտություն որակելու հնարավորությունը։ Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1965 թ. դեկտեմբերի 21-ին ընդունած «Պետությունների ներքին գործերին միջամտության անթույլատրելիության մասին, նրանց անկախության ու սուվերենության պաշտանության մասին դեկլարացիայում (բանաձև 2131 (XX)) ուղղակի մատնանշվում է, որ «բոլոր պետությունները պետք է հարգեն ժողովուրդների և ազգերի ինքնորոշման ու անկախության իրավունքը, և այդ իրավունքը պետք է իրականացվի ազատորեն ու առանց որևէ արտաքին ճնշման և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների լիակատար պահպանմամբ հանդերձ» (Կ. 6)։

Մյուս կարևոր փաստաթղթում՝ Ինտերվենցիայի և պետությունների ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության մասին դեկլարացիայում, որ ընդունվել է ՄԱԿ-ի Գլ-

խավոր ասամբլեայի կողմից 1981 թ. դեկտեմբերի 9-ին (բանաձև 36/103) նույնպես միանշանակ հաստատվում է, որ պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը չի կարող հակադրվել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին: Հաստատելով չմիջամտության սկզբունքը՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան միաժամանակ ուղղակի մատնանշում է, որ այդ սկզբունքը ներառում է, մասնավորապես, պետությունների պարտականությունը ձեռնպահ մնալու ուզածդ բռնի գործողություններից, որոնք զրկում են ժողովուրդներին «ինքնորոշման, ազատության ու անկախության իրենց իրավունքից» (2, II) և «պետությունների իրավունքն ու պարտականությունն է լրիվ չափով պաշտպանել ժողովուրդների ինքնորոշման, ազատության ու անկախության իրավունքը, ինչպես նաև նրանց իրավունքն է այդ նպատակով վարել քաղաքական ու զինված պայքար (2. III): Բացի այդ, հատուկ 4 պարագրաֆում ուղղակիորեն վերապահություն է արվում, որ «սույն դեկլարացիայում ոչ մի բան ինչ կերպ ուզում է լինի վնաս չի հասցնի ժողովուրդների ինքնորոշման, ազատության ու անկախության իրավունքին» և նրանց «օգտագործելու և ստանալու իրավունքին կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին համապատասխան»:

Ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի համընդհանուր հարգման ապահովման ունեցած միջոցների զինանոցում ավելի ու ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում իրավական միջոցները: Պետության կողմից ժողովուրդների ինքնորոշման իրավունքի խախտումը (օրինակ, բռնակցման ձևով և այլն) տանում է դեպի բուն պետությունների քաղաքական ու միջազգային-իրավական պատասխանատվության և դրա կատարման մեջ մեղավոր անհատների (ֆիզիկական անձանց) քրեական պատասխանատվություն:

Միջազգային իրավունքի հանձնաժողովի ընդունած հայտնի 19 հոդվածը պետությունների պատասխանատվության մասին հոդվածների նախագծի առաջին ընթերցման մեջ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պաշտպանության համար էական նշանակություն ունեցող միջազգային պարտավորությունների ծանր խախտումները որակում է որպես միջազգային հանցագործություն «միջազգային իրավունքի նորմաներին համապատասխան»[1]:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պահպանման իրավական երաշխիքներից մեկը դառնում է նրանց խախտումները քրեական կարգով պատժելի միջազգային հանցագործություններին դասելը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հանձնարարությամբ Միջազգային իրավունքի հանձնաժողովի մշակած խաղաղության և մարդկության անվտանգության դեմ հանցագործությունների կոդեքսի նախագծում հանցագործությունների որպես հատուկ տեսակ առանձնացվում են ինքնորոշման իրավունքի այնպիսի արտակարգ լուրջ խախտումները, ինչպիսիք են բռնակցումը, ուժով գաղութային տիրապետության հաստատումը կամ պահպանումը, որևէ ժողովրդի կամ նրա մի մասի ենթարկումը օտարերկրյա տիրապետությանն ու նրա շահագործումը և այլն: Դրանց ծանրությունը որոշվում է նրանով, որ դրանցով խախտվում են մարդկային հասարակության գոյության բուն հիմքերը:

Ինքնորոշման իրավունքի խախտմամբ հանցագործությունների այդ հանցակազմերի կապը հատկապես հստակորեն է երևում բռնակցման օրինակով, որի տակ հասկացվում է ոչ միայն պետության կողմից օտարազգի մարդի բռնի միացումը, այլև նրա բնակչության կամքին հակառակ պահելը: Վ. Ի. Լենինի ձևակերպած և խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարում ընդունված «Հաշտության մասին դեկրետում» մտած դասական սահմանման համաձայն, եթե որևէ ազգ կամ ժողովուրդ բռնությամբ պահվում է տրվյալ պետության սահմաններում, եթե նրան, հակառակ նրա կողմից արտահայտված ցանկության իրավունք չի վերապահվում ազատ քվեարկությամբ առանց նվազագույն հարկադրման լուծելու պետական գոյության ձևերի հարցը, ապա «նրա միացումը հանդիսանում է անեքսիա, այսինքն՝ զավթում ու ու բռնություն»[2]:

Իսկ անեքսիան (բռնակցումը), համաձայն ագրեսիայի

---

[1] Ежегодник Комиссии Международного права. 1980 год, т. II (часть вторая), документ A (35) 10, глава III.

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 15:

բնորոշման, որ մշակել է միջազգային համագործակցությունը և ընդունել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1974 թ. դեկտեմբերի 14-ին, մտնում է միջազգային այդ հանցագործության կազմում և բերում է միջազգային պատասխանատվություն։ Բռնակցման հետևանքով ստացված տարածքային ոչ մի ձեռքբերում չի կարող օրինական ճանաչվել։ Տարածքի պետական պատկանելության յուրաքանչյուր փոփոխությունը պետք է հիմնվի այն բնակեցնող ժողովրդի ազատ ինքնորոշման վրա։

Ժողովուրդների ինքնորոշման խախտումները միջազգային իրավունքով ճանաչվող հանցագործություններին վերագրումը նշանակում է, որ վարքի նորման խախտող պետությունը միջազգային պատասխանատվություն է կրում, իսկ մյուս բոլոր պետություններն ամբողջությամբ վերցրած՝ որպես միջազգային համագործակցություն և նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ պարտավոր են արձագանքել համապատասխան ձևով, այսինքն՝ իրենցից կախված ամեն ինչ անել, որպեսզի թույլ չտան կամ կանխեն այդպիսի խախտումը՝ համապատասխան գոյություն ունեցող ընթացակարգերի, չճանաչեն այդպիսի խախտումների արդյունքները և ձգտեն խախտված իրավական դրության վերականգնմանը։ Իսկ ինչ վերաբերում է անհատների՝ ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությանը, ապա պետությունները պետք է բարեխղճորեն ձգտեն նրանց պատիժների անխուսափելիությանը ազգային կամ միջազգային հեղինակավոր դատարանների որոշումներին համապատասխան։

Քանի որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ինչպես արդեն նշվեց, վերագրվում է մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին, ապա ակներև է, որ լրիվ չափով նրա վրա պետք է տարածվի ՄԱԿ-ին առընթեր և համաեվրոպական պրոցեսների շրջանակներում մարդու իրավունքների վերաբերյալ վերահսկիչ մեխանիզմների գործողությունը։ 1988 թ. դեկտեմբերի 7-ին, հանդես գալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 43-րդ նստաշրջանում, Մ. Ս. Գորբաչովը նշեց դրանցում Խորհրդային Միության մասնակցությունը ընդլայնելու մտադրությունը։ «Մենք գտնում ենք, որ մարդու իրավունքների բնագավառում համաձայնագրերի մեկնաբանության և կիրառության վերաբերյալ Հաագայի միջազգային դատարանի իրավասությունը պետք է պարտադիր լինի բոլոր պետությունների համար»[1]։

ԽՍՀՄ-ի համար, ինչպես և ուզածդ բազմազգ պետության համար, ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ միջազգային պարտավորությունների իրականացումն ունի ոչ միայն արտաքին՝ միջպետական, այլև ներքին տեսակետ, որը ազգամիջյան հարաբերություններում ինքնորոշման սկզբունքի իրացումն է։ Այն արտահայտվում է ինչպես պետության կազմի մեջ մտնող ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչմամբ, այնպես էլ նրանց ազգատարածքային սահմանազատման նկատմամբ նրա կիրառմամբ։

Սկսված ընդհանուր քաղաքական ռեֆորմի, վերակառուցման և ազգամիջյան հարաբերությունների կատարելագործման պայմաններում մեր երկրում սկզբունքային լենինյան հիմքի վրա խորհրդային հանրապետությունների միջև և հանրապետությունների ներսում, համաշխարհային մասշտաբի համադեմոկրատական ստանդարտներին համապատասխան ազգամիջյան հարաբերությունները կարգավորող ԽՍՀՄ ներքին օրենսդրության կիրառման պրոբլեմը հատուկ նշանակություն է ձեռք բերում որպես միասնության գործոն ժողովուրդների սոցիալիստական մեծ ընկերակցությունում։

Ազատ ինքնորոշմանը վերաբերող միջազգային-իրավական նորմաների ու սկզբունքների պահպանության պարտադիրությունը պետությունների կողմից հիմնած է ներքին իրավունքի նկատմամբ միջազգային առաջնության վրա, պետությունների կողմից իրենց միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքի վրա։ Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ իրավական պետության գաղափարը և մեր հավատարմությունը միջազգային իրավակարգին ենթադրում են միջազգային իրավունքի նորմաների պարտադիր ու անշեղ պահպանում։ Հիշեցնենք, որ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Խ. Պերես դե Կուելյարին ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստր Է. Ա. Շևարդնաձեի հղած նամակում մարդասիրական բնույթի մի շարք բազմակողմանի կոնվենցիա-

[1] «Խորհրդային Հայաստան», 1988 թ., դեկտեմբերի 8։

ների վերաբերյալ միջազգային դատարանի պարտադիր իրավասության ճանաչման մասին Խորհրդային Միության կողմից վերապահումները հանելու առթիվ ուղղակի մատնանշվում է, որ «հանդես գալով միջազգային իրավունքի առաջնության հաստատման օգտին, մենք ելնում ենք այն բանից, որ պետությունների միջազգային-իրավական նորմաներն ու պարտավորությունները առավել ուժ ունեն նրանց ներքին օրենքների նկատմամբ»: Նույնքան որոշակի ու միանշանակ է արձանագրված Խորհրդային Միության կողմից միջազգային իրավունքի առաջնության ճանաչումը ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստր Է. Ա. Շևարդնաձեի՝ չմիացող երկրների մինիստրների «խաղաղություն և միջազգային իրավունք» կոնֆերանսի մասնակիցներին ուղղած 1989 թ. հունիսի 26-ի դիմումում. «Մեր տեսակետից,— ասվում է այդ փաստաթղթում,— միջազգային կայուն իրավակարգի ապահովումը ենթադրում է իրավունքի առաջնությունը պետությունների քաղաքականության մեջ և պրակտիկայում, միջազգային պարտավորությունների նախապատվություն ներքին օրենքների նկատմամբ, միջազգային-իրավական հանրաճանաչ սկզբունքների ու նորմաների համատարած կիրառելիություն»[1]:

Միջազգային իրավունքի առաջնության ճանաչումը ազգայինի նկատմամբ նշանակում է, որ եթե ազգային իրավունքի մեջ չլինեին համապատասխան նորմաներ (տվյալ դեպքում՝ ազգերի ինքնորոշման մասին) կամ եթե դրանք հակասեին միջազգային իրավունքի նորմային, վերջինս առավել գերադասելի ուժ կունենար և ենթակա կլիներ կիրառության այն իմաստով ու այն ծավալով, որոնք սահմանված են միջազգային իրավունքով: Պետությունը չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները որպես իր կողմից միջազգային իրավունքի նորմաների չկատարման արդարացում (տե՛ս միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 27 հոդվածը): Իսկ միջազգային իրավունքի պարտականություններին հակասող օրենքի կամ վարչական կանոնի հրատարակման դեպքում կարող է ծագել պետության միջազգային պատասխանատվություն:

1 «Իզվեստիա», 1989 թ., հունիսի 26:

Մի շարք միջազգային իրավական կարևորագույն ակտեր ուղղակի կարգադրագրում են իրենց ներքին ակտերը համապատասխանության բերել միջազգային իրավունքի նորմաների հետ՝ ներառյալ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այսպես, օրինակ, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության մասնակից պետությունները, հաստատելով միջազգային իրավունքի առթիվ պարտավորությունների բարեխիղճ կատարման անհրաժեշտությունը, հանդիսավոր խոստացան, որ «իրենց սուվերեն իրավունքները իրականացնելիս, ներառյալ իրենց օրենքներն ու վարչական կանոնները սահմանելու իրավունքը, նրանք կհամաձայնեն միջազգային իրավունքի գծով իրենց իրավաբանական պարտավորությունների հետ, նրանք, բացի այդ, պատշաճ կերպով հաշվի կառնեն և կկատարեն Եվրոպայի անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության եզրափակիչ ակտի դրույթները»:

Դա նշանակում է, որ ԽՍՀՄ օրենքներն ու վարչական կանոնները պետք է համարվեն նրա ինքնորոշման վերաբերյալ միջազգային այն պարտավորություններին, որոնք ընդունվել են եզրափակիչ ակտով և հիմնված են միջազգային իրավունքի ընդհանուր նորմաների վրա: Դրանից հետևում է նույնպես, որ ազգատարածքային սահմանազատման կոնկրետ հարցերը ոչ միայն հարևան պետությունների հետ, այլև ԽՍՀՄ-ի սահմաններում պետք է լուծվեն նշված միջազգային պարտավորություններին լրիվ համապատասխան: ԽՍՀՄ միջազգային պարտավորությունների հետ ազգային նորմատիվ նյութի այդպիսի ներդաշնակման անհրաժեշտությունը առանձնապես ավելի հրատապ է դառնում խորհրդային սոցիալիստական իրավական պետության պայմաններում՝ կապված հասարակական կյանքի իրավական կանոնավորման դերի աճման հետ, այդ թվում նաև հատկապես ազգամիջյան հարաբերությունների ոլորտում:

Խոսելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացումը կանոնավորող իրավական նորմաների հասցեատերերի մասին, հարկավոր է հատուկ մատնանշել, որ խորհրդային ֆեդերացիայի պայմաններում ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը հարգելու և պահպանելու

ԽՍՀՄ պարտավորությունն ամբողջությամբ տարածվում է միութենական հանրապետությունների վրա։ Առանց բացառության բոլոր ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ միջազգային այդ պարտավորությունները ընդունված են միութենական բոլոր հանրապետությունների անունից ԽՍՀՄ պետական իշխանության բարձրագույն մարմինների կողմից, ուստի և դրանց կատարումը պարտադիր է նրանցից յուրաքանչյուրի համար ԽՍՀՄ սահմանադրության 29 հոդվածում հաստատված՝ «միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից ու նորմաներից, ԽՍՀՄ-ի կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղճ կատարման» սկզբունքին համապատասխան։ Միութենական հանրապետությունների պետական մարմինները պարտավոր են գործել Խորհրդային Միության ընդունած միջազգային պարտավորություններին լիակատար համապատասխանությամբ։ Նրանք չեն կարող վկայակոչել իրենց անկախությունը ԽՍՀՄ միջազգային պարտավորությունների կատարումից հրաժարվելու համար, քանի որ նրան համապատասխան իրավունքներ են պատգամավորել։ Խորհրդային Միությունը ի դեմս պետական իշխանության իր բարձրագույն մարմինների զրսում հանդես է գալիս որպես երաշխավոր՝ ընդունված պարտավորությունների, ներառյալ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կատարման, ապահովում է դրանց կատարումը իր ամբողջ տարածքում։

Չի կարելի վկայակոչել միութենական հանրապետությունների անկախությունը տարածքային ամբողջականության ու ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը և միևնույն ժամանակ բանն այնպես ներկայացնել, թե իբր նրանք իրենց պետական սահմանների շրջանակներում ազատ են ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքը պահպանելու անհրաժեշտությունից։ Ժողովուրդների իրավաբանական հավասարության շնորհիվ միութենական հանրապետությունները, օգտվելով ինքնորոշման իրավունքից, չեն կարող ժխտել համանման իրավունքը իրենց պետական սահմանների մեջ մնող ժողովուրդների համար։ Որևէ հանրապետության կողմից որևէ ժողովրդի ինքնորոշման իրավունքի մերժումն իր տարածքի վրա կներկայացներ միջազգային պարտավորությունների ուղղակի խախտում ոչ միայն նրա կողմից, այլև հենց Խորհրդային Միության կողմից։ Միութենական հանրապետության այդպիսի վարքի հետևանքները ԽՍՀՄ-ի համար ակներև են։ Այդ առումով Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից ԼՂԻՄ-ի ինքնորոշման իրավունքի մերժումը կնշանակեր Խորհրդային Միության կողմից իր միջազգային պարտավորությունների խախտում ժողովուրդների հանրաճանաչ իրավունքների և մարդու իրավունքների առումով անուղղելի վնաս կհասցներ նրա միջազգային հեղինակությանը։

Եզրակացությունը մեկն է. չի կարելի թույլ տալ, որ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, լինելով խորհրդային բազմազգ պետության արմատական սահմանադրական սկզբունք և միջազգային հարաբերությունների հիմնարար սկզբունք ամբողջ մոլորակի մասշտաբով, զոհ բերվեր այս կամ այն միութենական հանրապետության նեղ եսամոլական նկատառումներին։

3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ, ԹԵ՞ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(Ժողովրդի ինքնորոշման իրավունքի և պետության տարածքային ամբողջության սկզբունքի հարաբերակցության մասին)

Պետությունների կողմից ստեղծված ընդարձակ նորմատիվային նյութը ինչպես միջազգային հարաբերությունների ոլորտում, այնպես էլ ազգային օրենսդրության ասպարեզում, միանշանակ հաստատում է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի բացարձակ անհամատեղելիությունը անեքսիոնիզմի, ուղղած ազգային ճնշման ու հալածանքի հետ։ Նրա նպատակը հենց մարդկության կյանքից ժողովուրդների անիրավահավասարության, բռնության, մի ժողովրդի մյուսին գերիշխելու վրա հիմնված նման հարաբերությունների վերացումն է։ Սակայն իրական կյանքում, հատկապես կապիտալիստական հարաբերությունների գերակշռման պատմական. ժամանակաշրջաններում, հաճախ փորձեր էին ձեռնարկվում արդարացնելու զավթողամոլության քաղաքականու-

թյունը, ժխտելու բռնակցված մարզի ժողովրդի ինքնորոշման իրավունքը պատճառաբանելով, որ դա կարող է խախտել պետության միասնությունն ու տարածքային ամբողջությունը և նույնիսկ «ազգային» անկախությունը, որի տակ հասկանում են պետության մեջ գերիշխող ազգի լիիրավությունը։ Հիշողության մեջ կենդանի են բազմաթիվ օրինակներ, երբ իմպերիալիստական գաղութային տերությունները, առաջ քաշելով «Ալժիրը՝ դա Ֆրանսիան է», «Գոան՝ դա Պորտուգալիան է» և այլ տիպի նույնություններ, ուժով միացված և ստրկացված երկրները հայտարարում էին մայր երկրների տարածքների «միասնական ու անբաժան» մասեր, պնդում էին, թե իբր բռնությամբ պահվող տիրույթների ժողովուրդների ինքնորոշումը սպառնալիքի տակ է դնում բազմազգ գաղութատիրական պետությունների տարածքային ամբողջությունը և նրանց պետական սահմանների անխախտությունը։

«Միասնական ու անբաժան» տիրույթների իմպերիալիստական ձևակերպումները, որ առաջ էին քաշվում պետության տարածքային ամբողջության պաշտպանության պատրվակով, իրականում ծառայում էին բռնակցման և ազգային ստրկացման քաղաքականության արդարացմանը։ Որքան էլ դա ցավալի է, իմպերիալիզմի տարբեր մակարդակի նմանատիպ ռեցիդիվներ տեղի ունեն նաև մեր ժամանակ։ Որքան էլ դա հակաբնական է, բայց դրանք կան նույնիսկ սոցիալիստական աշխարհում, ուր շովինիզմն ու նացիոնալիզմը, դժբախտաբար, ամենևին վերացած երևույթներ չեն։ Այսօր մենք վկա եղանք այնպիսի մի տարիմաստ երևույթի, երբ մարդկության կողմից դատապարտված գաղութային նույնություններին ավելացավ նոր, այս անգամ՝ «հայրենական» տարբերակը Ալիևի հռչակած «Ղարաբաղը Ադրբեջանի անբաժան մասն է» ձևակերպման տեսքով և մի քանի այլ զուգանմաններ։ Նման անեքսիոնիստական ձևակերպման երևան գալու հնարավորությունը, որն ընդհանուր ոչինչ չունի պացիֆիզմի և ինտերնացիոնալիստական գաղափարախոսության հետ, ուղղակի հետևանք է լենինյան ազգային քաղաքականության ձևախեղումների։ Նման ճորտատիրական ձևակերպումների վերածնունդը բնականաբար ուղեկցվում է այդ

ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ժխտմամբ, որոնց համար նախանշված է բռնակցված մարզերի համար կցորդների բախտը։ Ընդ որում, իրենց զավթամոլությունը ներկայացնելով որպես «հետևողական ինտերնացիոնալիզմ», նման «միասնության ու անբաժանելիության» մեր տնաբույս ջատագովները փորձում են սևացնել ԽՍՀՄ սահմաններում ինքնորոշման լենինյան նորմայի վերականգնման ձգտումը որպես... բուրժուական նացիոնալիզմ։ Դա նրանց հեշտությամբ էր հաջողվում խոսքի ու գործի միջև լիակատար խզումով բնորոշվող ժամանակներում։ Նրանց դա հաջողվում է նաև այժմ, օգտագործելով ազգամիջյան հարաբերությունների իսկական վերակառուցման հանդեպ վախը, բայց արդեն ժամանակը եկել է իրերն իրենց անուններով կոչելու. շովինիզմը՝ շովինիզմ, բռնակցումը՝ բռնակցում, ժողովուրդների ազատագրական շարժումը՝ ազատագրական շարժում։ Չի կարելի այսուհետև էլ սիլի-բիլի անել հանրապետական շովինիզմի և անեքսիոնիզմի հետ, որն սպառնալիքի տակ է դնում ազգային խաղաղությունը։ Հանդես գալով մեզ մոտ երկրի ազգամիջյան հարաբերությունների և միջազգային հարաբերությունների ոլորտում վերակառուցման գաղափարով՝ մենք պետք է վճռականորեն վերացնենք ինքնորոշման նկատմամբ կրկնակի ստանդարտը. մեկը Ալժիրի, Գոայի, Դամանի, Դիուի, Պանդիշերիի, Մակաոյի, Պապուա—Գվինեայի, Պաղեստինի, Արևմտյան Սահարայի, Նամիբիայի և տասնյակ այլ երկրների ու տարածքների համար, իսկ մյուսը՝ ասենք Ղարաբաղի համար։ Եթե ինքնորոշման լենինյան սկզբունքը և բռնակցման նրա հստակ ու միանշանակ սահմանումը կիրառելի են ամբողջ աշխարհի նկատմամբ, ապա ինչո՞ւ դրանք կիրառելի չեն Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, առավել ևս ԽՍՀՄ սահմաններում։ Ինչպես և մյուս բոլոր տարածքների նկատմամբ, որոնք ինքնորոշման և բռնակցումներից հրաժարվելու հարց են դնում, նրանց լրիվ չափով վերաբերում է լենինյան որակումը. «Եթե որևէ ազգ բռնությամբ է պահվում տվյալ պետության սահմանների մեջ, եթե նրան, հակառակ նրա արտահայտած ցանկության, միևնույն է, արտահայտված է այդ ցանկությունը մամուլում արդյոք, թե ժողովրդական ժողովներում, կուսակցությունների

որոշումների մեջ կամ ազգային ճնշման դեմ հուզումների և ապստամբությունների ձևով, իրավունք չի տրվում ազատ քվեարկությամբ, միացնող կամ առհասարակ ավելի ուժեղ ազգի զորքերն այդ երկրից ամբողջովին հանելով, առանց որևէ հարկադրանքի որոշելու այդ ազգի պետական գոյության ձևերի հարցը, ապա նրա միացումը հանդիսանում է անեքսիա, այսինքն՝ զավթում ու բռնություն»[1]:

Բավական է լենինյան այս ձևակերպման մեջ «որևէ ազգ» ընդհանուր հավաքական սահմանման փոխարեն մտցնել «Լեռնային Ղարաբաղի բնակչությունը» կոնկրետ մատնանշումը, և այն, ստանալով կոնկրետ արտահայտություն, լուսանկարչական ճշտությամբ կարտացոլի այստեղ գոյություն ունեցող իրադրությունը՝ բռնակցում, որ խախտում է ինքնորոշման իրավունքը: Իր ժողովրդից կտրված Ղարաբաղի հայերի ինքնորոշման անկապտելի իրավունքի ճանաչման մերժումը կնշանակեր ԽՍՀՄ սահմանադրության 70 հոդվածում ամրագրված հիմնական սահմանադրական սկզբունքի խախտում և ՄԱԿ-ի կանոնադրությամբ ու համաշխարհային մասշտաբի մի շարք այլ միջազգային-իրավական ակտերով սահմանված ԽՍՀՄ միջազգային պարտավորությունների խախտում: Անհնար է, մնալով ժողովուրդների իրավահավասարության դիրքերում, իր համար ինքնորոշման իրավունք պահանջել և միևնույն ժամանակ մյուս ժողովուրդներին մերժել այդ իրավունքը: Այնուամենայնիվ այդպիսի բռնակցումները հավերժացնելու համար մեղանում սկսել են վկայակոչել ԽՍՀՄ սահմանադրության 78 հոդվածը և հանրապետական սահմանադրության համապատասխան հոդվածը, որոնցում ասվում է այն մասին, որ «միութենական հանրապետության տերիտորիան չի կարող փոփոխվել առանց նրան համաձայնության» և որ «միութենական հանրապետությունների միջև սահմանները կարող են փոփոխվել միայն համապատասխան հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ», իսկ ժողովրդի ինքնորոշման մասին սահմանադրական հիմնական նորման, որն ընկած է խորհրդային ֆեդերացիայի ստեղծման հիմքում, հայտարարում են գործին չվերաբերող: Լավագույն դեպքում խոսում են սահմանադրական փակուղու մասին, ներկայացնելով դա որպես օբյեկտիվության դրսևորում: Օբյեկտիվիզմ խաղալու նման օրինակ կարող է ծառայել «Նովոյե վրեմյա» (1988, № 14, էջ 30—32) հանդեսում զետեղված «Լեռնային Ղարաբաղի շուրջը: Սահմանների մասին օրենքը և օրենքի սահմանները» նյութը: Իրավաբանական գիտությունների դոկտոր Բ. Մ. Լազարևի և իրավաբանական գիտությունների թեկնածու Ի. Մուկսիմովի հետ զրույցի տեսքով ձևակերպված այդ հոդվածը բացահայտորեն հավակնում էր ստեղծված դրությանը «իրավաբանական մեկնաբանություններ տալ» և հիմնավորել միակողմանի և կանխակալ մոտեցումը հարցի լուծման որոնմանը: «Զրույցի» հեղինակները ամբողջովին լռության են մատնել ինքնորոշման մասին Ղարաբաղի ժողովրդի պահանջը և այդ օրինական պահանջը պաշտպանող ամբողջ հայ ժողովրդի դիրքավորումը: Նրանք մոռացել են ոչ միայն հարցի միջազգային-իրավական կողմը՝ ինքնորոշման իրավունքի կենսագործման վերաբերյալ ԽՍՀՄ պարտավորությունները, այլև անտեսել են ԽՍՀՄ սահմանադրության բազային դրույթը՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և առավել դեմոկրատական ու կարգավորված ձևով նրանում նախատեսված բնակչության կամքի դրսևորումը պլեբիսցիտի (հանրաքվեի) օգնությամբ, գործը ներկայացնելով այնպես, թե իբր ԽՍՀՄ սահմանադրությունը բացառում է դեմոկրատական ուղիով, բնակչության կամքի արտահայտության հիման վրա սոցիալիստական հանրապետությունների միջև սահմանների ճշտման ամեն մի հնարավորություն:

Ոչ խմբագրությունը, ոչ խորհրդային սահմանադրության հարգելի մեկնաբանները չեն ցանկացել տեսնել տարբերությունը մի պետության մյուսից տարածքային պահանջների, որ նկատի է առնված սահմանադրության 78 հոդվածում և իր բախտն ազատ լուծելու բնակչության անկապտելի իրավունքի միջև, որ ընկած է խորհրդային բազմազգ պետության հիմքում և ամրագրում է գտել Հիմնական օրենքի 70 հոդվածում: «Զրույցը» գիտակցաբար տարվել է կեղծ ուղիով. «Ենթադրենք կա երկու հանրապետություն, որոնցից մեկը իր կազմի մեջ ուզում է մտցնել երկրորդի տարածքը...»:

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 14:

ինչպես և պետք էր սպասել, պատասխանը հետևել է նույն այդ կեղծ ուղղությամբ. ոչ մի «միջնորդ դատարան» հնարավոր չէ, դաշինք կնքելով, հանրապետությունները պահպանել են տարածքի հաստատունության ինքնիշխան իրավունքը։ Եթե հանրապետությունը փոփոխություններ չի ուզում, ոչ ոք նրան չի կարող հարկադրել դրան, և այլն, և այլն։ Եվ դա ասվում էր ոչ թե ֆեոդալիզմի դարաշրջանում, երբ բնակչությունը դիտվում էր որպես հողի կցորդ, այլ մի ժամանակ, մեր երկրում, վերակառուցման դարաշրջանում, որը՝ որպես գլխավոր խնդիրներից մեկը, դրել է «վերածնել ամենամարդկային, ամենաարդար սոցիալիստական հասարակության լենինյան պրակտիկան»[1]։

Հանդեսի խմբագրությունը հնարավոր չհամարեց հրապարակայնության ոգով այդ տողերի հիղինակին առարկություններ հրապարակել ընդդեմ պրոբլեմի էության, բուն ԽՍՀՄ սահմանադրության աղավաղումների, ընդդեմ ինքնորոշման լենինյան կոնցեպցիայի ռևիզիայի։ Ի միջի այլոց, այդպիսի կանխակալություններ ու միակողմանիություն բնորոշ էին զանգվածային լրատվության խորհրդային բոլոր միջոցներին շատ սակավ բացառությամբ։ Նույնիսկ այն բանից հետո, երբ կենտրոնական մամուլում տպագրվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը ինքնորոշման վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի բնակչության պահանջը պաշտպանելու մասին և նույնիսկ ժողովրդական դեպուտատների համագումարում ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի ժողովրդական դեպուտատների ելույթներից հետո, երբ խորհրդային հասարակայնությանը վերջապես հայտնի դարձավ, որ պրոբլեմի էությունը հենց հայ ժողովրդի բռնությամբ անջատված մի մասի ինքնորոշման իրավունքի ճանաչման մեջ է, դրանից իրավաբանական եզրակացություններ չարվեցին և հարցի իրավաբանական կողմի կամա թե ակամա կեղծման հերքում չհետևեց։ Ինչպես առաջ, դեռևս չկան այնպիսի հրապարակումներ, որոնք համամիութենական մակարդակով վերականգնեին իրավաբանական ճշմարտությունը խորհրդային սահմանադրության 70 և 78 հոդվածների միջև հարաբերակցության ու փոխգործողության մասին։ Մեր երկրի, իսկ ինչ-որ չափով նաև համաշխարհային հասարակայնությանը, առաջվա պես ներշնչվում է այն միտքը, որ Ղարաբաղի պրոբլեմի լուծմանը խանգարում են բուն սահմանադրության մեջ եղած հակասությունները։ Այլ կերպ ասած, նույնիսկ հարցի զարգացման այդ փուլում ԼՂԻՄ-ի հայ բնակչության ինքնորոշման պահանջին կցում են պետությունների միջև սովորական տարածքային վեճերի չափանիշ։ Քանի որ սույն հրապարակման խնդիրը սահմանափակված է հարցի իրավական կողմով, այստեղ հարկ կլինի սահմանափակվել միայն այն բանի արձանագրմամբ, որ ոչ միայն հարցի զարգացման այժմյան փուլում, այլև 20-ական թվականների սկզբներին հայ ժողովրդի համար խոսքը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի ինքնորոշմանը։ Հարկավոր է նշել նաև այն, որ Հայկական ԽՍՀ-ն, լիովին պաշտպանելով Լեռնային Ղարաբաղի իր հայրենակիցների իրենց բախտի ազատ որոշման իրավունքը, չի պնդում վերամիավորումը, թեև դա բոլոր հայերի բնական ակնկալությունն է։ Հաշվի առնելով ստեղծված դրությունը, այն՝ ադրբեջանցիների հիվանդագին ռեակցիան և երկրի վերակառուցման շահերը, Հայկական ԽՍՀն համաձայնություն է արտահայտել փոխզիջողական լուծման, որը կապահովի Ղարաբաղի հայերի օրինական շահերը, նրանց ֆիզիկական անվտանգությունը և ազատ ազգային զարգացման հնարավորությունն անմիջականորեն Մոսկվայի մարզի պետական ենթակայության միջոցով (միութենական տարածքի ռեժիմ), այն պարտադիր պայմանով, որ դա ընդունելի լինի ԼՂԻՄ-ի բնակչության համար։

Սակայն բանն այն է, որ ուզածդ փոխզիջողական լուծումը հնարավոր է միայն ինքնորոշման սկզբունքային հիման վրա և, հետևաբար, ենթադրում է խորհրդային սահմանադրության հիշյալ երկու հոդվածների միջև այնպիսի հարաբերակցության ճանաչման անհրաժեշտությունը, որն սկզբունքորեն այլ բան չի կարող լինել, քան միջազգային իրավունքով սահմանված հարաբերակցությունը ինքնորոշման սկզբունքի, որը ենթադրում է բնակեցված տարածքի և, դրանով իսկ պետական սահմանի կարգավիճակի փոփոխության

[1] Принципы перестройки: революционность мышления и действий.— «Правда», 2 апреля 1988 г.

հնարավորություն ու պետության տարածքային ամբողջության սկզբունքի միջև, որը ենթադրում է ուրիշ պետությունների կողմից նրա սահմանների անխախտելիություն։

Հետևաբար ինքնորոշման իրավունքը մերժելու նպատակով ԽՍՀՄ սահմանադրության 78 հոդվածի վկայակոչման օրինաչափության կամ անօրինաչափության մասին հարցի իրավաբանորեն ճիշտ լուծման համար որպես խորհրդային հանրապետությունների ազգատարածքային սահմանազատման հիմք ընդհանրապես և տվյալ կոնկրետ դեպքում մասնավորապես հարկավոր է պարզորոշ պատկերացնել ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի և պետությունների տարածքային ամբողջության սկզբունքի միջև իրավական հարաբերակցությունն ու փոխգործողությունը։ Առանց այդ հարցի ճիշտ լուծման ինքնորոշումը չի կարող լինել ընդհանրապես իրավունքի նորմա։ Ու թեև այդ հարցը ծագում է ամենանգամ, երբ այս կամ այն պետությունը, մերժելով տարածքի բնակչության ինքնորոշման իրավունքը, ձգտում է կանխել անջատումը և, հետևաբար, պետական սահմանի փոփոխությունը բնակչության կամքին համապատասխան, այն միանշանակ լուծված է թե պետական իրավունքի տեսակետից, թե միջազգային իրավունքի տեսակետից։

Իրավունքի տեսակետից պետության տարածքային ամբողջության և նրա սահմանների անխախտելիության սկզբունքի հակադրումը ինքնորոշման իրավունքի սկզբունքին պարզապես անբարեզսպություն է, որովհետև այդ սկզբունքները, թեև սահմանակցվում են, իրավաբանորեն հակադրելի չեն. դրանցից յուրաքանչյուրին իրավական հարաբերությունների իր ոլորտում հատկացված է իր դերը։

Պետության տարածքային ամբողջության և նրա սահմանների անխախտելիության սկզբունքը արդի միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունքներից է, որը կոչված է ապահովելու խաղաղությունն ու կայունությունը միջպետական հարաբերություններում։ Նրա գործողությունն ամենից առաջ ուղղված է միջպետական հարաբերությունների ոլորտին և նպատակ ունի պաշտպանելու պետության տարածքն արտաքին ոտնձգությունից՝ միակողմանի տարածքային պահանջներից, որոնք չեն հիմնված միջազգային իրավունքի վրա և ներկայացված են միջազգային վեճերի խաղաղ կարգավորման համար սահմանված կարգի խախտումով։ Միջազգային հարաբերություններում նման ոտնձգությունը կարող է դիտվել նույնիսկ որպես ՄԱԿ-ի կանոնադրության խախտում, իսկ խորհրդային ֆեդերացիայի անդամների հարաբերություններում՝ որպես ֆեդերալ պետության սահմանադրության խախտում։

Միջազգային հարաբերությունների պրակտիկայում հաճախ տարաձայնություններ ու վեճեր են առաջանում անբնակ տարածքների որոշակի տեղամասերի պատկանելության մասին կամ սահմանի գծի դրության մասին (դելիմիտացիա և դեմարկացիա)։ Տարածքային վեճի տակ հասկացվում է «վեճի պարզորոշ արտահայտված և օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկայի վերաբերյալ կայուն ձև ստացած և ձևավորված տարաձայնությունների գոյությունը՝ սահմանի կամ որոշակի տարածքի նկատմամբ գերիշանության հարցի մասին Նորմայի գոյությունն ու կիրառումը»[1]։ Օրինակի համար, տարածքային վեճի առարկա կարող է լինել միջազգային պայմանագրի իրավական ուժը, որը դիտվում է որպես տարածքային տիրապետման իրավահիմք։ Օրինակ, այն դեպքում, երբ պետությունը յուրացրել է մյուս պետության տարածքը ոչ թե կամավոր զիջման հիման վրա, այլ երկրորդ պետության կամ երրորդ պետությունների համաձայնությամբ, ոչոնք անօրինում էին օտար տարածքը ի խախտումն միջազգային իրավունքի «nemo dat guod non habet» (ոչ ոք չի կարող տալ այն, ինչ չունի) կամ «nemo plus juris transferre potest guam ipse habet» (ոչ ոք չի կարող ավելի շատ իրավունք տալ, քան ինքն ունի)[2]։ Ի միջի այլոց, նշենք, որ նման հա-

[1] Клименко П. М., Порк А. А. Территория и граница СССР.— М.; Международные отношения, 1985, с. 231.

[2] Որպես միջազգային իրավունքի սկզբունք այն հաստատված է, մասնավորապես, Պալմաս կղզու մասին հայտնի գործով, որտեղ արբիթր Հուբերը նշել է. «Տիտղոսը, որ վկայակոչում են ԱՄՆ-ը որպես իրենց պահանջի անմիջական հիմք, ցեսսիան է, որն իրականացվեց Փարիզի պայմանագրով և որը այդ շրջանում Իսպանիային պատկանող գերիշանության բոլոր իրավունքները հանձնեց... Միանգամայն ակներև է, որ Իսպանիան չէր կարող ավելի շատ իրավունքներ տալ, քան այն, ինչ ինքն ուներ»։

մաձայնություններ տեղ էին գտել նաև ԽՍՀՄ պրակտիկայում և կապված էին Ստալինի անվան հետ։ Դա 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված խորհրդա-թուրքական պայմանագիրն է և ԽՍՀՄ-ի ու ֆաշիստական Գերմանիայի միջև 1939 թ. չհարձակման մասին պայմանագրի վերաբերյալ գաղտնի արձանագրությունը։

Տարածքային վեճերում ինքնորոշման իրավունքը կամ չի շոշափվում, կամ չի հանդիսանում տարածքային իրավունքների վիճարկման համար գլխավոր ու միակ հիմքը։ Իսկ անկախ ազգային պետության ստեղծման, արդեն գոյություն ունեցող ազգային պետության շրջանակներում իր ժողովրդի հետ միավորվելու կամ ուրիշ ժողովրդի հետ միանալու ճանապարհով ինքնորոշման հարցի դրվածքն ու լուծումը չեն դիտվում որպես տարածքային վեճ։

Այն ժամանակ, երբ որպես տարածքային վեճի սուբյեկտ կարող են հանդես գալ միայն միմյանց հետ որոշակի տարածություններում գերիշխանության իրականացումը վիճարկող պետությունները, ինքնորոշման իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում այն ժողովուրդները, որոնք պաշտպանում են իրենց բախտն, այդ թվում նաև իրենց տարածքի քաղաքական ու իրավական կարգավիճակը ազատորեն որոշելու իրենց անկապտելի և անկասելի իրավունքը։

Տարածքային վեճի ճանաչումը կապված է որոշակի տարածքի գոյության հետ, որի պետական պատկանելությունը իրավաբանորեն վերջնականապես չի սահմանված կամ վիճարկվում է, և խաղաղ միջոցներով անմիջականորեն շահագրգռված կողմերի համաձայնությամբ նրա կարգավորման պարտականության հետ։ Միջպետական վեճի ճանաչման իրավական հետևանքների հետ կապված հատուկ նշանակություն են ձեռք բերում նրա իրավաբանական գոյության պայմանները։ Սովորաբար փաստորեն գոյություն ունեցող դրության առավելություններով օգտվող պետությունները հակազդում են վեճի ճանաչմանը։ Մյուս կողմից՝ վեճի առկայության ուղղակի ճանաչումը կարող է սասանել միջազգային հարաբերությունների կայունությունը։ Այդ պարտավորություններն արտացոլում գտան այդ հարցի վերաբերյալ միջազգային դատարանի կարծիքում. «Բավական չէ, որ վիճելի գործում մի

կողմը հայտարարի, թե մյուս կողմի հետ վեճ գոյություն ունի։ Պարզ հայտարարությունը բավական չէ վեճի առկայության ապացուցման համար, այնպես, ինչպես պարզ ժխտումը բավական չէ ապացուցելու համար, թե նման վեճ գոյություն չունի»[1]։ Ակներև է, որ գոյություն ունեցող տարածքային իրադրության վիճարկման համար վճռականը ծանրակշիռ իրավական հիմքերի առկայությունն է։ Իսկ կողմերի համար միջպետական վեճի առկայության ճանաչման ապացույց կարող է ծառայել նրանց համաձայնությունը այն քննարկելու և լուծելու միջազգային որևէ մարմնում, իսկ պետությունների ֆեդերատիվ կամ կոնֆեդերատիվ միության դեպքում՝ կենտրոնական մարմնում։

Խաղաղության ու կայունության շահերը պահանջում են տարածքային վեճեր ծնող պատճառների վերացում։ Ուստի տարածքային վեճի ծագման դեպքում պետությունները պետք է ձգտեն խաղաղ միջոցներով դրանց կարգավորմանը միջազգային իրավունքի հիման վրա։ Միջազգային իրավունքի սկզբունքների մասին դեկլարացիայում, որ վերաբերում է բարեկամական հարաբերություններին և պետությունների միջև համագործակցությանը ՄԱԿ-ի կանոնադրությանը և Եվրոպայի անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության եզրափակիչ ակտին համապատասխան հաստատվում է, որ պետությունները պետք է բարեխղճորեն և համագործակցության ոգով ջանքեր գործադրեն «իրենց միջազգային վեճերի արագ ու արդարացի լուծման» ուղղությամբ։ Հետևաբար, պատկանելության մասին իրավական վեճի խաղաղ միջոցներով լուծման հարցի դրվածքն ինքնին տարածքային ամբողջության խախտում չի հանդիսանում։ Հենց նման տարածքային վեճերը նկատի ունեն ԽՍՀՄ սահմանադրության վերը հիշատակված 78 հոդվածի և միութենական հանրապետությունների համապատասխան հոդվածների դրույթները։ Դրանք պետք է վճռվեն կողմերի համաձայնությամբ և իշխանության կենտրոնական մարմինների կողմից։ Դրանք ակնհայտ դրույթներ են-

[1] International Court of Justice Report, Leiden 1962. p 328. Մեջբերումը ըստ՝ Клименко Б. М., Порк А. А. «Территория и граница СССР».— М., Международные отношения, 1985, с. 231.

և ոչ ոքի կողմից չեն վիճարկվել։ Բանն այն է, որ Լեռնային Ղարաբաղի և նման դեպքերում խոսքը վերաբերում է ոչ թե երկու պետությունների միջև տարածքային վեճերին, այլ բռնակցված և բռնությամբ պահվող մարդի ինքնորոշման իրավունքին և նրան, որ պետության տարածքային ամբողջության սկզբունքը չի կարող հակադրվել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին։ Ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարցը սենգափոխել հանրապետությունների միջև տարածքային վեճով և պետության տարածքային ամբողջության սկզբունքը հակադրել ժողովրդի ինքնորոշման իրավունքին կարելի է կամ իրավաբանական անգրագիտության պատճառով, կամ գիտակցաբար, ինքնորոշման օրինական պահանջի իրականացումը թույլ չտալու նպատակով, նախապես պատկերացնելով դրա ելքը։ Ղեկավարվելով հենց նման կարգի նկատառումներով, բռնակցում կատարած պետությունները փորձում են խուսափել ինքնորոշման հարցի դրվածքից, ամեն ինչ փոխադրելով սովորական տարածքային վեճի ոլորտը։

Ի տարբերություն պետությունների միջև հարաբերությունները կարգավորող տարածքային ամբողջության և սահմանների անխախտելիության սկզբունքի, ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ամենից առաջ կարգավորում է հարաբերությունները ժողովրդի, որպես տարածքային իրավունքների սկզբնական կրողի, և պետության միջև, որին նա պատգամում է իր իրավունքների իրականացումը։ Ուստի պետությունների տարածքային ամբողջության սկզբունքի նորմատիվ բովանդակության որոշումը հնարավոր է միայն ժողովրդի ինքնորոշման սկզբունքի շրջանակներում, որը պետության կողմից տարածքի տիրապետման ու տնօրինման բարձրագույն իրավական հիմք է ծառայում ինչպես միջազգային, այնպես էլ պետական իրավունքի մեջ։

Ժողովուրդների ինքնորոշման հաստատումը որպես միջազգային իրավունքի հիմնական հրամայական սկզբունք, որպես բնակեցված տարածքը պետության կողմից տիրելու և տնօրինելու բարձրագույն իրավական հիմք, միանգամայն նորովի է դրել տարածքի պետական պատկանելության որոշման գործում բնակչության դերի, իսկ հետևաբար, նաև պետության տարածքային ամբողջության, գոյություն ունեցող տարածքային ստատուս-քվոյի օրինականության և սահմանների անխախտելիության հարցը։ Ոչ մի չափով չժխտելով պետության տարածքային ամբողջության և սահմանների անխախտելիության բուն սկզբունքը, պահպանելով պետությունների տարածքը մյուս պետությունների ոտնձգություններից, միջազգային իրավունքը պետության տարածքի տիրապետման և տնօրինման համար որպես հիմք հաստատել է դրանց համապատասխանությունը բնակչության կողմից նրա ցանկություններին և համակրություններին»[1]։

Ինքնորոշման սկզբունքը ենթադրում է ժողովրդի քաղաքական կարգավիճակի փոփոխման հնարավորություն և օրինաչափություն, դրանով իսկ նրա բնակեցրած տարածքի պետական պատկանելության փոփոխության հնարավորություն ու օրինաչափություն։ Այդ հիման վրա օրինական են պետության այն սահմանների փոփոխությունները, որոնք հանդիսանում են բռնակցման հետևանք, խախտում են ժողովրդի ազգային անկախությունը, ազգային միասնությունը և տարածքային ամբողջությունը։

Այն տարածքները, որոնք միացված են կամ պահվում են

---

[1] Որպես օրինակներից մեկը կարելի կլիներ վկայակոչել միջազգային դատարանի կոնսուլտատիվ եզրակացությունը Արևմտյան Սահարայի գործի առթիվ։ Մասնավորապես Ալժիրն իր դիրքորոշումը դատարանով հաստատեց նրանով, որ ինքնորոշման գլխավոր սկզբունքը համապատասխան տարածքի ժողովրդի կամքը ուշադրության առնելու անհրաժեշտությունն է նրա ապագա քաղաքական կարգավիճակի վերաբերյալ և որ չի կարելի այնտեղ ապրող մարդկանց հետ վարվել, ինչպես անասունների հետ, և համարել նրանց տարածքի կցորդ։ Այդ կապակցությամբ նրա ներկայացուցիչ Մ. Բեջաուին ասաց. «Եթե որևէ տարածքի պատմական պատկանելությունը ինքնաբերաբար ազդել է նրա բնակչության ճակատագրի վրա, այսինքն, եթե բնակչության կարիքի հետ իր հետագա ճակատագրի վերաբերյալ հաշվի չեն նստել, ապա, հարց է ծագում, արժանապատվության տեսակետից ինչ տարբերություն գոյություն կունենար այդ մարդկանց և անասունների միջև, որոնք պետք է բաժանեն այն տարածքի ճակատագիրը, որտեղ նրանք գտնվում են»։ Տե՛ս ICJ, Reports of judgments, advisory opinions orders. Western Sahasa Advisory opinion of 16 October 1975։ Տե՛ս նույնպես՝ Հ. Արևշատ, «Современное международное право».

դրանց բնակչության կամքին հակառակ, չեն կարող դիտվել որպես ազատ ինքնորոշումը ժխտող կամ արգելակող պետության տարածքի բաղկացուցիչ մաս։ Ընդհակառակը, այդ և մյուս պետությունները պետք է հարգեն բոլոր ժողովուրդների ազգային տարածքի ամբողջության նրանց անկապտելի իրավունքը։ Ըստ բուն էության ինքնորոշման իրավունքի նրա սուբյեկտը ոչ միայն ամբողջությամբ վերցրած ժողովուրդն է, այլև նրա մասերն այն դեպքերում, երբ նրանք բռնությամբ միացվում են մյուս պետություններին, կամ պահվում են իրենց սահմաններում հակառակ բնակչության կամքի։ Դա կապված է այն բանի հետ, որ որպես ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի նպատակ ճանաչվում է օտարերկրյա ճնշման վերացումը ոչ միայն ամբողջ ժողովուրդների, այլև նրանց մասերի նկատմամբ։ Համապատասխանորեն ինքնորոշումն ու օտարերկրյա տիրապետության վերացումը կարող են դրսևորվել տարբեր ձևերով. ազգային պետության ստեղծման, իր ժողովուրդի անկախ մասի հետ միանալով կամ վերամիավորվելով։ Ինքնորոշման հատկապես այդ ձևն է նկատի առնվում, երբ հաստատվում է բոլոր ժողովուրդների տարածքային ամբողջության անկապտելի իրավունքը։ Մասնավորապես, յուրաքանչյուր ժողովրդի իր տարածքային ամբողջությունը պաշտպանելու իրավունքը ազատ ինքնորոշմամբ վերամիավորվելու միջոցով հստակորեն արտահայտված է գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին դեկլարացիայում։ Լուծելով ազգային ճնշում իրականացնող պետության տարածքային ամբողջության և ստրկացված ժողովրդի ազգատարածքային ամբողջության հարաբերության պրոբլեմը, այդ փաստաթուղթն ուղղակիորեն պարտավորեցնում է բոլոր պետություններին հարգել բոլոր ժողովուրդների «իրենց ազգային տարածքի ամբողջության» անկապտելի իրավունքը (Կ. 4)։ Նրանում հստակ ու միանշանակ հաստատվում է, որ «ամեն մի փորձ, որն ուղղված է այն բանին, որ մասամբ կամ ամբողջովին խախտի երկրի ազգային միասնությունն ու տարածքային ամբողջությունը, անհամատեղելի է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակների ու սկզբունքների հետ» (Կ. 6)։ Բուն պետությունների տարածքային ամբողջու-

թյունն այդ փաստաթղթում դիտվում է որպես ժողովրդի ինքնիշխան իրավունքի արտահայտություն (Կ. 7)։

Քանի որ ժողովուրդը՝ ինքնորոշման իրավունքի դեստինատորը, լուծելով իր կարգավիճակի հարցը, դրանով իսկ որոշում է նաև իր բնակեցրած տարածքի բախտը, իսկ հետևաբար՝ նաև պետական սահմանը, այդտեղ տարածքային ամբողջության սկզբունքը սահմանակցվում է ինքնորոշման իրավունքի հետ, բայց ոչ մի կերպ չի հակասում և չի նվազեցնում նրա ուժը, որովհետև պետության տարածքային ամբողջությունը ժողովրդի ինքնորոշման բարձրագույն իրավունքն է։

Ընդունելով, որ իրավաբանական պետությունը գործում է ժողովրդի անունից և որ նա տիրում ու տնօրինում է տարածքը ժողովրդի անունից և ի շահ տարածքը բնակեցնող ժողովրդի, հարկավոր է ընդունել նաև այն, որ նա իր տարածքային ամբողջության իրավունքը չի կարող հակադրել այդ տարածքի բնակչության ինքնորոշման իրավունքին։ Պետության տարածքային ամբողջությունը պետք է հիմնվի ժողովրդի ազատ ինքնորոշման վրա, այն դեպքում, երբ ինքնորոշման բուն իրավունքը ոչ մի կերպ չի կարող սահմանափակվել, կանգ առնել, կամ վերածվել պետության տարածքային ամբողջության կամ գոյություն ունեցող պետական սահմանների պահպանման նպատակով։

Ժողովրդի ինքնորոշման իրավունքի անկապտելիությունն ու անկասելիությունը կապված են այդ իրավունքի բուն էության, նրա բնավորության, բովանդակության ու իրավական բնույթի հետ։ Այդ իրավունքի սուբյեկտն ու դեստինատորը ժողովուրդն է։ Այն գոյություն ունի ժողովրդի հետ միասին և, հետևաբար, կախված չէ այս կամ այն պետության գոյությունից։ Վերջինս կարող է երևան գալ կամ չքանալ. նրա տեղը կարող է գալ ուրիշ պետություն, բայց ժողովուրդը միշտ կլինի ինքնորոշման իրավունքի կրողը։ Ուստի իր ոտքի տակ հող չունի ոչ միայն ինքնորոշման իրավունքի մերկ ժխտումն ընդհանրապես, այլև ինքնորոշումը որպես միայն միացման «իրավունք» ներկայացնելու փորձերը՝ առանց ապագայում այլընտրական լուծման հնարավորության։ Ինքնորոշման իրավունքի այդպիսի սահմանափակիչ մեկնաբա-

նության դեպքում նրա եզակի կամ միանվագ կիրառման իմաստով այն կնմանվի տրամվայի միաերթ տոմսի՝ համաձայնվեցիր օգտվել քո իրավունքից, դակեցիր մուտքի տոմսդ և կորցրիր դուրս գալու իրավունքդ։ Ինքնորոշման իրավունքի նման մեկնաբանությունը տրամագծորեն հակադիր է լենինյան կոնցեպցիային և ոչ մի հիմք չի գտնում ժամանակակից միջազգային իրավունքի նորմաներում։

Ժողովրդի ինքնորոշման սկզբունքի և պետության տարածքային ամբողջականության սկզբունքի միջև հարաբերակցության հարցին լենինյան մոտեցման հիմքում ընկած է միավորման, ինչպես նաև օտարազգի տարածքի պահումը որպես զավթում ու բռնություն դիտելու հստակ քաղաքաիրավական որակավորումը։ Լենինյան այդ մոտեցումը մասնավորապես շարադրված է նրա գրած Հաշտության մասին դեկրետում, որ ընդունվել է Խորհուրդների համառուսաստանյան II համագումարում։ Գործելով «ընդհանրապես դեմոկրատիայի իրավական գիտակցությանը և մասնավորապես աշխատավորական դասակարգին համապատասխան», խորհրդային պետությունը հենց իր առաջին միջազգային ակտում որպես բռնակցում որակեց ոչ միայն ամեն մի միացում, այլև օտարազգի մարզերի ամեն մի պահում առանց դրանց բնակեցրած ժողովուրդների «ստույգ, պարզ և կամավոր արտահայտված համաձայնության ու ցանկության», «անկախ այն բանից, թե այդ բռնի միացումը երբ է կատարվել»։ Եթե, դեկրետում ասվում է, որ երբ որևէ ազգ բռնությամբ է պահվում տվյալ պետության սահմաններում «հակառակ նրա արտահայտած ցանկության՝ միևնույնն է, արտահայտված է այդ ցանկությունը մամուլում արդյոք, թե ժողովրդական ժողովներում, կուսակցությունների որոշումների մեջ կամ ազգային ճնշման դեմ հուզումների և ապստամբությունների ձևով», եթե նրան իրավունք չի վերապահվում ազատ քվեարկությամբ «առանց փոքրագույն հարկադրման» լուծել իր ազգի պետական գոյության ձևերի հարցը, ապա այդպիսի միացումը հանդիսանում է զավթում ու բռնություն»[1]։

[1] Собрание узаконений и распоряжений Рабочего и Крестянского

ԽՍՀՄ պետական քաղաքականությունը միջազգային հարաբերությունների ասպարեզում և նրա սահմանադրական օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային ու պետական իրավունքի խորհրդային դոկտրինան միշտ ելել են ու ելնում են այն բանից, որ պետության տարածքային ամբողջությունը «պետք է հենվի բացառապես տվյալ պետությունը կազմող ազգերի ազատ կամավոր համաձայնության վրա»[1]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո խորհրդային պետությունը, ճանաչելով Ռուսաստանի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, նրանց անջատումը (այն դեպքերում, երբ դա տեղի էր ունենում) չէր դիտում որպես իր տարածքի ամբողջության խախտում որպես կայսրության տարածքային իրավունքների իրավաժառանգորդ։ Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքի և պետության տարածքային ամբողջության սկզբունքի միջև հարաբերակցության հարցի նրա ըմբռնումը կարելի է ցուցադրել Ֆինլանդիայի պետական անկախության ճանաչման օրինակով, որն առաջ մտնում էր Ռուսաստանի կայսրության կազմում և դիտվում էր որպես նրա տարածքի անբաժան մասը։ Չեղյալ հայտարարվեցին 1721 թվականի Նիշտադտի հաշտության պայմանագիրը և Ֆրիդրիխհամսի 1809 թվականի հաշտության պայմանագիրը, որոնցով Ռուսաստանը ձեռք էր բերել ֆիննական տարածքները։ Խորհրդային կառավարությունը ելնում էր այն բանից, որ եթե մենք ազգային ինքնորոշման դարաշրջանում բռնությամբ պահեինք Ֆինլանդիան, ապա դա, ինչպես գրել է Ստալինը, բնավ չէր նշանակի, որ մենք այն ձեռք ենք բերել[2]։

Խորհրդային Միությունը միջազգային ասպարեզում, ՄԱԿ-ի անդամ պետությունների հնշող մեծամասնության հետ, միշտ պաշտպանել է այն տեսակետը, որ ստրկացված ու կախյալ ժողովուրդների ինքնորոշման, ընդհուպ մինչև

Правительства, 1 декабря 1917 г., № 1. Отдел первый, с. 2, տե՛ս Վ. Ի. Լենին, Լիժ, հ. 35, էջ 14—15։

[1] Сперанская Л. В. Принцип самоопределения в международном праве. – М., Госюриздат, 1961, с. 100.

[2] Տե՛ս Ի. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 23 (ռուս.)։

անջատման, իրավունքի ճանաչումը ոչ մի կերպ չի խախտում այն պետությունների տարածքային ամբողջությունը, որոնց սահմանների մեջ էին մտցված այդ տարածքները։

Ինքնորոշման իրավունքի կասեցման կամ դադարեցման հնարավորության հարցի քաղաքականապես հետադիմական և իրավաբանորեն սնանկ դրվածքը հեշտությամբ հերքվում է իրավաբանական համապատասխան տեքստերում շարադրված նորմատիվային նյութի համադրության դեպքում։ Դրանք բոլորը ելնում են այդ իրավունքի անկապտելիությունից ու անկասելիությունից։ Միջազգային-իրավական մի շարք ակտերում ուղղակիորեն ասվում է, որ ժողովուրդը չի կարող զրկվել ինքնորոշման իր իրավունքից երբեք և ոչ մի պայմանով։ Այսպես, օրինակ, պետությունների միջև բարեկամական հարաբերություններին ու համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին դեկլարացիայում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը բնորոշվում է որպես «անկապտելի»։ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության եզրափակիչ ակտի տեքստում հանդիսավոր կերպով հաստատվում է, որ ժողովուրդները «միշտ» ինքնորոշման իրավունք ունեն։ Դրանից էլ ելնում էին խորհրդային բոլոր սահմանադրությունները, որոնք ընդունում են, որ խորհրդային հանրապետությունները ԽՍՀՄ-ի մեջ մտնելուց հետո էլ պաշտպանում են դուրս գալու իրավունքը։ Եթե այդ նորման գործում է միութենական հանրապետությունների իրավունքների նկատմամբ, ապա դա պետք է գործի նաև բուն հանրապետությունների պարտավորությունների նկատմամբ, նրանց կազմի մեջ մտնող այլազգի ինքնավար կազմավորումների վերաբերյալ։ Ակներև է, որ միութենական հանրապետությունները չեն կարող օգտվել տարածքային ամբողջության ավելի մեծ ծավալի իրավունքից, քան ինքը խորհրդային Միությունը։

Ազգերի ինքնորոշման իրավունքը, որպես միջազգային իրավունքի հրամայական նորմա, պետք է ճանաչվի միշտ և բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե երբ, ինչ հանգամանքներում և ինչի հիման վրա է տեղի ունեցել այն տա-

ածքի միավորումը, որի ժողովուրդը դնում է ինքնորոշման հարցը։

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի անկապտելիության ու անկասելիության հետ սերտորեն կապված է ինքնորոշման իրավունքին փաստորեն գոյություն ունեցող իրադրության համապատասխանության կանխավարկածը։ Ազգերի ինքնորոշման ճանաչումը որպես միջազգային իրավունքի հրամայական նորմա, ենթադրում է պետության կողմից իրականացվող տարածքային գլխավորության համապատասխանությունը ազգային ինքնորոշմանը մինչև այն ժամանակ, քանի դեռ ժողովուրդը համաձայնվում է գոյություն ունեցող տարածքային կարգավիճակի հետ։ Նման համապատասխանությունը պետությանը տարածքի տիրապետման ու տնօրինության իրավունք է տալիս նրա բնակեցրած ժողովրդի անունից։ Տարածքային գլխավորության համապատասխանությունը ժողովրդի ինքնիշխան կամքին, արդի միջազգային իրավունքի տեսակետից, ծառայում է տարածքային տիրապետման բարձրագույն իրավական հիմք։ Այնտեղ, ուր գոյություն ունեցող դրությունը չի համապատասխանում կամ արդեն չի համապատասխանում ինքնորոշման իրավունքին, երբ ժողովուրդը պահանջում է գոյություն ունեցող ստատուս-քվոյի փոփոխություններ ինքնորոշման իրավունքին համապատասխան, բոլոր իրավական հին տիտղոսները կորցնում են ամեն մի ուժ, և նման դեպքերում խոսում են իրավական հիմքից զրկված իշխանության փաստական իրականացման մասին։ Նման վիճակ է ստեղծվում անջատման օգտին ժողովրդի կամքի արտահայտության ժամանակվանից, երբ պետությունը կորցնում է տարածքային տիրապետման իրավական հիմքը, իսկ այն դեպքերում, երբ միացումը կատարվել է բռնությամբ և ժողովուրդը համաձայն չէ իրեն պարտադրված դրությանը, տարածքային տիրապետությունը պետք է հակաիրավական համարվի հենց սկզբից, իսկ բոլոր այն ակտերը, որոնցով «ձևակերպվել» է այդպիսի բռնակցումը, պետք է դիտվեն որպես իրավաբանորեն անպետք ու անվավեր ab initio։ Նշված դեպքերում անհրաժեշտություն է առաջանում գոյություն ունեցող սահմանները լիակատար համապատասխանության բերելու տարածքի բնակչության

կամքի արտահայտության հետ նրա ինքնորոշման անկապտելի և անկասելի իրավունքի հիման վրա։ Միայն այդ դեպքում պետական de facto սահմանները կարող են դառնալ de jure սահմաններ և ապահովվել պետության տարածքային ամբողջության սկզբունքով։

Ելնելով ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի և պետությունների տարածքային ամբողջության և նրա սահմանների անխախտելիության սկզբունքի միջև հարաբերակցության այդպիսի միակ հնարավոր ըմբռնումից, միջազգային-իրավական բոլոր ակտերում դրանք շարադրվում են զուգահեռաբար, լրացնելով, բայց չենթափոխելով միմյանց։ Պետությունների միջազգային համագործակցությունը չի դիտում այդ սկզբունքների գոյակցությունը որպես «փակուղի» կամ որպես միջազգային իրավունքի «ճգնաժամ»։

ՄԱԿ-ի կանոնադրությունը ոչ մի հակասություն, առավել ևս փակուղի չի տեսնում այն բանում, որ 1 հոդվածի 2 կետն անդամ երկրներից պահանջում է «զարգացնել ազգերի միջև բարեկամական հարաբերությունները ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքի հարգման հիման վրա», իսկ 2 հոդվածի 4 կետում արգելում է ուժի գործադրումը պետությունների տարածքային անձեռնմխելիության դեմ։ Հարաբերակցությունների այդպիսի ըմբռնումը զարգացած ու արձանագրված է ՄԱԿ-ի հովանու տակ ընդունված մի շարք ակտերում։

Նկատի ունենալով, որ ժամանակակից միջազգային իրավունքը ինքնորոշման իրավունքը դիտում է որպես միջազգային իրավունքի հրամայական նորմա, ճանաչում է ժողովուրդների մղած պայքարի օրինականությունը հանուն անկախության ու ազատ ինքնորոշման և իր այդ անկապտելի իրավունքի իրականացմանը ձգտող ժողովուրդներին աջակցություն ցույց տալու բոլոր պետությունների պարտականությունը, հանրաճանաչ է, որ այդ սկզբունքի իրականացմանն ուղղված գործողությունները չեն դիտվում և չեն կարող դիտվել որպես միջամտություն պետությունների ներքին գործերին։

Իսկ ինչ վերաբերվում է պրակտիկային, ապա ՄԱԿ-ի միշտ մերժել է առանձին պետությունների (հիմնականում գաղութատիրական տերությունների) փորձերը, որոնք վկայակոչելով Կանոնադրության 2 հոդվածի 7 կետը, երրորդ պետությունների կողմից ժողովուրդների ինքնորոշման իրավունքին աջակցելը ներկայացնում են որպես միջամտություն պետությունների ներքին իրավասության մեջ մտնող գործերին։ ՄԱԿ-ի այդ պրակտիկան այնքան միանշանակ է, որ նույնիսկ գաղութատիրական տերությունների դոկտրինան ներկայացնող հեղինակները նշում են, որ «ինքնորոշման սկզբունքը ճանաչվում է իրավաբանական սկզբունք, և Միավորված ազգերի կազմակերպության մարմինները թույլ չեն տալիս Կանոնադրության 2 հոդվածի 7 կետի կիրառությունը քննարկմանն ու որոշումների ընդունմանը խոչընդոտելու նպատակով, երբ քննարկման առարկա է հանդիսանում տրվյալ սկզբունքը»[1]։

Միջազգային իրավունքի այն սկզբունքների մասին դեկլարացիան, որոնք վերաբերում են պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը, ելնելով ազգային միասնության ու ոչ միայն պետությունների, այլև երկրների տարածքային ամբողջության հարգման անհրաժեշտությունից, ուղղակի արձանագրում է, որ պետությունների տարածքային ամբողջությունը պետք է հիմնվի ժողովուրդների ինքնորոշման վրա և, հետևաբար, ժողովուրդների կողմից ինքնորոշման իրավունքի իրականացումը չի կարող դիտվել որպես մասնատում կամ մասնակի կամ լրիվ ինքնիշխան ու անկախ պետությունների տարածքային ամբողջության կամ քաղաքական միասնության խախտում։

Ժամանակակից միջազգային իրավունքում ժողովուրդների ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջության միջև հարաբերակցության այդպիսի միակ հնարավոր ըմբռնումն ամրագրված է նաև Եվրոպայի անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության եզրափակիչ ակտում։ Այն սկզբունքների դեկլարացիայում, որոնցով ղեկավարվելու են մասնակից պետությունները փոխադարձ հարաբերություններում, մասնանշվում է, որ

[1] Броунли Я. Международное право.— Изд-во «Прогресс», М., 1977, ст. 297.

նրանք «կհարգեն իրենց բախտը տնօրինելու ժողովուրդների իրավահավասարությունն ու իրավունքը, մշտապես գործելով ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների ու սկզբունքների և միջազգային իրավունքի համապատասխան ակտերի համաձայն, ներառյալ այնպիսիք, որոնք վերաբերում են պետությունների տարածքային ամբողջությանը»:

Բերված միջազգային-իրավական ակտերից հետևում է, որ, գործող իրավունքի ուժով, այն դեպքերում, երբ տարածքային տեղաշարժման հարցը և, համապատասխանաբար, սահմանների փոփոխությունը հանդիսանում է այդ տարածքի բնակչության կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման հետևանք, պետությունը չի կարող վկայակոչել ինքնիշխանությունը, տարածքային ամբողջությունը և իր ներքին գործերին չմիջամտելը որպես իր կողմից ազատ ինքնորոշման արդյունքները չճանաչելու հիմնավորում: Քանի որ յուրաքանչյուր ժողովրդի անկապտելի և անկասելի ինքնորոշման իրավունքը հանդիսանում է տարածքի տիրապետման ու տնօրինման բարձրագույն իրավական հիմք, ապա ակներև է, որ պետության ինքնիշխանությունը և նրա տարածքային ամբողջությունը չեն կարող հակադրվել ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքին: Ընդհակառակը, պետության տարածքային ամբողջությունը պետք է հիմնվի տվյալ պետության կազմում մյուս ժողովրդի բացարձակորեն կամավոր մուտքի, ինչպես նաև ազատ կամքի հիման վրա գալու անկապտելի իրավունքի վրա: Ուստի ժողովրդի կողմից իր ինքնորոշման իրավունքի իրականացումը, ինչպես նաև նրանցույց տրվելիք աջակցությունը դիտվում է ոչ թե որպես պետության տարածքային միասնության ու ամբողջության խախտում, այլ որպես փաստորեն գոյություն ունեցող դրությունը իրավունքի պահանջներին համապատասխանեցում: Քանի որ ինքնորոշման սկզբունքը բոլոր պետությունների համար հանդիսանում է միջազգային իրավունքի հրամայական նորմա, և քանի որ նրանցից յուրաքանչյուրը ոչ միայն ինքն է պարտավոր պահպանել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, այլև օգնել հանուն ինքնորոշման, հանուն ազգային ճնշումից ազատագրվելու համար պայքարող ժողովուրդներին, ապա ակներև է, որ ինքնորոշման համար պայքարող

ժողովրդին աջակցությունը չի կարելի ներկայացնել որպես միջամտություն ժողովրդի ինքնորոշման իրավունքը ժխտող պետության գործերին:

Ո՛չ ժողովուրդների ինքնորոշման իրավունքին, ո՛չ պետության տարածքային ամբողջության ու նրա սահմանների անխախտելիության սկզբունքին չի կարող տարբեր, իսկ առավել ևս՝ ուղղակի հակադիր իմաստ տրվել իրավունքների երկու համակարգերում՝ միջազգային իրավունքում և առանձին պետությունների սահմանադրական իրավունքում: Դրանից հետևում է, որ և այդ սկզբունքների միջև միջազգային իրավունքում սահմանված հարաբերակցությունը պետք է ճանաչվի նաև ներպետական իրավունքի մեջ: Ուստի, եթե հիմնվենք ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի և պետության տարածքային ամբողջության սկզբունքի նորմատիվ բովանդակության վրա, ապա անխուսափելիորեն ստիպված կլինենք ընդունել, որ իրավաբանական իմաստով այդ սկզբունքների միջև և, հետևաբար, ԽՍՀՄ սահմանադրության 70 և 78 հոդվածների միջև տարաձայնություն պարզապես չկա և չի կարող լինել: ԽՍՀՄ սահմանադրության 78 հոդվածը, ինչպես և միջազգային իրավունքում տարածքային ամբողջության սկզբունքը, ապահովում է խորհրդային հանրապետությունների տարածքային ամբողջությունը մյուս հանրապետությունների կողմից միակողմանի ոտնձգություններից, բայց ոչ մի դեպքում չի կարող բացառել սահմանների փոփոխության հնարավորությունը բուն բնակչության կամքի արտահայտությամբ ազատ ինքնորոշման իրավունքի՝ ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ խորհրդային սահմանադրական իրավունքի հիմնական սկզբունքի հիման վրա:

ԽՍՀՄ սահմանադրության դրույթները ինքնորոշման իրավունքի մասին կարող են և պետք է մեկնաբանվեն միայն այն առումով, որ տարածքի բնակչության կամքը հանդիսանում է այն տիրապետելու և տնօրինելու բարձրագույն իրավական հիմք, ուստի և միութենական հանրապետությունների տարածքային ամբողջության սկզբունքը, որ արտահայտված է ԽՍՀՄ սահմանադրության 78 հոդվածում և հանրապետությունների համապատասխան հոդվածներում, չի

կարող նրանց կողմից հակադրվել ինքնորոշվող տարածքի ինքնորոշվող բնակչության կամքի արտահայտությանը: Հետևաբար, ոչ մի հիմք չկա խոսելու ԽՍՀՄ-ում սահմանադրական ճգնաժամի մասին, Ղարաբաղի հարցի փակուղային իրադրության մասին: Կա միայն քաղաքական ճգնաժամ, որ կապված է բռնակցված մարզի բնակչության ինքնորոշման օրինական իրավունքը կողմերից մեկի ճանաչել չցանկանալու հետ: Այդ երկու հոդվածների դրույթների անհամատեղելիության և նույնիսկ անհաշտելիության մասին խոսակցությունները հարկավոր են միայն նրանց, ովքեր ամեն գնով ուզում են կանխել սկզբունքային ու օբյեկտիվ հիման վրա Ղարաբաղի հարցի դեմոկրատական լուծումը՝ ԽՍՀՄ սահմանադրությանը և միջազգային իրավունքի հանրաճանաչ համապարփակ նորմաների վրա հիմնված նրա միջազգային պարտավորություններին համապատասխան:

ԽՍՀՄ սահմանադրությանը և նրա միջազգային պարտավորություններին համապատասխան Ադրբեջանական ԽՍՀ-ն իրավաբանորեն պարտավոր է հայ ժողովրդի մի մասին՝ ԼՂԻՄ-ի բնակչությանը, որ բռնությամբ պահվում է այդ հանրապետության կազմում, վերապահել ազատորեն որոշելու մարզի կարգավիճակը ինքնորոշման անկապտելի ու անկասելի իրավունքի հիման վրա, իսկ միութենական կառավարությունը և միութենական մյուս բոլոր հանրապետությունների կառավարությունները հայ ժողովրդին ամեն տեսակ և միակատար աջակցություն ցույց տան իրենց իրավունքի իրականացման գործում:

Լեռնային Ղարաբաղի անջատումը Ադրբեջանական ԽՍՀ-ից ոչ մի կերպ չի կարող դիտվել որպես Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքային ամբողջության խախտում, բայց նրան ինքնորոշման իրավունքի վերապահումը մերժելը կարող է և պետք է դիտվի որպես հայ ժողովրդի տարածքային ամբողջության խախտում: Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքի մերժումը, նրան բռնությամբ Ադրբեջանական ԽՍՀ կազմում պահելը կնշանակեր. բռնակցումը լենինյան բնորոշմանը լիակատար համապատասխանություն, այսինքն՝ զավթում ու բռնություն, և դրանով իսկ

ԽՍՀՄ սահմանադրության և միջազգային պարտավորությունների կոպիտ խախտում: Առավել ընդհանուր պլանով սոցիալիստական մեծ տերության հիմնական օրենքի մեկնաբանությունը ԽՍՀՄ առանձին միութենական հանրապետություններում ինքնավար կազմավորումներ կազմող ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի ժխտման կամ սահմանափակման առումով կնշանակեր նրանց իրավահավասարության խախտում: Մեր սահմանադրության այդպիսի իրավաբանորեն անօրինաչափ մեկնաբանությունը կհանգեցներ հակադեմոկրատական, իրավունքի տեսակետից հակատրամաբանական, տարօրինակ իրադրության, երբ, մի ժողովրդի թույլ տալով դուրս գալու ԽՍՀՄ կազմից, ԽՍՀՄ սահմանադրությունը կբացառեր մյուս ժողովուրդների համար միութենական հանրապետության կարգավիճակ ստանալու կամ միութենական մի հանրապետությունից մյուսի կազմի մեջ անցնելու հնարավորությունը, օրինակ, միասնական խորհրդային սոցիալիստական պետականության շրջանակներում վերամիավորվելու նպատակով:

ԽՍՀՄ-ի ներսում գոյություն ունեցող տարածքային ստատուս-քվոն «հավերժացնելու» և խորհրդային հանրապետություններում առանձին ժողովուրդների վերամիավորման իրավունքը և ինքնորոշման հիման վրա իր տարածքի կարգավիճակի այլ փոփոխությունների ժխտման հակավերակառուցողական ուժերի փորձերը կներկայացնեին որպես բացահայտ ոտնձգություն խորհրդային բազմազգ պետության բուն հիմքերի դեմ: Դրանք ամբողջ աշխարհում կգնահատվեին որպես միջազգային ու պետական իրավունքի հիմնական սկզբունքների ու նորմաների խախտում, և մասնավորապես, մարդու հիմնական իրավունքների ու ժողովուրդների իրավունքների անտեսում: Այդպիսի գործողություններն անուղղելի հարված կհասցնեին քաղաքականության հանդեպ իրավունքի առաջնության Մ. Ս. Գորբաչովի հռչակած սկզբունքին, վիթխարի վնաս կհասցնեին ԽՍՀՄ-ի որպես իրավական, ծագող միջազգային պրոբլեմների դեմոկրատական լուծման ջատագով պետության միջազգային հեղինակությանը:

4. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ» ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐՎԱԿ Է

Ընդհանուր համապարփակ նորմայի՝ ինքնորոշման իրավունքի գործնական կիրառումը երկրի կամ մարզի այս կամ այն ժողովրդի նկատմամբ անխուսափելիորեն համապատասխանեցվում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող պայմանների, կարիքների ու առանձնահատկությունների հետ։ Այդ հանգամանքների հաշվառումը պետք է ուղղված լինի այդ իրավունքի հնարավոր առավել լիակատար իրացմանը, բայց ոչ մի դեպքում նրա սահմանափակմանը կամ փաստական վերացմանը։

Չնայած այն բանին, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ունի իրավունքի հանրաճանաչ համապարփակ հրամայական նորմայի ուժ, այն իրացնել թույլ չտալու փորձեր եղել են առաջ, կան նաև այժմ։ Այն փաստարկների թվում, որոնք առաջ են քաշվում նախկինում կատարված բռնակցումները «հիմնավորելու» և բռնության զոհ դարձած ժողովուրդների ինքնորոշումը թույլ չտալու նպատակով, հաճախ պնդում են, թե ինքնորոշման հետևանքով կարող են խախտվել գոյություն ունեցող տնտեսական կապերը, կտուժեն այն պետության տնտեսական շահերը, որից ձգտում է անջատվել օտարազգի մարզը։ Այդ «շահերը» (իրական թե կարծեցյալ) օբյեկտիվ գործոնի քողի տակ հակադրվում են ժողովրդի կամքի արտահայտությանը։ Պատմությունից հայտնի է, որ նման փաստարկներով իմպերիալիստական տերությունները արդարացնում էին շատ ժողովուրդների ստրկացումը, հիմնավորում էին համաշխարհային տիրապետության իրենց նկրտումները։ Վերհիշենք, թե Հիտլերը «կենսական տարածության» նվաճման քաղաքականության իր հիմնավորման մեջ ինչ դեր էր հատկացնում տնտեսական «շահերին»։ Նույնը կարելի է ասել նաև գաղութային տերությունների զավթամոլության վերաբերյալ. տնտեսական նպատակահարմարության կամ ինքնորոշման անհնարինության ապացուցման նրանց փորձերը նպատակ ունեին արդարացնել օտար մարզերի բռնակցումը։

Ափսոսանքի է արժանի, որ այսօր, երբ վերակառուցման

պրոցեսում ծագել է միջազգային հարաբերությունների լենինյան նորմաների վերականգնման անհրաժեշտությունը, իրենց ստեղծած ինքնորոշման կոնցեպցիան ռևիզիայի ենթարկելու փորձեր են արվում՝ վկայակոչելով տնտեսական գործոնի դերը։ Ընդ որում գիտական կոմունիզմի նախահորը վերագրում են այսրոպեական քաղաքական նկատառումներով ծնված ինքնահնարանք։

Վ. Ի. Լենինի տեսական ժառանգության հետ կամայական վերաբերմունք է տեղի ունեցել հենց իր ստեղծած թերթի՝ ԽՄԿԿ կենտրոնական օրգանի էջերում։ Ավելին, տնտեսական նկատառումների որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հակակշիռ օգտագործելու փորձեր էին արվում նաև հանրապետական և ոչ հանրապետական մասշտաբի որոշ գործիչներ։ Միևնույն ժամանակ անտեսվում էին հեղինակավոր տնտեսագետների՝ այնպիսի աշխարհաճանաչ մասնագետների կարծիքը, ինչպիսին է, օրինակ, ակադեմիկոս Ա. Գ. Աղամբեկյանը, որը հանգել էր ուղղակի հակադիր եզրակացության. «Որպես մասնագետ, հետաքրքրություն եմ հանդես բերում հարցի տնտեսական տեսակետի նկատմամբ ն, իմ վերլուծության համաձայն, տնտեսական տեսակետից Ղարաբաղը Հայաստանին ավելի մոտ է, քան Ադրբեջանին, այլ ոչ ընդհակառակը։ Ես այդ մասին նամակ եմ գրել կառավարությանը և, իհարկե, դա իմ խորհուրդն է որպես գիտնականի...»[1]։

Ուշադրության չեն առնվել նաև խոշոր տնտեսագետ ակադեմիկոս Տ. Ս. Խաչատուրովի և մյուս մասնագետների երաշխավորությունները, որոնք Մոսկվայից ուղարկված էին Լեռնային Ղարաբաղի դրությունը տեղում ուսումնասիրելու համար։

Տնտեսական գործոնի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարաբերակցության հարցին հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել։ Հարկավոր է գլուխ հանել այն բանից, ինչ իրոք ասում էր Վ. Ի. Լենինը։

Դիմելով Վ.Ի. Լենինի աշխատություններին՝ հեշտությամբ կարելի է նկատել, որ անբարեխիղճ մեկնաբանները լենին-

[1] «Masis» (Los Angeles) December 5, 1987.

յան մտքերը շարադրում են ոչ լրիվ, բաց թողնելով այն դրույթները, որոնցում հստակ ու որոշակի, պարզորոշությամբ, ոչ մի կասկած չթողնելով, հաստատվում է տրամագծորեն հակառակն այն բանի, որ նրանք փորձում են վերագրել նրան։ Վ. Ի. Լենինը ուղղակի գրում է, որ այսպես կոչված տնտեսական նկատառումները ոչ մի առնչություն չունեն ինքնորոշման իրավունքի հետ, երբ խոսքը վերաբերում է օտարազգի պետության շրջանակներում ժողովրդին բռնի պահելուն։ Նա դատապարտում էր ու ծաղրում ինքնորոշման իրավունքի բովանդակության բնորոշման նկատմամբ նման պարզունակ մոտեցումը, այն անվանելով «էկոնոմիզմ» և «մարքսիզմի ծաղրանկար». «Հին էկոնոմիստները» մարքսիզմը ծաղրանկար դարձնելով, բանվորներին սովորեցնում էին, թե մարքսիստների համար կարևորը «միայն» «տնտեսականն» է։ Նոր «էկոնոմիստները» կամ կարծում են, որ հաղթանակած սոցիալիզմի դեմոկրատական պետությունը գոյություն է ունենալու առանց սահմանների (առանց մատերիայի «զգայությունների կոմպլեքսի» նման մի բան), կամ էլ, որ սահմանները որոշվելու են «միայն» արտադրության պահանջմունքներով։ Իրականում այդ սահմանները որոշվելու են դեմոկրատորեն, այսինքն՝ համաձայն բնակչության կամքի ու «հակումների»[1]։

Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ «բռնակցումների տնտեսական առաջադիմությունը» ապացուցել փորձողների իսկական նպատակն այն է, որ խուսափեն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պահպանման անհրաժեշտությունից։ Ամենավճռական ձևով պնդելով բնակչության կամքին ու համակրություններին լիակատար համապատասխանությամբ դեմոկրատական սոցիալիստական պետության սահմանների հաստատման անհրաժեշտությունը և ժխտելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքին տնտեսական նկատառումների հակադրման օրինաչափությունը, Վ. Ի. Լենինը ազգային սահմանները որոշելիս տնտեսական գործոնի դերի գնահատմանը մոտենում էր սկզբունքորեն այլ, հիրավի պատմական մա-

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 26։

տերիալիզմի մարքսիստական դիրքերից, որոնք պատշաճ կերպով հաշվի են առնում տնտեսական գործոնի ազդեցությունը ազգային շահերի ձևավորման և դրանց միջոցով՝ ժողովուրդների ազգային կամքի ձևավորման վրա։ Ըստ Լենինի, ինքնորոշման ձգտող ազգի բուն կամքը ձևավորվում է բազիսային, այդ թվում նաև այնպիսի երևույթների ներգործության տակ, ինչպիսիք են տարածքի բուն բնակչության իսկական տնտեսական շահերը։ Ու թեև չկա ու չի կարող լինել բացարձակ համապատասխանություն տնտեսական շահերի և իր քաղաքական ու տարածքային կարգավիճակի վերաբերյալ ազգի կամքի միջև, այն ամբողջովին վերցրած արտացոլում է նրա իրական տնտեսական շահերը։

Վ. Ի. Լենինը ուղղակի ասում էր, որ ազատագրական շարժումների օբյեկտիվ հիմք եղել և մնում են տնտեսական գործոնները։ Հետևաբար, տնտեսական այդ գործոնների հաշվառումը բերում է ուղղակի հակադիր արդյունքների, քան կուզենային հին և նոր «էկոնոմիստները»։ Ուսումնասիրելով այդ ազգային պետությունների ստեղծման ձգտում ծնող «հզոր տնտեսական գործոնների» գործողությունը, Վ. Ի. Լենինը եզրակացություն է անում, որ «ազգերի ինքնորոշումը» մարքսիստների ծրագրում չի կարող պատմատնտեսական տեսակետից այլ նշանակություն ունենալ, բացի որպես քաղաքական ինքնորոշում, պետական ինքնուրույնություն, ազգային պետության գոյացում»[1]։

Քննարկելով «որքան հնարավոր է բնակչության ազգային կազմի ավելի մեծ միասնությունը» որպես տնտեսական այն գործոններից մեկը, որը պետք է հաշվի առնվի ինչպես միջազգային սահմանների հաստատման, այնպես էլ բազմազգ պետությունների վարչական բաժանումների ժամանակ, Վ. Ի. Լենինը պարզաբանում էր, որ «ազգությունը, լեզվի նույնությունը կարևոր գործոն են ներքին շուկայի լիակատար նվաճման և տնտեսական շրջանառության լիակատար ապահովության համար»[2]։

Գալով այն եզրակացության, որ «բնակչության միասնա-

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 25, էջ 311։
[2] Նույն տեղը, Երկ, հ. 34, էջ 183։

կան ազգային կազմը ամենահաստատուն գործոններից մեկն է ազատ, լայն, իսկապես ժամանակակից, առևտրական շրջանառության համար»[1], Վ. Ի. Լենինը պաշտպանում էր ժողովուրդների տարածքային ամբողջությունը, բողոքում էր ազգային առումով հավաք տարածքների կոտորակման դեմ ոչ միայն պետական սահմաններ անցկացնելիս, այլև երկրի վարչատարածքային բաժանման ժամանակ։ Մերկացնելով էթնիկապես հավաք տարածքների կոտորակման և դրանք թվական գերազանցությամբ իշխող ազգի հետ վարչական միավորներին միավորելու քաղաքականությունը՝ նա բացահայտում էր դրա ճնշիչ էությունը. «Ինչո՞ւ էր հարկավոր վերցնել ողջ Սուվալկիի նահանգը, որոշելով լիտվացիների թիվն իբրև նրա բնակչության 52%, և ոչ թե այդ նահանգի լիտվական գավառները, այսինքն՝ 7 գավառից 5-ը, որոնց մեջ լիտվացիները կազմում են բնակչության 72%-ը»[2]։

Հաստատագրելով օբյեկտիվ գործոնների գործողությունը էթնիկապես ազգային տարածքների միասնության ուղղությամբ և պահանջելով «պաշտոնական-բյուրոկրատական վարչական բաժանումների» փոխարինում իսկապես ժամանակակից, «իսկապես ոչ թե արքունիքի, ոչ թե բյուրոկրատիայի, ոչ թե հնամոլության պահանջներին համապատասխան»[3], Վ. Ի. Լենինը գտնում էր, որ այդ են պահանջում տնտեսական զարգացման օրինաչափությունները ոչ միայն կապիտալիստական, այլև սոցիալիստական հասարակությունում։

Բացահայտելով տարածքի ազգային կազմի նշանակությունը որպես «տնտեսական կարևորագույն գործոններից մեկը», որը պետք է ուշադրության առնվի ազգային-պետական կամ ազգային-վարչական սահմանազատման ժամանակ, Վ. Ի. Լենինը միաժամանակ գտնում էր, որ այդ «ոչ միակն է և ոչ կարևորագույնը մյուսների թվում»[4]։

Վ. Ի. Լենինը ուշադրություն էր դարձնում այն բանին, որ

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 34, էջ 185։

[2] Նույն տեղը, էջ 183։

[3] Նույն տեղը, էջ 183։

[4] Նույն տեղը, Երկ, հ. 24, էջ 185։

Ռուսաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում, քաղաքները հաճախ ազգային խայտաբղետ կազմով տարբերվում են իրենց ձգտող մարզերից։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ նման դեպքերում «ազգային» մոմենտի պատճառով քաղաքները կտրել տնտեսապես իրենց ձգտող գյուղերից ու օկրուգներից՝ անհեթեթ ու անհնարին է» և «ուստի՝ մարքսիստները չպետք է ամբողջապես ու բացառապես պաշտպանեն «ազգային տերիտորիալիստական» «սկզբունքը»[1]։ Երբեմն տնտեսական շահերը կարող են բացառության կարգով, բայց ոչ որպես ընդհանուր կանոն, պահանջել, որ պահպանվեն այլազգի քաղաքների գոյություն ունեցող կապերը, նրանց հարող գյուղական շրջանների հետ, առավել ևս, որ ժամանակին այդպիսի քաղաքները հաճախ վերականգնում են իրենց ազգային կերպարանքը։

Նշելով ազգային շահերի ձևավորման տնտեսական տարբեր գործոնների առկայությունը՝ Վ. Ի. Լենինը հնարավոր չէր համարում հաստատել նրանց միջև ինչ-որ մեկընդմիշտ տրված ստորակարգության հարաբերակցություններ, դրանք հակադրել միմյանց, իսկ առավել ևս դրանք առանձին կամ ամբողջությամբ վերցրած հակադրել այն ժողովրդի կամքին, որը պաշտպանում է ինքնորոշման իր անկապտելի իրավունքը, միայն օտարազգի մարզի ժողովուրդն ինքը կարող է որոքը, թե ընդհանրապես պետք է արդյոք, իսկ եթե պետք է, ապա ինչ չափով և տնտեսական այդ և այլ գործոններից շեղել։ Բնակորոնք ուշադրության առնել ինքնորոշման ժամանակ. «Բնակչության ազգային կազմն այստեղ դրված է մյուս պայմանների կողքին (առաջին հերթին տնտեսական, ապա կենցաղային և այլն), որոնք պիտի հիմք ծառայեն դծելու այնպիսի տալիզմին և ոչ թե կազմոնշչինային ու ասիականությանը։ Միայն տեղական բնակչությունն է, որ կարող է լիովին ճշգրիտ «հաշվի առնել» այդ բոլոր պայմանները...»[2]։

Վ. Ի. Լենինը ուղղակի և միանշանակ բացառում էր ժողովուրդների ինքնորոշման իրավունքին որևէ տնտեսական

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24 (ընդգծումը մերն է— Յ. Գ.).

[2] Նույն տեղը, էջ 186.

փաստարկի հակադրման հնարավորությունը. «Տնտեսական անհնարինության իմաստով խոսել ինքնորոշման անիրագործելիության մասին արմատապես սխալ է»[1]։

Բոլոր նրանց, ովքեր այսօր փորձում են խոչընդոտել ժողովուրդների՝ մասնավորապես Լեռնային Ղարաբաղի, ինքնորոշմանը նրա իրականացման «տնտեսական անհնարինության» մասին խոսակցություններով, ուղղված են հետևյալ խոսքերը. «Ինչի՞ համար է ազգային կեղեքումը վերացնելու տնտեսական նախադրյալների մասին այս դատողությունը, նախադրյալներ, որոնք վաղուց ի վեր հայտնի են ու անվիճելի, երբ վեճը քաղաքական ճնշման ձևերից մեկի մասին է, այն է՝ մի ազգ բռնի կերպով մի այլ ազգի պետության սահմաններում պահելու մասին։ Չէ որ սա պարզապես քաղաքական հարցերից խուսափելու փորձ է»[2]։

Լենինյան դիրքորոշումը բացատրվում է ոչ միայն համաշեմոկրատական նորմայի նկատմամբ ունեցած հարգանքով, այլև զուտ տնտեսական նկատառումներով՝ այն բանի ըմբռնումով, որ միայն ժողովրդի ինքնորոշումն է ընդունակ ապահովելու տնտեսապես հիմնավորված սահմաններ. «Տնտեսական միավորումը շահում է դեմոկրատիզմից, անջատման ազատությունից»[3]։ Այլ կերպ ասած, ինքնորոշումը ոչ միայն չի հակասում տնտեսական զարգացման շահերին, այլ՝ ընդհակառակը, հանդիսանում է նրա նախադրյալը։

Զարգացման օբյեկտիվ օրենքների իմացությունը և ժողովրդի իմաստունության նկատմամբ խոր հավատը Վ. Ի. Լենինին թույլ են տվել սպառիչ եզրակացություն անել, որ տնտեսական շահերի ճիշտ գնահատականը ինքնորոշման ժամանակ կտա ինքը ժողովուրդը. «Բնակչության զանգվածները ամենօրյա փորձով հիանալիորեն գիտեն աշխարհագրական ու տնտեսական կապերի նշանակությունը, խոշոր շուկայի և խոշոր պետության առավելությունները, և անջատման նրանք կհամաձայնվեն միայն այն ժամանակ, երբ ազգային ճնշումն ու ազգային բախումները բոլորովին անտանելի են դարձնում համատեղ ապրելը, արգելակում են բոլոր և ամեն տեսակ տնտեսական հարաբերությունները»[1]։

Գրավելով հստակ սկզբունքային դիրք, որը բացառում է օտարազգի մարզերը «տնտեսական անհնարինության» պատրվակով բռնի պահելու հնարավորությունը, Վ. Ի. Լենինը նախազգուշացնում էր այն մարդկանց նենգություններից, ովքեր ձգտում են իրենց բռնակցական նպատակներին իրենց զոհի բարօրության մասին կեղծ հոգացությամբ, օտար ժողովուրդներին անկոչ «երջանկացում» պարտադրելով»[2]։

Այսօր այդ նախազգուշացումը շատ հրատապ է։ Արդի միջազգային հարաբերությունների պայմաններում բռնակցումների կողմնակիցներն արդեն չեն կարող արդարացնել օտար հողերի զավթումները «կենսական տարածության» նվաճման ցինիկորեն բացահայտ նպատակներով։ Գործելով ավելի նրբորեն, նրանք իրենց իսկական մտադրությունները քողարկում են ժողովրդի բարօրության մասին, հումանիզացման և նույնիսկ ինտերնացիոնալիզմի մասին խոսակցություններով։ Բայց այդ կեղծ խորամանկությունն արդեն ոչ ոքի չի կարող խաբել։ Ժողովուրդները գիտեն, որ միայն ինքնորոշման իրավունքը կարող է ապահովել իրենց քաղաքական ու տնտեսական շահերը։ Եթե նրանք, ովքեր բռնությամբ պահում են օտարազգի մարզերը, իրոք հոգ են տանում դրանց բնակչության երջանկության մասին, ապա պետք է ընտրության ազատություն տան նրանց։ Տնտեսական կապերի կարևորության և ինքնորոշման հետևանքով դրանց վերակողմնորոշման գնահատման իրավունքը պատկանում է ժողովրդին։ Միայն նա կարող է ճշտորեն որոշել, թե ինչն է համապատասխանում, ինչը չի համապատասխանում իր շահերին։ Չի կարելի խոսել դեմոկրատիայի և ընտրության իրավունքի մասին և միաժամանակ ժողովրդին մերժել ճիշտ ընտրություն կատարելու հնարավորությունը։

Ինքնորոշման լենինյան կոնցեպցիան ելնում է այն բանից, որ «ինքնորոշման տնտեսական անհնարինության» մասի փաստարկները նույնպիսի են «բռնակցման տնտեսական

1 Վ. Ի. Լենին, հ. 30, էջ 111։
2 Նույն տեղը, էջ 23։
3 Նույն տեղը, հ. 27, էջ 538։

1 Վ. Ի. Լենին, ելմ, հ. 25, էջ 345—346։
2 Նույն տեղը, հ. 30, էջ 61։

արդարացման» հետ։ Դրանք միևնույն մեդալի երկու կողմերն են։ Լիովին հաշվի առնելով տնտեսական զարգացման պահանջները՝ ինքնորոշման իրավունքին լենինյան մոտեցումը թույլ չի տալիս տարածքային բռնակցումների «հիմնավորումներ», վկայակոչելով որևէ մեկի տնտեսական շահերը։ «Ոչ մարքսիստների մոտեցումը,— գրել է Վ. Ի. Լենինը,— այն է, որ «ինքնավար ու ավտոնոմ մարզերի սահմանները» պետք է որոշել «իր իսկ տեղական բնակչության կողմից տնտեսական ու կենցաղային պայմանների, բնակչության ազգային կազմի և այլնի հաշվառման հիման վրա»[1]։

Մնում է պատասխանել հետևյալ հարցին. կիրառելի՞ է արդյոք ինքնորոշման հիման վրա սոցիալիստական պետությունների ազգատարածքային սահմանազատման նկատմամբ տնտեսական գործոնի նշանակության ըմբռնումը։ Հարցի այդպիսի դրվածքի մտացածինությունն արդեն հետևում է այն բանից, որ Վ. Ի. Լենինը, մշակելով ինքնորոշման իր կոնցեպցիան, միշտ ելել է սոցիալիստական պետությունների ժողովուրդների միջև հարաբերությունների նկատմամբ նրա կիրառության անհրաժեշտությունից, այն բանից, որ դրա վրա պետք է կառուցվեն խորհրդային ֆեդերացիայում միավորված ժողովուրդների հարաբերությունները։ Լենինյան մոտեցման իրավացիությունը հաստատվում է ինչպես միջազգային պրակտիկայով, այնպես էլ ԽՍՀՄ-ում ազգատարածքային սահմանազատման փոփոխությունների պրակտիկայով։

Հիշեցնենք, որ միայն վերջին տարիներս նոր պետությունների թիվն աշխարհում եռապատկվել է։ Տարածքային շատ տեղաշարժեր են տեղի ունեցել ինչպես հետպատերազմյան խաղաղ կարգավորման, այնպես էլ բազմադարյան գաղութային համակարգի փլուզման հետևանքով։ Դա տնտեսական վնասակար հետևանքներ չի առաջացրել, այլ, ընդհակառակը, նպաստել է տնտեսական զարգացմանը։ Ազատագրված երկրների գոյություն ունեցող պրոբլեմները կապված են ոչ թե նախկին կայսրությունների նրանց անջատման, այլ անցյալ կախվածության վերապրուկների հետ։ Իսկ ինչ վերաբերում է բուն մետրոպոլիաներին (Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային և այլն), որոնք ստիպված էին հրաժարվել նախկին գաղութային տիրույթներից, ինչպես նաև իմպերիալիստական այն տերություններին, որոնք կորցրել են իրենց «կենսական տարածությունները» (Գերմանիա, Ճապոնիա), ապա նրանք, չնայած իրենց իշխանության սահմանների խիստ կրճատմանը, այժմ դասվում են տնտեսապես առավել հաջողակների թվին։

Եթե ժողովուրդների ինքնորոշման «տնտեսական անկախության» վկայակոչումները սնանկ դուրս եկան տարածքների անջատման կամ դրանց մի պետության կազմից մյուսին անցման դեպքերում, երբ այդպիսի հետևանքները կարող են առավելաչափ լինել, առավել ևս ակներև է ստեղծված տնտեսական կապերի որպես ազատ ինքնորոշման համար խոչընդոտի վկայակոչումների սնանկությունը այն դեպքերում, երբ տարածքային տեղաշարժերը տեղի են ունենում սոցիալ-տնտեսական և քաղաքական առումով միատարր սոցիալիստական պետությունների միջև, որոնց միջև սահմանները ոչ թե պետք է բաժանեն, այլ միացնեն ժողովուրդներին։ Էլ ավելի քիչ հիմք կա խոսելու ինքնորոշման տնտեսական հետևանքների մասին միասնական սոցիալիստական ֆեդերատիվ պետության շրջանակներում, երբ թե՛ ինքնորոշվող մարզը, թե՛ այն հանրապետությունը, որից նա կուզենար անջատվել, թե՛ այն հանրապետությունը, որին նա կուզենար միանալ, ընկած են միասնական պետական տարածքում։ Նրանց միջև չկան անփոփոխելի, անանցանելի սահմաններ։ Նրանք բոլորը զարգանում են ժողովրդատնտեսական ընդհանուր պլանի համապատասխան, միացած են միասնական տրանսպորտային համակարգով, հանդիսանում են միևնույն տնտեսական համակարգի մասերը։

Խորհրդային մի հանրապետությունից մյուսին տարածքների բազմաթիվ հանձնումների ունեցած պրակտիկան ԽՍՀՄ շրջանակներում և մի շարք անկլավների՝ խորհրդային մի հանրապետության տարածքի մասերը մյուսի տարածքով

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 49։ Տե՛ս նույնպես ՌՍԴԲԿ կենտկոմի՝ կուսակցական աշխատողների հետ 1913 թվականի ամառվա խորհրդակցության բանաձևը ազգային հարցի վերաբերյալ (նույն տեղը, էջ 71—75)։

լրիվ շրջապատվածության առկայությունը, հաստատում են, որ խորհրդային հանրապետությունների միջև սահմանների փոփոխությունները չեն ծնել և չէին էլ կարող ծնել քիչ թե շատ լուրջ, անհաղթահարելի բացասական հետևանքներ։ Մյուս հանրապետությունների հետ տնտեսական կապերը պահպանվել են, կատարելագործվել ու ամրապնդվել, այն ժամանակ, երբ հանրապետությունների տարածքները համախմբվել են, որը նպաստել է նրանց տնտեսական զարգացմանը։

Այժմ ԽՍՀՄ-ում իրականացվող վերակառուցումը, ազատելով մարդկանց տնտեսական հարաբերությունների վարչաբյուրոկրատական կաշկանդվածությունից, էլ ավելի մեծ հնարավորություններ է բացում ինքնորոշվող մարզերի, անմիջականորեն շահագրգռված հարևան հանրապետությունների և ամբողջությամբ վերցրած Միության շահերի նկատմամբ գոյություն ունեցող կապերի ճկուն հարմարեցման համար։ Դա, իր հերթին, տնտեսական շահերի տեսակետից բարենպաստ պայմաններ է ստեղծել հրապարակայնության և դեմոկրատիայի շնորհիվ երևան եկած Ղարաբաղի և նման հարցերի ինքնորոշման սկզբունքին լրիվ համապատասխանությամբ անհիվանդագին լուծելու համար։

Հասկանալով ԽՍՀՄ-ի շրջանակներում «ինքնորոշման տնտեսական անհնարինության» վկայակոչման անհիմնությունն ու անհամոզչությունը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հակառակորդները հատուկ շեշտ էին դնում այդ օտարազգի մարզի անկլավային դրության վրա։ Անկլավի աշխարհագրական դրությունը վկայակոչում են որպես այն բանի ապացույց, թե նա չի կարող տնտեսական կապեր ունենալ Հայկական ԽՍՀ-ի հետ։ Զափազանցություն չի լինի ասել, որ դա այսօր հիմնական կամ գլխավոր փաստարկն է ԼՂԻՄ-ի հայերին ինքնորոշման և իր ժողովրդի հետ միավորվելու իրավունք վերապահելու դեմ։ Այսպես, «Նովոյե վրեմյա» շաբաթաթերթի խմբագրությունում արդեն հիշատակված «զրույցի» երկու մասնակիցներից մեկը Լեռնային Ղարաբաղի իրադրության առանձնահատկությունը տեսնում էր այն բանում, որ նա «ուղղակի սահմանակից չէ» Հայաստանի տարածքի հետ և «պատմականորեն ամուր կերպով ինտեգրացվել է» Ադրբեջանի տնտեսական համակարգում։

Իրոք, ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ից անջատված է Ադրբեջանական ԽՍՀ-ի հողի 5—10 կմ լայնությամբ մի նեղ շերտով։ Դա, սակայն, բնավ «պատմական» փաստ չէ։ Զգտելով Լեռնային Ղարաբաղը պոկել Հայկական ԽՍՀ-ից, Նարիմանովը և ուրիշ ադրբեջանցիներ շրջահայացորեն մարզի սահմանները ձևեցին այնպես, որպեսզի զրկեին նրան Հայկական ԽՍՀ-ի հետ ընդհանուր սահմանից։ Նույնիսկ զուտ տեսողականորեն կարելի է համոզվել, որ այդ արհեստական պատնեշը յուրատեսակ «սանիտարական կորդոն» է, ստեղծված հատկապես նրա համար, որ խախտվեին երկրի երկու մասերի բազմադարյան բնական կապերը։ Ամենքին պարզ է, որ հողի նեղ շերտը, որ երկու մասի է բաժանում հավաք կերպով հայ ժողովրդով բնակեցված Հայաստանի տարածքը, չի կարող լինել ոչ այլ ինչ, քան հենց հայկական հող։

Նման եզրակացության համար հարկ չկա նույնիսկ վկայակոչելու Հայաստանի պատմությունը, պարզ տրամաբանությունը բավական է։ Սակայն այժմ խոսքն այն մասին չէ, թե որքանով է հիմնավորված և օրինաչափ հայկական տարածքի նման քմահաճ վերաձևումը, այլ հայկական բնակչության ինքնորոշման «տնտեսական անհնարինության» ապացուցման համար մարզի անկլավային դրության վկայակոչման սնանկության մասին։

Ուզղակի ասենք, որ ինքնորոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորման հնարավորությունը ժխտելու փորձերը անպետք միջոցներով հանրաքվեի կատարել է, որովհետև կապված է ուղղակի խաբեության հետ. այն փաստի գիտակցորեն թաքցնելը, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում Լեռնային Ղարաբաղից ոչ հեռու կա հայկական անկլավ՝ Բաշքենդը, որ Հայկական ԽՍՀ-ի մասն է կազմում, իսկ վերջինիս կազմում կա ամբողջ 4 (չորս) անկլավ, այդ թվում նաև Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը։ Նա Ադրբեջանից բաժանված է հենց նույն այն լեռներով, որոնցով «բաժանված» է Ղարաբաղը Հայաստանից, և, «Նովոյե վրեմյայի» խմբագրությունում զրույցի մասնակիցների խոսքերով ասած, նույնպես «ուղղակի սահմանակից» չէ Ադրբեջանի տարածքի հետ։

Մատնանշենք նաև այն, որ ԽՍՀՄ-ում կան նաև այլ՝ համանման դրության մեջ գտնվող չափերով ավելի մեծ տարածքներ։ Օրինակ, ինչպե՞ս բացատրել Կալինինգրադի մարզի կապերը ՌԽՖՍՀ-ի հետ, որը բաժանված է Լիտվայի տարածքով։ Ուրեմն, խորհրդային պետականության պայմաններում անկլավի դրությունը ոչ մի կերպ արգելք չի հանդիսանում Հայկական ԽՍՀ-ի հետ տնտեսական նորմալ կապեր իրականացնելու համար, քանի որ թե՛ Ադրբեջանական ԽՍՀ-ն, թե՛ Հայկական ԽՍՀ-ն, թե՛ ԼՂԻՄ-ը տեղ են բռնել խորհրդային տարածքում։

Ի միջի այլոց, անկլավների դրությունը չի խանգարում քաղաքական, տնտեսական և այլ կապերին նույնիսկ ուրիշ պետության տարածքով շրջապատված լինելու պայմաններում։ Աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ անկլավներից կարելի է բերել իսպանական Լիվիա քաղաքը Ֆրանսիայի տարածքում, բելգիական անկլավները՝ Բաուլե-Նասաուն և Բաուլե-Խորտոգը Նիդեռլանդների տարածքում, Նիդեռլանդական անկլավը բելգիական Անտվերպեն դեպարտամենտում։ Շվեյցարական կոնֆեդերացիայի տարածքում տեղ բռնած ԳՖՀ-ի Բյուզինգեն և իտալական Կամպիոնե-դ'Իտալիա անկլավները։

Այդ բոլոր դեպքերում կապի, մասնավորապես մուտքի պրոբլեմներ չեն առաջանում. շահագրգռված կողմերի միջև հարցերը լուծվում են պայմանագրային կարգով։ Գոյություն ունեն նաև միջազգային կոնվենցիաներ, որոնք կարգավորում են օտարերկրյա տարածքների միջով տարանցության իրավունքների իրականացումը։

Վիրավորական չէ՞ արդյոք անկլավային դրության վկայակոչումը որպես անհաղթահարելի խոչընդոտ միասնական ժողովրդի երկու մասերի կապի համար ԽՍՀՄ միասնական պետական տարածքի վրա սոցիալիստական քաղաքակրթության պայմաններում։ Եվ ինչպե՞ս կոչել ու ինչո՞վ բացատրել այդ կրկնակի ստանդարտը. ադրբեջանական անկլավները Հայաստանում Ադրբեջանի հետ տնտեսական կապերի համար արգելք չեն, իսկ հայկականներն Ադրբեջանական ԽՍՀ-ում խոչընդոտ են։ Ինչպես ասում են, նման դեպքերում մեկնաբանություններն ավելորդ են։

Ադրբեջանական իշխանությունների գիտությամբ և մեղսակցությամբ հաստատված ԼՂԻՄ-ի խայտառակ շրջափակումը՝ պետավտոտեսչության պահակակետերով, ավտոմոբիլային ճանապարհների արգելքներով, կամուրջների պայթեցումով, քանդված երկաթուղագծերով, քարերի նետումով, վարորդների սպանություններով, ուղևորներին ծեծելով ու թալանելով, ամենահամոզիչ կերպով հաստատում են Ադրբեջանական ԽՍՀ տնտեսական համակարգում մարզի այսպես կոչված «ինտեգրացվածության» ամբողջ կեղծիքը։ Ինքնորոշման իրավունքի ժխտումը նրա «տնտեսական անհնարինության» պատրվակով, ինչպես և պետք էր սպասել, հասցրեց տնտեսական շրջափակման ու բռնության աստիճանական ծավալման։

5. ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆ Է

Իմպերիալիստական գաղութատիրական պետությունների բռնակցական պրակտիկայում հաճախ տեղի են ունեցել ժողովուրդների ինքնորոշմանը հակազդեցության դեպքեր այն պատրվակով, թե այդ իրավունքի իրացումը կարող է հանգեցնել հարաբերությունների սրման և բախումնավտանգ իրադրության առաջացման։ Պարզ է, որ այդ ամենաբարձր չափով սուբյեկտիվ մոտեցումը կողմնորոշված է այն երկրի շահերին, որը շահագրգռված է իր համար ձեռնտու տարածքային ստատուս-քվոն պահպանելու գործում։ Շովինիզմը, օտար տարածքը պահպանելու ձգտումը նման դեպքերում սովորաբար հրամցվում է կայունացման, ժողովուրդների խաղաղության ու բարեկամության մասին հոգատարության փոխարեն, անգամ այն ժողովուրդների «բարօրության» մասին հոգատարության փոխարեն, որին մերժում են նրա օրինական ու անկապտելի իրավունքը։

Դժվար է հավատալ, բայց փաստը մնում է փաստ, որ ինքնորոշման գաղափարի նկատմամբ նման մոտեցում արտա-

հայտվել է նաև Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի կապակցությամբ։ Այսպես, օրինակ, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որպես ինքնորոշման հիման վրա մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ հանձնելու մասին ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների խորհրդի խնդրանքի մերժման համար պնդում էր, որ հայ բնակչության խնդրանքի իրացումը «չէր համապատասխանի մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապնդման խնդիրներին»։ Այդ առթիվ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Բ. Թաթլիևի հրապարակած հաղորդման մեջ անցկացվում էր այն միտքը, թե ԼՂԻՄ-ի ինքնորոշման հարցի դրվածքը վնաս է հասցնում ժողովուրդների բարեկամությանը. «Լեռնային Ղարաբաղի հանձնման մասին հարցի բուն դրվածքն արդեն լուրջ վնաս է հասցրել ադրբեջանական ու հայ ժողովուրդների միասնությանն ու համախմբմանը, ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական բարեկամությանը...»։

Քանի որ խոսքը վերաբերում է այն սահմանադրական սկզբունքին, որի վրա կառուցված է ԽՍՀՄ-ը, և միջազգային իրավունքի համապարփակ հրամայական նորմային, ծագում է ինքնորոշման իրավունքի և նրա կիրարկման քաղաքական հետևանքների միջև հարաբերակցության որոշման բնական անհրաժեշտությունը։ Կարո՞ղ է արդյոք ինքնորոշման իրավունքը խոչընդոտ լինել խաղաղությանն ու բարեկամական հարաբերություններին, որի նպատակն այն է, որ ծառայի որպես օբյեկտիվ հիմք տարածքային սուր և բարդ հարցերի դեմոկրատական և արդարացի լուծման, բացառի բռնությունների ու բռնակցումների հնարավորությունը։ Չէ որ խոսքը վերաբերում է իրավունքի նորմայի միևնույն մասշտաբի կիրարկմանը նրա բոլոր սուբյեկտների նկատմամբ։ Դրանում է դրսևորվում սուբյեկտիվիզմն ու կանխակալությունը, ուստի և վիրավորանքի բուն հնարավորությունը բացառող ինքնորոշման իրավունքի օբյեկտիվությունն ու արդարացիությունը։

Մարդկության ամբողջ փորձը խոսում է այն մասին, որ ինքնորոշման իրավունքի իրականացումը չի կարող և չպետք է դիտվի որպես ժողովուրդների միջև և պետությունների միջև խաղաղության ու բարեկամական հարաբերությունների ար-

գելք։ Ընդհակառակը, հենց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ժխտումը, այն օտար մարզերը պահելու ձգտումը, որոնք բնակեցված են մյուս ազգության ժողովրդով, միշտ հասցրել է ընդհարումների, ձգձգվող վեճերի, արյունահեղ պատերազմների։ Ուստի, ապացուցելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հետևողական իրականացման անհրաժեշտությունը, Վ. Ի. Լենինը մերկացնում էր բռնակցության դատապաշտպանների հայտնապես կեղծ, փարիսեցիական «փաստարկումը», ցույց տալիս, որ բախումների ու վեճերի դադարեցումը, այլ է տանում ոչ թե ինքնորոշման իրավունքի իրացումը, այլ նրա ոտնահարումը։ Դատապարտելով, «քաշել և բաց չթողնել» քաղաքականության կողմնակիցների կիրարկելիք բռնությունը, Վ. Ի. Լենինը հիշեցնում էր, «թե այդպիսի մեղմասած... «ջարդակերպ» գործողությունների է հաճախ հանգեցրել գործնականում այդ «վաղեմի իրավունքի» կիրառումը»[1]։ Նա համոզիչ ցույց է տվել, որ «օտար մարզի» հատկապես բռնակցումը, բռնի միացումը և պահումը ժողովուրդների միջև անդունդ է ստեղծում, տանում է դեպի կոնֆլիկտներ ու պատերազմներ[2]։

Վ. Ի. Լենինը հատկապես պնդում էր ժողովուրդների ինքնորոշման իրավունքին նման մոտեցումը՝ խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ազգատարածքային սահմանազատմամբ հանդերձ։ Նա մատնանշում էր, որ այդ նպատակով ինքնորոշման իրավունքին դիմելը ոչ միայն չի կարող և չպետք է դիտվի որպես բարդությունների ու վեճերի աղբյուր, այլ, ընդհակառակը, պետք է դիտվի որպես նրանց մերձեցման, նրանց բարեկամության, նրանց դաշինքի նախադրյալ։ Վ. Ի. Լենինը ելնում էր այն բանից, որ ինքնորոշման իրավունքի ճանաչումը նվազեցնում է պետությունների կազմալուծման վտանգը, ապահովում է սահմանազատված հանրապետությունների հետագա մերձեցումը։ «Այս բազայի վրա, իր հերթին, գործնականորեն կծավալվի ազգային ամենափոքր բախումների, ազգային ամենափոքր անվստահու-

---

1 Վ. Ի. Լենին, երկ, հ. 24, էջ 303։ Տե՛ս նույնպես հ. 25, էջ 340։

2 Նույն տեղը, հ. 30, էջ 39։

թյան բացարձակ վերացումը, կստեղծվի ազգերի ավելի արագ մերձեցում և միաձուլում...»[1]։

Զարմանալի ոչինչ չկա, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի գնահատումը որպես խաղաղության և ժողովուրդների միջև ու պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման նախադրյալ ու անհրաժեշտ պայման, համընդհանուր ճանաչում է գտել։ Ինքնորոշման սկզբունքի նշանակությունը որպես ժողովուրդների միջև և պետությունների միջև խաղաղության ու բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործոն՝ ժամանակակից միջազգային հարաբերությունների հանրաճանաչ ու բազային կանխադրույթ է և որպես այդպիսին արձանագրված է միջազգային իրավական մի շարք կարևորագույն ակտերում, ներառյալ նաև ՄԱԿ-ի բուն կանոնադրությունը։

Ինքնորոշման իրավունքի սկզբունքի և ժողովուրդների ու պետությունների բարեկամական հարաբերությունների միջև ներքին, օբյեկտիվ կապն արտացոլված է ՄԱԿ-ի կանոնադրությունում. 1 հոդվածի 2 կետում ինքնորոշումն անվանված է որպես ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների նախադրյալ համընդհանուր խաղաղության ամրապնդման ընդհանուր համատեքստում։ Կանոնադրության հեղինակներն ուղղակի ելել են այն բանից, որ ինքնորոշման իրավունքը «հանդիսանում է համընդհանուր խաղաղության ամրապնդման միջոցներից մեկը»[2]։ Ինքնորոշման որպես անհրաժեշտ պայմանի, որպես ազգերի միջև խաղաղ ու բարեկամական հարաբերությունների հիմքի նույնպիսի ըմբռնում է արտացոլված կանոնադրության 55 հոդվածում։ Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պահպանման կապը միջազգային վեճերի ու պատերազմների կանխման, միջազգային խաղաղության պահպանման հետ ուղղակիորեն նշում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952 թ. փետրվարի 5-ի 545 (VI) բանաձևը։ Հաստատելով այն հանգամանքը,

---

1 Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 30, էջ 27—28։

2 Documents of the United Nations Conference on International Organization, Vol. *VI*, p. *703—704*, p. *455* (Dok. *1/1/A)19; 1/1/34(1)*.

որ «այդ իրավունքի խախտումը անցյալում հասցրել է արյունահեղությունների ու պատերազմների և դիտվում է որպես մշտական վտանգ խաղաղության համար», ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ասում է բոլոր ժողովուրդների քաղաքական սպասելիքների հետ պատշաճ կերպով հաշվի նստելու անհրաժեշտության մասին, այդպիսով նպաստելով միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, և զարգացնելու ազգերի միջև բարեկամական այն հարաբերությունները, որոնք հիմնված են ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի և նրանց ինքնորոշման իրավունքի ճանաչման վրա։

«Ժողովուրդների և ազգերի ինքնորոշման միջազգային հարգանքի վերաբերյալ երաշխավորություններում», որ ընդունվել են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1957 թվականի դեկտեմբերի 11-ին (բանաձև 1188 (XII)), կրկին արձանագրվում էր, որ ինքնորոշման իրավունքի նկատմամբ արհամարհանքը «խարխլում է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ նշված երկրների միջև բարեկամական հարաբերությունների հիմքը»։ Նշելով, որ «նման դրությունը հակասում է ՄԱԿ-ի նպատակներին ու սկզբունքներին», Գլխավոր ասամբլեան հաստատեց այն բանի անհրաժեշտությունը, որ «ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին համապատասխան Կազմակերպության անդամ պետություններն իրենց փոխհարաբերություններում պատշաճորեն հարգեին ինքնորոշման իրավունքը»։

Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին դեկլարացիան, նշելով, որ կախյալ ժողովուրդների ազատության մերժումը կամ ազատության ճանապարհին խոչընդոտների ստեղծումը ուժեղացնում է համընդհանուր խաղաղության համար իրենից լուրջ սպառնալիք ներկայացնող վեճերը, մատնանշելի է «բոլոր ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքների հարգման հիման վրա կայունության ու բարեկեցության և խաղաղ ու բարեկամական հարաբերությունների և մարդու իրավունքների ու բոլորի համար հիմնական ազատությունների համընդհանուր հարգման ու պահպանման պայմանների ստեղծման...» անհրաժեշտությունը։

Պետությունների միջև ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան բարեկամական հարաբերություններին ու համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին դեկլարացիան մատնանշում է ինչպես ազգային ճնշման կամ ստրկացման ձևով ինքնորոշման խախտման կործանարար հետևանքները, այնպես էլ այն դրական դերը, որը կոչված է խաղալու ինքնորոշման սկզբունքը նորմալ հարաբերությունների պահպանման կամ վերականգնման համար։ Նշելով, որ «օտարերկրյա լծին, տիրապետությանը և շահագործմանը, ժողովուրդների ենթարկումը լուրջ արգելք է հանդիսանում միջազգային խաղաղության ու անվտանգության հաստատման ճանապարհին», դեկլարացիան ուղղակի մատնանշում է, որ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի «արդյունավետ կիրառումը առաջնակարգ նշանակություն ունի պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանն աջակցելու համար»։

Միջազգային հարաբերությունների պրակտիկան, ինչպես և ունեցած նորմատիվ նյութը, հաստատում են, որ թե՛ քաղաքական տեսակետից, թե՛ իրավաբանական տեսակետից ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հանդիսանում է ժողովուրդների միջև և պետությունների միջև խաղաղության ու բարեկամական հարաբերությունների նախադրյալ ու անհրաժեշտ պայման։

Քանի որ ռեալ իրականության մեջ ինքնորոշման հարցը և դրա հետ կապված օտարազգի պետությունից անջատվելու պոտենցիալ հնարավորությունը հաճախ շովինիստական տարրերի կողմից օգտագործվում է թշնամանքի սրման համար, պետությունների միջազգային համագործակցությունը հատուկ ուշադրություն է դարձնում մյուս ժողովուրդների իրավունքի նկատմամբ հարգանք սերմանելուն։ Այսօր բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի լրիվ և անվերապահ ճանաչման ոգով ինտերնացիոնալ դաստիարակության պարտականությունը վերածվել է վարքի միջազգային իրավական նորմայի։ Ելնելով այն բանից, որ ժողովուրդների մերձեցումը հնարավոր է միայն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և մարդու հիմնական իրավունքների հարգման

հիման վրա, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան երիտասարդության շրջանում խաղաղության գաղափարների տարածման, ժողովուրդների միջև փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման մասին բանաձևում ձևակերպել է մի սկզբունք, որը հռչակում է, թե երիտասարդությունը պետք է դաստիարակվի «մարդու հիմնական իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգման ոգով» (բանաձև 2037 (XX), 1965 թ. դեկտեմբերի 7)։

Միջազգային այդ կարգադրագիրը համահնչյուն է լենինյան այն ցուցումին, որ զանգվածների ինտերնացիոնալ դաստիարակությունը հնարավոր չէ առանց օտար սահմաններում բռնությամբ պահվող ազգերի ազատ անջատման քարոզի[1]։

Մեր բազմազգ պետության համար լենինյան այդ ցուցումը հատուկ նշանակություն ունի այն պայմաններում, երբ միջազգային հարաբերությունների վերակառուցումը, սոցիալիստական կամայականության հետևանքների մաքրումը հրամայաբար բախում են դուռը։ Մենք մեզ կզրկենք դեմոկրատիայի և օրինականության մասին, վերակառուցման, նոր մտածողության և իրավական պետության մասին խոսելու բարոյական իրավունքից, եթե այսուհետև էլ թույլ տանք, որ Խորհրդային Միության շրջանակներում ինքնորոշման բնական ու օրինական խնդրանքին պատասխանեն «անկանխատեսելի հետևանքների», «հազարավոր սումգայիթների», «հավերժական Սումգայիթի» կամ շրջափակման սպառնալիքներով։ Հետևողական ինտերնացիոնալիզմից դեպի աննշան հանրապետական շովինիզմի ու բռնակցման կողմը ամեն մի հեռացում, Խորհրդային Միության սահմաններում եղբայրական խորհրդային ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի ամեն մի ժխտում վնաս է հասցնում ինտերնացիոնալիզմին ոչ միայն առանձին հանրապետությունում, այլև ամբողջովին վերցրած մեր սոցիալիստական մեծ տերության մասշտաբներով։

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 59—60։

Ի՞ՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը կախված կամքի ազատ արտահայտությունից կարող է արտահայտվել քաղաքական կարգավիճակի և, համապատասխանաբար, ազգային պետական կառուցվածքի տարբեր ձևերում՝ ունիտար միավորումից մինչև լիակատար անկախություն։ Նրանց միջև կա ընտրության լայն հաջորդաշարք։ Ինչպես նշվում է միջազգային իրավունքի սկզբունքների մասին դեկլարացիայում, «ինքնիշխան ու անկախ պետության ստեղծումը, անկախ պետության հետ ազատ միացումը կամ նրա հետ միավորումը, կամ ժողովրդի կողմից որոշված քաղաքական ամեն մի այլ կարգավիճակի հաստատումը, հանդիսանում են այդ ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման ձևեր» (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2625 (XXV) բանաձևը)։

Հետևաբար, շահագրգռված ժողովուրդների կամքին ենթարկվելու անհրաժեշտությունը ներկայացնում է իրենից ինքնորոշման սկզբունքի բուն էությունը։ Արևմտյան Սահարայի մասին կոնսուլտատիվ եզրակացության մեջ միջազգային դատարանը, վկայակոչելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1514 (XV) հայտնի բանաձևը, հաստատեց, որ «ինքնորոշման իրավունքի կիրառումը կարող է իրականացվել միայն շահագրգռված ժողովրդի կամքի ազատ արտահայտման պայմաններում»։ Միջազգային դատարանը նշեց նույնպես, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2625 (XXVI) բանաձևը «դարձյալ հիշեցնում է շահագրգռված ժողովուրդների կամքի արտահայտությունը ուշադրության առնելու մասին»[1]։

Նախկին ռուսական կայսրության ժողովուրդների ինքնորոշման ձև է դարձել կամավոր միավորումը խորհրդային ֆեդերացիայի հիման վրա։ Դա պատմական դեր է խաղացել՝ բացելով սոցիալիստական ուղիով համատեղ զարգացման հնարավորություն։ Սակայն այժմ նրանում եղած պոտենցիալի օգտագործմանը խանգարում են ազգային ու ազգամիջյան պրոբլեմները, որոնք ծագել են ազգային-պետական կառուցվածքի լենինյան սկզբունքներից ամենակոպիտ շեղումների հետևանքով, թույլ են տրվել Ստալինի վոլյունտարիզմի շրջանում և արմատացել լճացման ու անտարբերության դարաշրջանում։

Այդ ձևախեղումները արտահայտվեցին ինչպես ազգային-պետական և ազգային-վարչական կազմավորումների բազմաստիճան ստորակարգության կառուցվածքի ստեղծման մեջ, որն արդեն բուն իր էությամբ ենթադրում էր ազգերի ու ժողովուրդների անիրավահավասարություն, այնպես էլ մի շարք դեպքերում ոչ միայն լենինյան, այլև ազգատարածքային սահմանազատման համադեմոկրատական սկզբունքներից կոպիտ շեղումներում։

Հնարավորություն չունենալով լիովին անտեսել ֆեդերատիվ կառուցվածքի լենինյան պահանջը՝ Ստալինը կարողացավ, այնուամենայնիվ, պաշտպանել «ավտոնոմիզացիայի» իր պլանը առանձին միութենական հանրապետությունների շրջանակներում, որոնց կազմի մեջ մտցվեցին մյուս ազգությունների ու ժողովուրդների ինքնավար կազմավորումներ։ Դրա հետևանքով գոյացավ «ֆեդերացիա ֆեդերացիայի մեջ» կրկնակ համակարգը և համաստորադասության բազմափուլությունը. այն ժողովուրդները, որոնք ըստ լենինյան կոնցեպցիայի իրավահավասար են անկախ թվաքանակից, աշխարհագրական դիրքից, զարգացման աստիճանից և այլն, հայտնվեցին անհավասար պայմաններում, երբեմն կրկնակի և եռակի ենթակայության մեջ։

Սահմանելով ժողովուրդների ստորակարգություն, մի ժողովուրդը կամ նրա մասերը ենթարկելով մյուսների պետական իշխանությանը՝ Ստալինը գիտակցաբար անտեսում էր նրանց պատմական անցյալը, նրանց փոխհարաբերությունների պրոբլեմները։ Պատահական չէր նաև այն, թե «ժողովուրդների հայրը» ինչպես էր կամայականորեն վերաձևում սահմանները, խորտակում ժողովուրդների տարածքային ամբողջությունը։ Այդ ամենը միայն նրա անձնական համակրություններով ու հակակրություններով, նրա քմահաճություններով ու ֆավորիտիզմով բացատրելը լրիվ պատկեր չէր ստեղծի։ Դա ամենից առաջ արդյունք էր ստալինյան մաքիավե-

[1] I. C. J. Reports, 1975, p. 32—33։

լիզմի, նրա քաղաքական նենգության, որը հաշվի չէր նստում ժողովուրդների համակրությունների, ցանկությունների, սպասելիքների հետ։

Միջազգային հարաբերությունների լենինյան նորմաներից շեղումների բնույթի և իրավունքի ու արդարության մասին ամենատարրական պատկերացումներին անհամապատասխանության խորության ակնառու ցուցադրում է ծառայում բազմաչարչար հայ ժողովրդի օրինական իրավունքներին ու շահերին Ստալինի բիրտ ու անմարդկային վերաբերմունքը։ Սկզբից, Անտանտի հետ քեմալական Թուրքիայի նախատեսված ռազմաքաղաքական դաշինքը ջարդելու և նրան համաշխարհային հեղափոխությանը ներգրավելու համար, նա հավանություն արտահայտեց հայերի ցեղասպանության քաղաքականությանը, նրա թիկունքում և առանց նրանց համաձայնության ճանաչեց նրանց ազգային տարածքի 8/10 մասի զավթումը, ներառյալ ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի լավագույն ու մեծ մասը՝ Ղարսի մարզը և Սուրմալուի գավառը։ Այդ անդամահատությունից հետո մնացած տարածքը տնօրինեց այնպես, որ բոլոր կողմերից կտրված Հայկական ԽՍՀ-ում մնաց 700 հազար հայ, իսկ հարևան երկու խորհրդային հանրապետություններում՝ 1 միլիոն։ Կանգ չառնելով հօգուտ Թուրքիայի հայկական տարածքի ինքնակամ զիջումների վրա, Ստալինը համաձայնություն տվեց 1921 թ. ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի միջև Մոսկվայի պայմանագրում մտցնելու մի դրույթ, ըստ որի կողմերը տնօրինեցին Հայաստանին պատկանող Նախիջևանի մարզը, որը «կազմում է ինքնավար տարածք Ադրբեջանի պրոտեկտորատի ներքո», այն էլ «այն պայմանով, որ Ադրբեջանն այս պրոտեկտորատը չի զիջի երրորդ պետության», այսինքն՝ նրա օրինական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանին (հոդ. III)։ Ավելին, մոռացության տալով հենց նոր հեղափոխության կողմից դատապարտված ճնշման մեթոդները, Ստալինը համաձայնեց պայմանագրի մեջ մտցնել մի հոդված, ըստ որի «Ռուսաստանը պարտավորվում է անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ այնպիսի քայլեր ձեռնարկել, որոնք անհրաժեշտ են պարտադիր ճանաչման համար այդ հանրապետությունների

կողմից այն պայմանագրերում, որ նրանք կնքելու են Թուրքիայի հետ ըստ սույն պայմանագրի անմիջականորեն վերաբերող հոդվածի» (հոդ. XV)։ Ի տարբերություն Ադրբեջանի, որի համար ներգործության այդպիսի միջոցառումները միայն ցանկալի էին, Հայաստանի համար դա հարկադրանք էր հրաժարվելու կենսականորեն կարևոր օրինական իրավունքներից ու շահերից։

Զբավարարվելով նաև այդ նույնիսկ իմպերիալիզմի դարաշրջանի համաշխարհային պրակտիկայի համար ոչ այնքան սովորական ցինիկ գործարքով, Ստալինը, շարունակելով անպաշտպան, արյունաքամ Հայաստանի սահմանների վերաձևման քաղաքականությունը, հասավ Ադրբեջանական ԽՍՀ-ին դարձյալ մի հայկական մարզ՝ Լեռնային Ղարաբաղը հանձնելու, որի հայ բնակչությունն այն ժամանակ կազմում էր 95%։

Տարածքային այս ամբողջ տեղափոխումները հայկական պետականությունը ոչ միայն զրկեցին կենսունակությունից (նման կուրսը խրախուսելու համար Նարիմանովը և ուրիշներ խցկեցին մի կեղծ, շնչին գաղափար, թե իբր Հայաստանը «Անտանտի գործակալ» է), այլև հնարավորություն ստեղծեցին ճնշում գործադրելու նրանց վրա, ովքեր աճում ստացան օտարազգի մարզերի ձևով։

Այդ պատճառով այսօր, եթե մենք հավատարիմ ենք վերակառուցման բարոյական արժեքներին, մենք պետք է վերջնականորեն սահմանազատվենք ստալինականության արատավոր ժառանգությունից, որը ամենից շատ առկա է հենց ազգային հարցում՝ մի ասպարեզ, որը նա իր ձեռքն էր վերցրել դեռևս Վ. Ի. Լենինի կենդանության օրոք։

Միջազգային հարաբերությունների վերակառուցման մեկնակետ կարող է և պետք է լինի միայն ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, որը ներկայացնում է ազգամիջյան հարաբերությունների համադեմոկրատական հիմքը ամբողջ մարդկության մասշտաբով։ Ուստի 1922 թվականի ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագրի փոխարեն միութենական նոր պայմանագրի մշակման ու ստորագրման և ԽՍՀ Միության մասին նոր դեկլարացիայի նախապատրաստման ժամանակ, որոնք խաղալու են ֆեդերացիայի և նրա անդամնե-

ի փոխադարձ իրավունքներն ու փոխադարձ պարտավորությունները հաստատող քաղաքական ու իրավական հիմնադիր փաստաթղթի դեր, անհրաժեշտ է որպես առաջին քայլ հաստատել ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների ազատ ինքնորոշման հիման վրա միավորման կամավոր բնույթը ինչպես ԽՍՀՄ, այնպես էլ յուրաքանչյուր միութենական բազմազգ հանրապետության կազմում: Ֆեդերացիայի այդ բազմազգ անդամները չեն կարող մերժել իրենց կազմում եղած ժողովուրդների այն իրավունքները, որ նրանք պահանջում են իրենց համար: Չի կարելի «մոռանալ», որ ինքնորոշման հավասար իրավունք ունեն անխտիր բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև առանձին միութենական հանրապետությունների կազմում մտած ժողովուրդները: Այդ ժողովուրդների անունից խոսելու համար համապատասխան միութենական հանրապետությունները պետք է ունենան նրանց կամավոր և ազատորեն արտահայտած համաձայնությունը: Անհնար կլինի խոսել դեմոկրատիայի, ազատության ու ինքնորոշման մասին երկրորդ հարկում, եթե նույն այդ իրավունքները ոտնահարվեն առաջին հարկում: Այնինչ ԽՄԿԿ պլատֆորմի նախագծում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի՝ որպես ազգամիջյան հարաբերությունների իրավական հիմքի մասին խոսվում է ցածրաձայն, գրեթե շշուկով: Մի տեղ ասվում է «ինքնորոշման տնտեսական բովանդակության մասին», բայց համարյա ոչինչ չի ասվում նրա քաղաքական բովանդակության մասին:

Ազգամիջյան հարաբերությունների վերակառուցման բացարձակ անհրաժեշտ պայմաններից մեկը խորհրդային մեծ ընկերակցության բոլոր ժողովուրդների հիրավի իրավահավասարության վերականգնումն է: Չկա ոչ մի՝ ո՛չ իրավական, ո՛չ քաղաքական, ո՛չ բարոյական հիմք չճանաչելու, օրինակ, թաթարների, բաշկիրների կամ օսերի միութենական հանրապետության կարգավիճակի նույնպիսի իրավունքները, ինչպիսիք ունեն, օրինակ, մերձբալթիկցիները, վրացիները, հայերը կամ ադրբեջանցիները: Օտարերկրյա պետությունների հետ սահմանների բացակայության միամիտ վկայակոչումները վաղուց հերքվել են համաշխարհային պրակտիկայով: Եթե Սվազիլենդն ու Լեսոտոն կարող են գոյություն ունենալ

Հարավաֆրիկյան ռասիստական հանրապետության տարածքով շրջապատված, ապա ինչու Խորհրդային Թաթարիան չի կարող գոյություն ունենալ Խորհրդային Ռուսաստանի և մյուս խորհրդային հանրապետությունների տարածքներով շրջապատված:

Նույնքան էլ սնանկ կլինի վկայակոչել աննախապատրաստվածությունը կամ քաղաքական փորձի բացակայությունը: ԽՍՀՄ-ը միշտ հանդես է եկել անկախ զարգացման մակարդակից բոլոր ժողովուրդներին անհապաղ պետական անկախություն տալու օգտին: ՄԱԿ-ում մենք միշտ պահանջում էինք խնամարկու ժողովուրդներին ամենակարճ ժամանակներում անկախության վերապահում: Կարելի է տասնյակ պետություններ թվարկել նախկին ենթամանդատային կամ ենթակա երկրների թվից, որոնք ԽՍՀՄ գոյության ընթացքում անկախության են հասել: Առավել ևս հիմք չկա ԽՍՀՄ եղբայրական ժողովուրդների աննախապատրաստվածության վերաբերյալ կասկածների համար խորհրդային սոցիալիստական հասարակության մեջ նրանց զարգացման մոտ երեք քառորդ դար անցնելուց հետո միութենական հանրապետության կարգավիճակ ընդունելու վերաբերյալ:

ՄԱԿ-ում բոլոր պետությունները, անկախ տարածքի չափերից, բնակչության թվաքանակից, զարգացման մակարդակից, գտնվում են հավասար դրության մեջ: Տասնյակ «գաճաճ» կամ այսպես կոչված «մինի» պետություններ օգտվում են մեկ միլիարդ բնակչություն ունեցող Չինաստանի հետ սուվերեն հավասարությունից կամ այնպիսի գիգանտների հետ, ինչպիսիք ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ն են՝ իրենց ավանդը ներդնելով ընդհանուր գործում: Իսկ ինչու սոցիալիստական ֆեդերատիվ պետության մեջ պետք է հեռանալ միջազգային այդ ստանդարտից, որը հաստատվել է խորհրդային ժողովուրդների կողմից պաշտպանվող իմպերիալիզմի և հեգեմոնիզմի դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ:

Ստիպված ենք դառնությամբ հաստատել, որ մեզանում ժողովուրդների իրավահավասարության գաղափարն այնքան հիմնավոր է մոռացվել, որ մենք հրաժարվել ենք նույնիսկ միութենական հանրապետությունների հավասարության ար-

տաքին դրսևորումներից՝ ամենուրեք ընդունված այբբենական կարգով պետությունների թվարկումից։ Դրա փոխարեն միութենական հանրապետությունների համար ընդունվեց համաշխարհային պրակտիկայում աննախադեպ կարգ՝ «ինքնիշխան» պետությունների դասավորությունը հաստատել ըստ նրանց կենդանի քաշի՝ բնակչության թվաքանակի[1]։

ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների ինքնիշխան հավասարության ճանաչումը, նրանց միջև հարաբերությունների ստորակարգության համակարգի առավելություններից հրաժարումը քաղաքական իմաստունություն են պահանջում ոչ միայն խորհրդային Միության, այլև առանձին բազմազգ հանրապետությունների ղեկավարներից։ Կյանքը ցույց է տալիս՝ իրավահավասարության խախտումը, հանրապետությունների «ինքնավարացված» ժողովուրդների իրավունքների ոտնահարումը վերջին հաշվով տանում է դեպի իրավահավասարության խախտում, բուն միութենական հանրապետությունների իրավունքների ոտնահարում։ Ստալինի վոլյունտարիզմի տարիներին և լճացման ժամանակաշրջանում նրանց պակասությունը դարձավ անվանական հասկացություն։ Մյուս կողմից, եթե այդ ժողովուրդներին պիտի մերժեն այն իրավունքները, որոնք այսօր պահանջում են այսպես կոչված միութենական հանրապետությունների «բնիկ» ժողովուրդների համար[2], ապա դրանով կվիժեցվի նաև նրանց իրավաբանական կարգավիճակի ամրապնդման գործը։

Իսկ ինչ վերաբերում է խորհրդային ֆեդերացիայի վերակառուցման նկատմամբ կենտրոնի վերաբերմունքին հորիզոնական սկզբունքներով իսկական իրավահավասարության, ապա նրա զուսպ վերաբերմունքը, եթե չասենք կիսատպատությունը, բացատրվում է, հավանաբար, ոչ թե գոյություն ունեցող դրությունը պահպանելու ցանկությամբ, այլ այնքան պատասխանատու և լարված ժամանակաշրջանում խոշորամասշտաբ փոփոխությունների վախով։ Այն, որ նման փոփոխությունները պահանջում են նախապատրաստական մեծ աշխատանք՝ անվիճելի է, բայց անվիճելի է և այն, որ նման փոփոխությունները հասունացել են։ Ուստի այնպիսի ծրագրային փաստաթուղթը, ինչպիսին ԽՄԿԿ պլատֆորմն է ազգային հարցի վերաբերյալ, պետք է նման փոփոխությունների անհրաժեշտության ցուցումներ պարունակի ապագայում և կողմնորոշի նախապատրաստական աշխատանքի անցկացմանը։

Ակներև է, որ միութենական հանրապետությունների շրջանակներում ստալինյան «ավտոնոմիզացիայի» վերապրուկներից հրաժարումը և ժողովուրդների իսկական իրավահավասարության լենինյան գաղափարներին վերադառնալը պետք է դառնան ազգամիջյան հարաբերությունների վերակառուցման գլխավոր ուղղություններից մեկը։ Բոլոր ժողովուրդների լիակատար իրավահավասարությունը, նրանցից յուրաքանչյուրի միասնական իրավական կարգավիճակի ճանաչումը ոչ միայն կպատասխաներ ազգային հարցի լուծման լենինյան կոնցեպցիայի մեր իդեալին, այլև մեր միջազգային պարտավորություններին։ Պատմական ժամանակավրիպության վերացումը ժողովուրդների ստորակարգության և նրանց համաստորադասության ձևով կվերացներ ազգամիջյան հակասությունների ծագման հիմնական պատճառներից մեկը։ ԽՍՀՄ ժողովուրդների միջև հորիզոնական հարաբերությունների սահմանումը նրանց իրավահավասարության հիման վրա ոչ միայն չի թուլացնի, այլ, ընդհակառակը, կամրապնդի կենտրոնի դերը, կբարձրացնի նրա հեղինակությունը, ավելի արդյունավետ կդարձնի նրա հաշտարարի կամ միջնորդի դերը ազգամիջյան տարաձայնությունների և վեճերի լուծման գործում, ներառյալ և նրանց, որոնք կապված են ազգատարածքային սահմանազատման լենինյան սկզբունքների փոփոխությունների հետ։

Երբ ասում են, թե սահմաններն ուղղելը նշանակում է

---

1 Հետաքրքրական է նշել, որ նոր սահմանադրության ընդունման կապակցությամբ այդ հարցը քննարկելիս մերժվեց նաև այլընտրանքը, որ հիմնված էր ԽՍՀՄ-ի մեջ միութենական հանրապետությունների մտնելու ժամանակագրական տարեթվի վրա, որի դեպքում «հավասարների մեջ առաջինի» համար կպահպանվեր ցուցակը գլխավորելու արժանի արտոնությունը։

2 «Բնիկ ժողովուրդներ» տերմինի օգտագործումը բնավ միշտ չէ, որ արտահայտում է դրության էությունը միութենական հանրապետություններում։ Եթե էստոնիայում մյուս ազգությունների երևան գալը վերջին դարի հետևանք է, ապա հայերով բնակեցված Ադրբեջանական շրջաններում հայերը ավելի «բնիկ» են, քան բուն ադրբեջանցիները։

ողջ-ողջ մորթել, չգիտես ինչու չեն ճշտում, թե ինչ սահմանների մասին է խոսքը։ Ոչ ոք չի վիճել, որ ժողովուրդների տարածքային ամբողջության խախտումն անթույլատրելի է, որ դա երկպառակության ու վեճերի աղբյուր է։ Բայց հենց այդ պատճառով բուն կյանքը մեզ դնում է ժողովուրդների խախտված տարածքային ամբողջության, մեր ժամանակ թույլ տրված սահմանների բիրտ խորտակման ու վերաձևման հետևանքների վերականգնման անհրաժեշտության առջև։ Եթե ժողովրդի մարմինը ողջ-ողջ մորթոտել են, եթե մի ժողովրդի գլուխը, ձեռքերն ու ոտքերը կցել են մյուսի մարմնին, ինչ է, այդպես էլ թողնենք մեկն առանց գլխի, ձեռքի կամ ոտքի, իսկ մյուսը երկգլխանի, եռոտանի ու չորս ձեռանի՞։ Նույնիսկ եթե դրանք անհամատեղելի՞ են և փտախտո՞վ են սպառնում օտար վերջավորությունների «երջանիկ տիրոջը»։

Վերակառուցման շահերին, իհարկե, չի համապատասխանում սահմանների վերաձևումը, բայց մի՞թե նրա շահերին համապատասխանում է գոյություն ունեցող անոմալիան։ Այսօր մեր մամուլում արդեն խոստովանում են. «Պետությունը վերակառուցման այնքան կարիք ունի, որ, եթե մենք ուզում ենք պահպանել նրա արտաքին սահմանները, ստիպված ենք ինչ-որ բան անել ներքին սահմանների հետ՝ դա արդեն ակներև է շատերի համար»[1]։

Իսկ ի՞նչ անել։ Դեղատոմսերից մեկը, որ հրամցվում է որպես քաղաքական իմաստնության նմուշ, այն է, որ փոփոխել ոչինչ չփոխելով. սահմանները թողնել, փոխելով դրանց քաղաքական բովանդակությունը։ Բայց մենք արդեն երեք քառորդ դար ասում ենք, որ մեր սահմաններն սկզբունքորեն այլ են, որ նրանք չեն բաժանում, այլ միացնում են։ Այդպես պետք է լինի, բայց դա միշտ չէ, որ այդպես է։ Կան դաժան իրողություններ, որոնք ոչ ոք չի կարող անտեսել. պարտադրված, վիճելի սահմանները այնպիսի թշնամանքի աղբյուր են, որը ժամանակը միայն խորացնում և ուժեղացնում է։

Սահմանների կայունությունը օգտակար ու հարկավոր երևույթ է։ Կարելի է ամբողջ սրտով ցանկանալ և ձգտել

[1] Соколов В. Демократия и границы. Литературная газета, 2 августа 1989 г.

դրան, ընդ որում հիշելով, որ այն ձեռք է բերվում ոչ թե անարդարության ու ապօրինության գալվանացումով, այլ միայն իրավունքին ու արդարությանը սահմանների համապատասխանությամբ։ Ուստի, վերակառուցելով միջազգային հարաբերությունները իսկական իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման հիման վրա և դրանով վերացնելով ապագայում տարածքային վեճերի ծագման ընդհանուր պատճառները, մենք չպետք է, չենք կարող անտեսել նաև ազգամիջյան հարաբերությունների վերակառուցման մյուս կարևոր ուղղությունը՝ վայրի անարդարությունների և ազգատարածքային սահմանազատումների լենինյան նորմաների կոպիտ խախտումների՝ սահմանների կամայական այն վերաձևման հետևանքի վերացման անհրաժեշտությունը, որը հասցրել է առանձին ժողովուրդների տարածքային ամբողջության խախտման կամ ժողովուրդների հանցավոր դեպորտացիաների և նրանց իրենց ազգային տարածքներից զրկելուն։ Առանց «փոքր հայրենիքի» այն ժողովուրդներին վերադարձնելու հարցի լուծման, որոնք զրկված են նրանից ամբողջովին կամ մասնակիորեն, առանց արդարության ու իրավունքի վերականգնման ազգամիջյան հարաբերությունների վերակառուցումը կիսամիջոցի, և որ ավելի վատ է՝ ապօրինության և անարդարության հավերժացման ձև կընդունի։

7. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՓՈԽԶԻՋՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ՈՐՈՆՈՒՄԸ

Ազգամիջյան հարաբերությունների վերակառուցումը ենթադրում է ոչ միայն ազգային պետական կառուցվածքի ավանդութային սահմանակարգերի ինքնորոշման մեխանիզմի և ընթացակարգերի կատարելագործման, իրական բովանդակությամբ օժտելու անհրաժեշտություն, այլև նոր, ոչ ավանդութային սահմանակարգերի ստեղծում։

Խորհրդային ֆեդերացիայի շրջանակներում ժողովուրդ-

ների ինքնորոշման իրավունքի դրսևորման ձևերին են դասում միութենական հանրապետությունների կամ զանազան ինքնավարությունների կարգավիճակի շնորհումը։ Գնահատելով պետական-իրավական այդ սահմանակարգի պոտենցիալ հնարավորությունները, պետք է դրանք դիտել ծագող խնդիրների լույսի տակ՝ հաշվի առնելով մեր երկրի իրապես գոյություն ունեցող պայմանները։

Կողմնորոշվելով դեպի ազգային ու ազգամիջյան պրոբլեմների լուծումը ըստ «ուժեղ կենտրոն, ուժեղ հանրապետություններ» թվում է, թե հասարակ ու պարզ ձևակերպման, մենք անխուսափելիորեն բախվում ենք մի հարցի՝ իսկ ի՞նչ են լինելու 20 ինքնավար հանրապետությունները, 8 ինքնավար մարզերը և 10 ազգային օկրուգները, որոնք ընդգրկված են տասնհինգ միութենական հանրապետություններից չորսի կազմում։ Եթե կտրենք շղթան և սահմանափակվենք միութենական հանրապետությունների ամրապնդումով, նախկին վիճակում թողնելով նրանց ենթակա 38 ինքնավարությունները, չէ որ դա էլ ավելի կասստակացնի գոյություն ունեցող ազգային պրոբլեմները։ Ակներև է, որ իբրև իրավահավասար սուբյեկտ միասնական խորհրդային ֆեդերացիայի կազմի մեջ բոլոր ինքնավար կազմավորումների ուղղակի մուտքի մասին հարցը լուծելուց առաջ շղթան պետք է շարունակվի և առաջարկված ձևակերպման մեջ մտցվի պակասող երրորդ տարրը՝ «ուժեղ կենտրոն, ուժեղ հանրապետություններ, ուժեղ ինքնավարություններ»։

Ինքնավարության մակարդակի բարձրացումը հորիզոնական հիման վրա պետք է դիտվի որպես անցողիկ միջոց առում ֆեդերացիայի վերակառուցման ճանապարհին։ Իսկ որպես առաջին քայլ հարկավոր կլիներ բոլոր ինքնավարությունները փոխադրել ազգային-պետական կազմավորումների՝ ինքնավար հանրապետությունների կատեգորիայի։ Միևնույն ժամանակ ազգային ինքնավարությունը պետք է դառնա իրական բոլոր առումներով՝ տնտեսական, ֆինանսական, կուսակցական և այլն։ Դա նշանակում է, որ նրանց ֆինանսավորումը, նյութատեխնիկական մատակարարումը, ժողովրդագրական զարգացումը և այլն չպետք է մնան միութենական հանրապետությունների հայեցողության տակ։ Ինքնուրույնության նույն այն աստիճանը, որ ունեն միութենական հանրապետությունները կենտրոնի նկատմամբ, պետք է ճանաչվի նաև ինքնավարությունների համար միութենական հանրապետությունների նկատմամբ։ Միութենական հանրապետության հետ ինքնավարության բոլոր վեճերում նրանք պետք է կենտրոնին անմիջական բողոքարկելու լիակատար իրավունք ունենան։

Հատուկ պետք է նշել կուսակցական կառուցվածքի հարցը, նկատի ունենալով, որ կուսակցությունը պաշտոնապես, ըստ սահմանադրության ճանաչվում է «խորհրդային հասարակության ղեկավար և ուղղություն ցույց տվող ուժը, նրա քաղաքական համակարգի կորիզը»։ Բացառիկ լիազորություններով օժտված կուսակցական մարմինների գոյություն ունեցող կառուցվածքը չի կարող իսկական ազգային ինքնավարության հիմք ծառայել։ Հանրապետական շովինիզմի՝ «մեծապետականության» այդ տարատեսակի առաջացման և միութենական հանրապետությունների կուսակցական ապարատ՝ իշխանության ամենաուժեղ և գործուն մարմին նրա թափանցման պայմաններում, ինքնավարությունը զրկվում է ամեն տեսակ իրական իմաստից ու նշանակությունից։

Կատարելագործելով ինքնավարությունը, միաժամանակ պետք է պարզորոշ պատկերացնել, որ այն երբեք և ոչ ոքի կողմից չէր դիտվում որպես համապարփակ միջոց, որպես համադարման ազգամիջյան բոլոր պրոբլեմների լուծման համար։ Դա լրիվ չափով վերաբերում է ինքնավարությանը խորհրդային ֆեդերացիայի շրջանակներում։ Ազգամիջյան հակասությունների բնույթն ու սրությունն առանձին դեպքերում գործնականորեն բացառում են ինքնավարության սահմանակարգի շրջանակներում դրանց կարգավորման հնարավորությունը։ Ավելին, պրակտիկան վկայում է, որ երբեմն այդ հակասություններն ու վեճերը հասունանում են և ուժեղանում հենց ինքնավարության գրկում, բացառելով բնակչության համաձայնության վրա հիմնված փոխզիջման հասնելու ամեն տեսակ հնարավորություն գոյություն ունեցող կառուցվածքի շրջանակներում։ Նման բախումնավտանգ իրադրություններում ինքնավարության մակարդակի ուշացած բարձրացումը և նրա կատարելագործումը չեն կարող կասեց-

նել օտարազգի մարզի ինքնորոշման տրամաբանական վախճանը՝ ճնշող պետությունից անջատումը։

Ղարաբաղը դրա վառ օրինակն է, որ հաստատում է այդ օտարազգի մարզի հետագա բռնի պահման անհնարինությունը Ադրբեջանական ԽՍՀ կազմում, ինչպիսին էլ լինի նրա ինքնավարության մակարդակը, որովհետև այստեղ խոսքը ոչ թե պարզապես ինչ-որ սոցիալ-տնտեսական, կուլտուր-ազգային կամ լեզվական իրավունքների ոտնահարման մասին է, այլ հայ բնակչության ֆիզիկական անվտանգության բացակայության, որպես ազգային խմբի նրա գոյության իրական վտանգի մասին։

Այդ պրոբլեմն այսպիսին չի դառել մի ժամում. վերջին երկու տարվա իրադարձությունները սոսկ ավելի լրիվ բացահայտեցին վեճի բովանդակությունը, ուշադրությունն հրավիրեցին նրա խոր արմատների վրա։ Հայ ժողովրդի պատմական հիշողությունը 1918 թ. Բաքվում 30 հազ. հայերի, 1920 թ. Շուշիում 32 հազ. հայի կոտորածը, 1988 թ. Սումգայիթ քաղաքում ադրբեջանցի կոմերիտականների կատարած ցեղասպանության ակտը մի միասնական շղթայով կապում է 1915—1923 թթ. հայերի ցեղասպանության եղրափակիչ քայլի հետ։ Անցյալն այստեղ կապված է ներկայի և ապագայի հետ։ Վերհիշենք Կենտրոնական հեռուստատեսությամբ Գ. Բորովիկի հաղորդումից մի դրվագ։ Մոլեռանդները, իրենց զոհի մոտ գտնելով Հայաստանի պատմության երկու հատոր, առաջարկում են դրանք լրացնել նոր՝ հայ ժողովրդի ներկա ու ապագա պատմության երրորդ և չորրորդ հատորներով։ Սումգայիթի մարդասպանների պատմական այդ կողմնորոշումը պատկառելի փաստական հիմք ունի։

Իրենց համար Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում նյութված ճակատագրի մասին Ղարաբաղի հայերն ակնառու պատկերացում են ստանում ըստ հայկական տարածքներում ժողովրդագրական պատկերի փոփոխման այն քաղաքականության հետևանքների, որը հաջողությամբ իրականացվեց Նախիջևանի մարզում, ուր մի քանի տասնամյակների ընթացքում հայ բնակչության թվաքանակը սպիտակ ցեղասպանության «խաղաղ միջոցներով» հասցվեց զրոյի։

Նույն այդ քաղաքականությունը տասնամյակների ընթացքում հաջողությամբ կիրառվում էր ԼՂԻՄ-ում։ Այդ նպատակով մշակվել էր «գաղափարախոսական» հիմնավորում՝ ամենակոպիտ կեղծարարության ճանապարհով տարածքի բուն հայկական բնակչությունը մի վարկածով հայտարարվում էր եկվոր տարր իր իսկ երկրում, իսկ մյուսով՝ ադրբեջանական ժողովրդի «հայացված մաս»։ Դարեր ի վեր հայկական այդ մարզի էթնիկական կերպարի կանխամտածված բռնի փոփոխության հետևանքները՝ հայ բնակչության տոկոսի նվազեցումը 95-ից մինչև 76-ի, ներկայացվում է որպես ադրբեջանի բնակչության «բնական» աճի արդյունք, որն այսուհետև էլ պետք է շարունակվի։

Իսկ իրականում, եթե Լեռնային Ղարաբաղում ժողովրդագրական փոփոխությունները որոշվեին միայն բնական աճով, ապա 1979 թվականի մարդահամարի ժամանակ հայ բնակչության թվաքանակը պետք է կազմեր 620238 մարդ, այլ ոչ թե 123100 մարդ, իսկ ադրբեջանականը, ընդհակառակը, պետք է կազմեր միայն 27176 մարդ, 37200-ի փոխարեն, այսինքն՝ փաստականից ցածր կլիներ 26,9%-ով։ Մնում է ավելացնել, որ 1989 թ. Լեռնային Ղարաբաղում պետք է լիներ 731959 հայ, իսկ ադրբեջանցիներ՝ միայն 32548 մարդ, որը կկազմեր հայ բնակչության միայն 4,45%-ը (տես հավելվածի I և II աղյուսակները)։ Այսպիսին են Լեռնային Ղարաբաղում էթնիկական հարաբերությունների բնական զարգացումից աբեռացիայի՝ խոտորման մասշտաբներն ու բնույթը, եթե հիմնվենք միայն մի մեծության՝ բնական աճի վրա[1]։

[1] Բնական աճի գործողության հաշվարկները հիմնված են բնակչության երկու խմբերի և նրանց բնական աճի թվաքանակի պաշտոնական տվյալների վրա ըստ 1926, 1939, 1969 և 1979 թթ. մարդահամարների։ Այն հանգամանքը, որ դրանում հաշվի չեն առնվում ռազմական կորուստները, էականորեն չպետք է փոխի տոկոսային հարաբերությունը, եթե ելնենք այն բանից, որ երկու խումբն էլ պատերազմին մասնակցել են միատեսակ անձնուրացությամբ և հատուցյամբ։ Իսկ ինչ վերաբերում է բնական գաղթի պրոցեսներին, ապա ադրբեջանցիների մոտ այն ցածր է և չէր կարող էականորեն անդրադառնալ դինամիկայի վրա, իսկ զավթիչների բռնությունների ներով ցրված հայերի մոտ խորհրդային շրջանում և հատկապես հետպատերազմյան տասնամյակներում դիտվում էր ներգաղթի լայն ձգտում,

Այդ ամենը, չնայած դաժան հալածանքներին, հանգեցնում էր պատմական անարդարության ուղղման և իր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին բազմակի հարցադրման: Այժմ այդ օտարազգի մարզի ինքնորոշման պահանջն ընդունել է Ղարաբաղի հայերի համաժողովրդական ազգային-ազատագրական շարժման բնույթ և դարձել է ամբողջ հայ ժողովրդի՝ ինչպես Հայկական ԽՍՀ բնակչության, այնպես էլ համաշխարհային սփյուռքի՝ իրենց հայրենիքից զրկված հայերի համազգային գաղափարը:

Դրա հետ միասին Ղարաբաղի հարցի լուծման ուղիներ ու ձևեր ընտրելիս հնարավոր չէ հաշվի չառնել Ադրբեջանական ԽՍՀ-ի անհամազոր ռեակցիայի քաղաքական փաստը, նրա հակագործողությունը իր բախտն ազատորեն որոշելու յուրաքանչյուր ժողովրդի օրինական այդ իրավունքի իրացման դեմ: Ղարաբաղի շրջափակումը, Հայկական ԽՍՀ-ի հետ ընդհատված երկաթուղային կապերը, «անկանխատեսելի հետևանքների», «հավերժական Սումգայիթի» բացահայտ սպառնալիքները, ԼՂԻՄ-ից ու Հայկական ԽՍՀ-ից անասունների գողունի փախցնելը, բեռնատար մեքենաների վարորդների սպանությունը և նման այլ գործողությունները ըստ էության համարժեք են ազգամիջյան պատերազմ հայտարարելուն: Համաձայն 1989 թ. օգոստոսի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին տրված այն հաղորդման, որ արվել էր ԼՂԻՄ-ի դրության ուսումնասիրման գծով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի աշխատանքի արդյունքում, նրա յուրաքանչյուր անդամ և հանձնաժողովն ամբողջությամբ վերցրած «եկան միանշանակ եզրակացության, որ իրադրությունը Լեռնային Ղարաբաղում դուրս է եկել սրման այն գծից, որը կարելի է

որի մասին վկայում է վերջին 70 տարվա ընթացքում Հայկական ԽՍՀ բնակչության համարյա հնգապատիկ ավելացումը: Այդ պատճառով, թեև օբյեկտիվ բոլոր հանգամանքների հաշվառման դեպքում հայերի փաստական թվաքանակը մասամբ ցածր կլիներ, քան այն, որ հիմնված է միայն բնական աճի վրա, բայց ամբողջությամբ վերցրած դա լիականորեն չէր կարող անդրադառնալ երկու խմբերի տոկոսային հարաբերության վրա. նրանց միջև հարաբերակցությունը պետք է մնար 4—6%-ի մակարդակով:

բնութագրել որպես պայթունավտանգ... Այժմ ԼՂԻՄ-ի բնակչության հայկական ու ադրբեջանական մասերի խորթացումը այնպիսի բացառիկ սուր ձևեր է ստացել, որ դրսևորվում է հասարակական կյանքի բոլոր մակարդակներում: Անվստահությունը, վախը, մշտական նյարդային ցնցումները լարվածության հետագա սրման իրական վտանգ են ստեղծում»[1]:

Ավելի ուշ հանդես գալով կենտրոնական մամուլում, այդ հանձնաժողովի ղեկավար, Ազգությունների խորհրդի նախագահի տեղակալ Բ. Ի. Օլեյնիկը նշեց, որ «այնտեղ իրադրությունը ծայրաստիճան սրվել է» և որ «ավելի ճիշտ առկա են համարյա քաղաքացիական պատերազմի բոլոր նշանները»[2]:

Ադրբեջանական կողմի հակազդեցությունը սոսկ միանշանակորեն հաստատում է, որ Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս գալու մասին մարզի ամբողջ հայ բնակչության միահամուռ որոշումը գործնականում չուներ և չունի ուրիշ այլընտրանք: Միաժամանակ, գնահատելով ստեղծված քաղաքական սուր իրադրությունը՝ չի կարելի հաշվի չառնել, որ այդ վեճն ունի թե՛ համամիութենական, թե՛ համաշխարհային չափում՝ առանց չափազանցության: Պատերազմը երկու ժողովուրդների միջև, խորհրդային երկու հանրապետությունների միջև սպառնալիքի տակ է դնում վերակառուցման բախտը ԽՍՀՄ-ում, դրանով իսկ շոշափելով ոչ միայն խորհրդային բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև անմիջականորեն վեճի շոշափած շահերը, այլև ամբողջ աշխարհի շահերը, քանի որ վերակառուցումը համաշխարհային երևույթ է: Այս ամենը կանգնեցնում է փոխզիջողական այնպիսի լուծման անհրաժեշտության առջև, որը համապատասխանի ԼՂԻՄ-ի բնակչության ինքնորոշման իրավունքին և միաժամանակ ընդունելի լինի Ադրբեջանական ԽՍՀ-ի համար: Մինչև այժմ ջանքերն ընթացել են սխալ հունով, քանի որ անտեսել են հիմնական գործոնը՝ մարզի բնակչության ինքնորոշման իրավունքը: Նույնիսկ այժմ, երբ ակնհայտ է դարձել պրոբլեմի լուծման անհնարինությունը Ադրբեջանական ԽՍՀ շրջանակ-

---

1 «Իզվեստիա», 1989 թ., օգոստոսի 4:

2 «Պրավդա», 1989 թ., օգոստոսի 27:

ներում, դեռևս դրանից պատշաճ հետևություններ չեն արվել։

Ժողովրդական դեպուտատ Բ. Ի. Օլեյնիկը գտնում է, որ կենտրոնը և պետության ղեկավարը, իսկ տվյալ դեպքում և ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարը, որպեսզի ԼՂԻՄ-ում իրադրությունն ուղղակի փակուղի չմտնի, պետք է «առանց ավելորդ երկդիմությունների երկու հանրապետությունների առաջին դեմքերին հրավիրեն բանակցությունների սեղանի շուրջ և որպես ժողովուրդների վստահությամբ օժտված կոմունիստներ, ընդառաջ գնան միմյանց հանուն իրենց իսկ ժողովուրդների ապագայի»[1]։

Նախ՝ լուծման ուղիների որոնման առաջարկված ընթացակարգում բացակայում է բանակցությունների պրոցեսի էական, ավելի ճիշտ, գլխավոր տարրը՝ ուղղակի և անմիջականորեն շահագրգռված կողմը՝ ինքնորոշման իրավունքը կրող Լեռնային Ղարաբաղի բնակչությունը։ Հարցը նրա թիկունքում լուծելու փորձերը նախկինում էլ արդյունք չեն տվել, և դա պետք է հաշվի առնի Գերագույն խորհուրդը հետագայում։ Երկրորդ՝ աչքի է զարնում, որ հանձնաժողովի ղեկավարի երաշխավորության մեջ չկա ըստ հարցի էության՝ այն որոշման ուղիների մասին բուն երաշխավորությունը։ Չկար նաև Գերագույն խորհրդի նստաշրջանում ունեցած ելույթում։ Կարելի է սպասել, որ այնուամենայնիվ նման երաշխավորություններ կներկայացվեն։

Աննկատ չմնաց, որ 1989 թ. օգոստոսին Ղարաբաղի հարցի վերջին քննարկումը ԽՄԿԿ Կենտկոմում, ինչպես և քննարկումը վաղ փուլում, կրկին անցկացվեց, հավանաբար, ի հաճույս ադրբեջանական կողմի, առանց ԼՂԻՄ-ի բնակչության ներկայացուցիչների մասնակցության։

Հաջող բանակցությունները և երկկողմանի կարգավորումը հնարավոր են միայն քաղաքակրթվածության որոշակի մակարդակի, իրավունքի առաջնության ճանաչման, փոխհարաբերությունների զոնե ելակետային սկզբունքների վերաբերյալ փոխադարձ վստահության ու համաձայնության առկայության դեպքում։ Երբ դա չկա, երբ ժողովրդի ինքնորոշման սրբազան իրավունքի միակ պատասխանը «սումգայիթն» է,

[1] «Պրավդա», 1989 թ., օգոստոսի 27։

նորմալացման, փոխադարձաբար ընդունելի փոխզիջողական լուծման միակ հնարավորությունը կապված է երրորդ կողմի դերի ճանաչման հետ ոչ միայն վիճողներին բաժանելու, այլև լուծման ուղիների երաշխավորման գործում։

Իհարկե, դա հասարակ խնդիր չէ։ Հավանաբար, մեր ֆեդերացիայի գոյություն ունեցող սահմանակարգերի շրջանակներում փոխադարձաբար ընդունելի լուծում գտնել չի հաջողվի։ Ուրեմն, խոսքը պետք է վերաբերի խորհրդային ֆեդերացիայի հիմունքների հետ համատեղելի ինչ-որ նոր ձևերի և սահմանակարգերի մասին։ Հետևաբար, որոնումը պետք է ուղղված լինի նոր հնարավորությունների բացահայտմանը, ոչ ստանդարտ մոտեցումների մշակմանը։ Ազգամիջյան հարաբերությունների ծագող հարցերի լուծման նոր ուղիների որոնմանը կողմնորոշում է նաև ազգային հարցի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի պլատֆորմը։

Ստեղծված պայմաններում Ղարաբաղի հարցի լուծման որպես քաղաքականապես առավել հարմար տարբերակ կյանքն առաջ է քաշել ԼՂԻՄ-ի կարգավիճակի վերափոխումը միութենական (ֆեդերալ) տարածքի Միության գերագույն իշխանության՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ի դեմս նախագահության կամ նրա նախագահի անմիջական ենթակայության։

Ֆեդերատիվ պետությունների սահմանադրական պրակտիկայում միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակը նոր երևույթ չէ, և նրա բովանդակությունը բավական հստակորեն որոշված է։

Ամենից առաջ հարկավոր է նշել, թե քանի որ ֆեդերալ տարածքի կառավարումը կարող է իրականացնել անմիջականորեն միութենական պետության գլուխը՝ երկրի պրեզիդենտը, այն երբեմն սխալմամբ զուգորդվում է այսպես կոչված «պրեզիդենտական կառավարման» վարչակարգի հետ։ Իսկ իրականում միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակը և պրեզիդենտական կառավարումը նույնական սահմանակարգեր չեն։ Պրեզիդենտական կառավարման տակ սահմանադրական իրավունքում սովորաբար հասկացվում է պրեզիդենտի ժամանակավոր, արտակարգ իշխանության հաստատումը ամբողջ երկրում կամ նրա մի մասում պառլա-

մենտի ցրման կամ գործունեության դադարեցման պայմաններում։

Թեև մարզի անմիջական կառավարումը սովորական լուծում չէ, այն պետք է դիտվի ոչ թե որպես վարչական բնույթի արտակարգ միջոցառում, որը սահմանափակում է քաղաքացիների սահմանադրական իրավունքները, այլ որպես պետական-իրավական բնույթի միջոցառում, որպես պետական կառուցվածքի սահմանադրական սահմանակարգ։

Միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակ է նախատեսված մի շարք ֆեդերալ պետությունների սահմանադրություններով։ Նրանց կազմի մեջ միությունը կազմող հիմնական անդամների հետ միասին մտնում են անմիջականորեն պետական գերագույն իշխանությանը ենթակա միութենական (ֆեդերալ) տարածքները։ Ֆեդերացիայի հիմնական անդամների համաձայնությամբ միութենական պետությունն իրականացնում է այդ տարածքների կառավարումն անմիջականորեն։

Որպես օրինակ կարելի է նշել Կոլումբիա ֆեդերալ օկրուգը, ուր գտնվում է ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնը։ Այդ տարածքը զիջվել էր ֆեդերացիային Մերիլենդ և Վերգինիա նահանգների կողմից։ Չնայած նրա փոքր տարածությանը (0,2 հազ. ք. կմ), այնտեղ ապրում է 762971 մարդ։ Աբուջա համանման ֆեդերալ օկրուգ է նախատեսված նաև Նիգերիայի ֆեդերատիվ հանրապետության ապագա մայրաքաղաքի համար։

Միութենական (ֆեդերալ) կարգավիճակով տարածքները մեծ տեղ են գրավում Հնդկական միությունում։ Միությունը կազմող 21 նահանգների հետ միասին նրա կազմում մտնում են նաև 9 միութենական տարածքներ. 1) Անդամանի և Նիկոբարի կղզիները, 2) Դոան, Դամանը, Դիուն, 3) Դադրան և Նագարխավելին, 4) Դելին, 5) Լակկադիվի, Ամինդիվի կղզիները և Մինիկոյը, 6) Միզորամը, 7) Պոնդիշերին (Պուտուչչերին), 8) Հյուսիսարևելյան սահմանամերձ գործակալությունը, 9) Չանդիգարխը։

Հնդկաստանում իններից երկու դեպքում, այն է՝ Դելիի և Չանդիգարխի միութենական տարածքների դեպքում ֆեդերալ տարածքի կարգավիճակի սահմանումը կապված է (ինչպես և ԱՄՆ-ում Կոլումբիա ֆեդերալ օկրուգի և Նիգերիայում Աբաջա ֆեդերալ օկրուգի դեպքում) այնտեղ համապատասխանաբար ամբողջ ֆեդերացիայի մայրաքաղաքի՝ Դելիի և Պենջեբ և Հարյանա նահանգների ընդհանուր մայրաքաղաքի՝ Չանդիգարխ քաղաքի գտնվելու հետ։ Մնացած դեպքերում միութենական տարածքի կարգավիճակի սահմանումն առաջ է եկել պատմական, էթնիկական և քաղաքական տարբեր պատճառներով։ Այդ տարածքներից մի քանիսը լայնածավալ տարածություններ են զբաղեցնում (օրինակ, Հյուսիսարևելյան սահմանամերձ գործակալությունը)։

Խոսելով ֆեդերալ տարածքների անմիջական կառավարման արտասահմանյան պրակտիկայի մասին, հարկավոր է ամենից առաջ նշել այն ձևերի բազմազանությունը, որ, հավանաբար, կապված է այդ հատուկ իրավական վարչակարգերի հաստատման պատճառների և նպատակների հետ։ Այսպես, օրինակ, Կոլումբիա ֆեդերալ օկրուգն ԱՄՆ-ում կառավարում է քառամյա ժամանակաշրջանում երկրի պրեզիդենտի նշանակած քաղաքագլուխ կոմիսարը 9 անդամներից կազմված խորհրդի օգնությամբ։ Հնդկաստանի միութենական տարածքները կառավարում է պրեզիդենտը անմիջականորեն կամ իրեն ենթակա գլխավոր կոմիսարների միջոցով։ Մասնավորապես, Հյուսիսարևելյան սահմանամերձ գործակալությունը գտնվում է Հնդկաստանի ներքին գործերի մինիստրության վերահսկողության ներքո։

Համապատասխանաբար տարբեր կերպ է լուծվում նաև օրենսդրական ֆունկցիաների կատարման հարցը։ Կենտրոնական (ֆեդերալ) պառլամենտի ղեկավարության անմիջական օրենսդրության օրինակների կողքին կան առանձին տարածքների օրենսդրական ժողովներին օրենսդրական իրավունքներ վերապահելու դեպքեր պետության գլխի կողմից ընդունվող օրենքների հետագա հավանության պայմանով կամ առանց պայմանի։ Այսպես, Կոլումբիա ֆեդերալ օկրուգի օրենսդրական իշխանությունը ԱՄՆ-ի կոնգրեսում է, իսկ ըստ Մեծ Բրիտանիայի սահմանադրական իրավունքի «նահանգներ» անունը կրող Ջերսի և Հեռնսի կղզիների օրենսդրական ժողովները կարող են այնպիսի օրենքներ ընդունել, որոնք պահանջում են թագավորի հավանությունը Խորհրդում։

Ֆեդերալ տարածքի անմիջական կառավարման բոլոր հայտնի դեպքերում այն իրականացվում է սահմանադրությամբ նախատեսվող իշխանությունների մարմինների միջոցով։ ԽՍՀՄ-ում ֆեդերալ տարածքի անմիջական կառավարումը կարող է իրականացվել միայն խորհրդային իշխանության ներկայացուցչական դեմոկրատորեն ընտրովի մարմինների՝ ժողովրդական դեպուտատների խորհուրդների միջոցով։ Իսկ ֆեդերալ մարզի կուսակցական մարմինները կենթարկվեն անմիջականորեն ԽՄԿԿ Կենտկոմին՝ պահպանելով կուսակցական դեմոկրատիայի բոլոր ձևերը։

Ուղղակի կառավարման հնարավոր ձևերի ամբողջ բազմազանությամբ հանդերձ նրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ կառավարման բոլոր գծերով (ֆինանսավորում, նյութատեխնիկական մատակարարում, դատարան, դատախազություն և այլն) ֆեդերալ մարզը ենթարկվում է անմիջականորեն իշխանության գերագույն մարմիններին։

Իրավաբանորեն պրեզիդենտական (ֆեդերալ) կառավարման հաստատման հնարավորությունը հիմնված է մի կողմից՝ տվյալ ազգատարածքային ինքնավար կազմավորման բնակչության ինքնորոշման վրա ընդհուպ մինչև անջատում ֆեդերացիայի շրջանակներում, իսկ մյուս կողմից՝ այն հանգամանքի վրա, որ ֆեդերատիվ պետությունը գոյություն ունի որպես իրական պետություն նրա մեջ մտնող ֆեդերացիայի անդամ պետությունների կողքին, և, հետևաբար, այն բանի վրա, որ ինքնիշխան իրավազորությունները ֆեդերատիվ պետության և անդամ պետությունների միջև բաժանված են, որ ֆեդերատիվ սահմանների շրջանակներում ամբողջ տարածքի վրա կարող է անմիջական իշխանություն իրականացնել քաղաքացիների նկատմամբ։

Արդի դեմոկրատական հասարակությունում այն դեպքերում, երբ միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակ է սահմանվում որոշակի ազգային խմբով բնակեցված մարզի նկատմամբ, անմիջականորեն կենտրոնին նրա ենթարկման համար անհրաժեշտ է բնակչության համաձայնությունը, որը բոլոր դեպքերում պահպանում է ինքնորոշման իր անկապտելի ու անկասելի իրավունքը։

Միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակի սահ-

մանումը, ի տարբերություն պրեզիդենտական կառավարումից, չպետք է սահմանափակվի ինչ-որ ժամանակային շրջանակներով։ Ժամանակային միակ չափանիշը կարող է սահմանափակվել միայն բնակչության կամքի արտահայտությամբ նրա ինքնորոշման իրավունքի հիման վրա։ Իսկ ֆեդերալ իշխանության կողմից տարածքի միութենական կարգավիճակի գործողության դադարեցման մասին հարցադրման դեպքում բնակչությունն օգտվում է իր անկապտելի իրավունքից որոշելու, թե ինքը միութենական որ հանրապետության կամ նահանգի կազմում կարող է գտնվել։

Կենտրոնի անմիջական կառավարման տակ դրված մարզը տարածքայնորեն ներկայացնելու է առանձին ֆեդերալ միավոր։ Քանի որ իրավաբանորեն այն տարածքը՝ տարածությունը, որում իրականացվում է իշխանությունը ժողովրդի անունից, ապա տարածքն անհնար է կտրել իշխանությունից։ Հետևաբար, ֆեդերացիայի անմիջական իշխանության գործողության շրջանակներն էլ կազմում են նրա սահմանները։

Այն հարցը, թե ֆեդերալ տարածքը կդիտվի արդյոք որպես ազգային-պետական կազմավորում, թե սոսկ որպես ազգային-վարչական միավոր, կախված է կենտրոնի սահմանելիք իշխանության բնույթից։ Եթե խոսենք ԼՂԻՄ-ի առնչությամբ, ապա այն արդեն այժմ ունի ազգային ինքնավարություն։ Հաշվի առնելով խորհրդային ամբողջ ֆեդերացիայում առաջիկայում ինքնավարության մակարդակի բարձրացումը, ակներև է, որ խոսքը պետք է վերաբերի ազգային-պետական կազմավորմանը։

Քաղաքացիության վերաբերյալ հարցը, որպես կանոն, լուծվում է ֆեդերացիայի անդամների հետ ընդհանուր հիմունքներով։ Նույնիսկ Կոլումբիա օկրուգը ԱՄՆ-ում, չնայած իր մայրաքաղաքային դրությանը, ունի իր քաղաքացիությունը։ Այդ հարցը մեծ նշանակություն է ձեռք բերում ԼՂԻՄ-ի և նման դեպքերում, ուր գոյություն ունեցող էթնիկական կազմի պահպանման պրոբլեմը հանդիսանում է ազգամիջյան հակասությունների այն պատճառներից մեկը, որոնք հանգեցրին բաժանման և կենտրոնին տարածքի ուղղակի ենթարկման անհրաժեշտությանը։ Ակներև է, որ Լեռնային Ղարաբաղի ուղածդ ապագա վարչակարգը պետք է

նախատեսի հստակ վերաբերմունք այդ հարցին։ Միութենական տարածքի կարգավիճակը պետք է նախատեսի միջոցառումներ, կանխելու համար տարածքի էթնիկական կազմի հետագա փոփոխություններն ի վնաս բնիկ հայ բնակչության։ Միութենական (ֆեդերալ) մարզի քաղաքացիներ կարող են լինել միմիայն այն անձինք, ովքեր այժմ ապրում են այդ տարածքում, ինչպես նաև այդ մարզից տարագրվածներն ու փախստականներն անկախ նրանց ազգությունից՝ հայեր, ադրբեջանցիներ և այլն։

Ակներև է նույնպես, որ միութենական մարզի սահմանակարգային առանձնահատկություններից մեկը պետք է լինի նրա բնակչության տարբեր ազգային խմբերի դեմոկրատական փոխգործողության մեխանիզմի ստեղծումը, ներառյալ եղած տարաձայնությունների լուծումն ու հաշտեցումը։ Կենտրոնական իշխանության ղեկավարությամբ մարզը երկու ժողովուրդների միջև գժտությունների առարկայից պետք է վերածվի հարաբերությունների նորամալացման և քաղաքակիրթ շփման համամիութենական վայր։

Քաղաքական առումով ԼՂԻՄ-ում միութենական տարածքի կարգավիճակ մտցնելն այդ պրոբլեմի մյուս բոլոր հնարավոր լուծումների հանդեպ այն առավելությունն ունի, որ խնայում է ադրբեջանցիների ազգային զգացումները, բացառում է Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական փոքրամասնության անվտանգության մասին հարցադրումը և հնարավոր է դարձնում նորմալ ու բնական տնտեսական այն կապերի պահպանումը, որոնք կհաստատեն իրենց կենսունակությունը տնտեսավարման նոր տնտեսական պայմաններում։

Խորհրդային Հայաստանի ժողովրդի համար, ինչպես և ամբողջ հայկական սփյուռքի համար, որն սպասում է հարցի արդարացի լուծմանը վերամիավորման ձևով, նման լուծումն, իհարկե, լավագույնը չի լինի, լրիվությամբ չի համապատասխանի նրա օրինական իրավունքներին ու շահերին, բայց կվերացնի իր հայրենակիցների բախտի և, ամենից առաջ, նրանց ֆիզիկական անվտանգության մասին գլխավոր հոգսը։ Միաժամանակ դա հնարավորություն կստեղծի Խորհրդային Հայաստանում և արտասահմանյան սփյուռքում իրենց

հայրենակիցների հետ Ղարաբաղի հայերի մշակութային ու ազգային այլ կապերի նորմալ զարգացման համար։

Միութենական (ֆեդերալ) տարածքի հաստատումը ԼՂԻՄ-ում ըստ էության իրենից կներկայացներ մասնակի, բացառության կարգով, փոխհարաբերությունների հորիզոնական համակարգի ներածում։ Բացի հիմնական նպատակից (կոնկրետ վեճի կարգավորումից), միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակի ներածումը Լեռնային Ղարաբաղի համար շատ օգտակար կլիներ նաև ամբողջովին վերցրած ֆեդերացիայի ազգային-պետական կառուցվածքի հորիզոնական համակարգի արժանիքների փորձարկման տեսակետից։

Դեռևս վաղջերս, հավանաբար, հնարավոր կլինեին հարցի լուծման ոչ ավանդույթային այլ տարբերակներ, օրինակ, երկու հանրապետությունների կողմից մարզի համատեղ կառավարման միջոցով։ Հարցի լուծումը ձգձգելու յուրաքանչյուր ամիսը և յուրաքանչյուր օրը կրճատում է նաև մարզը Կենտրոնի անմիջական իշխանության ենթարկման հիման վրա համաձայնության հասնելու հնարավորությունը։

Մեր դժբախտությունն այն է, որ նույնիսկ այժմ, վերակառուցման պայմաններում, երբ կյանքը պահանջում է արագ, համարձակ, ստեղծագործական, ծագած ազգային պրոբլեմների սրությունը վերացնելու ընդունակ որոշումների ընդունում, մեր քաղաքական համակարգը և մեր օրենսդրությունը պատրաստ չեն համապատասխան որոշումներ ընդունել։ Ծոխանակ իրադարձությունները կանխելու և դրանք սահմանադրական ու դեմոկրատական զարգացման հունով տանելու, քաղաքագետներն ու օրենսդիրներն առաջվա նման քարշ են գալիս իրադարձությունների պոչից՝ ենթարկվելով իրենց որոշումների հակառակորդների նենգասպառնալիքներին։

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, չցանկանալով քննարկել իր իսկ ստեղծած հանձնաժողովի զեկուցումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ նախքան ամառային արձակուրդները, կրկին թույլ տվեց, որ իրադարձություններն առաջ անցնեն նորմաստեղծագործական գործունեությունից։ Լեռնային Ղարաբաղի բազմամսյա շրջափակման պայմաններում, երբ հայ բնակչության գլխին կրկին կախվել է կոտորածների սպառ-

նալիքները, նրա լիազոր ներկայացուցիչների համագումարը «ռեգիոնում իրադրությունը կայունացնելու համար մինչև մարզային խորհրդի և կուսակցության մարզկոմի ֆունկցիաների վերականգնումը» ընտրեց Ազգային խորհուրդ՝ «կոմունիստների և անկուսակցականների միասնական ժողովրդական մարմին» և նրան հանձնեց «ժողովրդի անունից բոլոր ոլորտներում մարզի կառավարման գլխավորությունը համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում»։ Ընդունելով ԽՄԿԿ ծրագիրն ու կանոնադրությունը և գործելով խորհրդային օրենքների շրջանակներում՝ նրանք ի շահ ժողովրդի իրենց գիծն են անցկացնում ժողովրդական դեպուտատների տեղական խորհուրդների, կուսկոմիտեների, արհմիությունների, կոմերիտմիության, աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների, հասարակական կազմակերպությունների միջոցով։ Ընդգծվում էր նույնպես, որ «Ազգային խորհուրդն իր գործունեության մեջ անկախ է, վերահսկելի է միայն համագումարի կողմից։ Նրա որոշումները կատարման համար պարտադիր են Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում»։

Համագումարի ադրբեջանական ժողովրդին ուղղված դիմումում ասվում է. «Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը, հենվելով իր քաղաքական կարգավիճակն ինքը որոշելու յուրաքանչյուր ժողովրդի անկապտելի իրավունքի վրա, մարզային խորհրդի նստաշրջանների որոշումներով միանշանակ արտահայտվեց Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս գալու՝ Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելու օգտին։ Դա ոչ մի կերպ չի դիպչում ադրբեջանական ժողովրդի իսկական շահերին, քանի որ ազատ չի կարող լինել այն ժողովուրդը, որն իշխում է մյուս ժողովուրդների վրա»։

Դիմումը վերջանում է խելամտության ու սթափության, միմյանց անկապտելի իրավունքների փոխադարձ ճանաչման և վեճի խաղաղ կարգավորման ուղղությամբ կոնկրետ գործողությունների կոչով։

Կամքի ազատ արտահայտման ակտի հիման վրա դուրս գալով միութենական մի հանրապետության իշխանությունից և հնարավորություն չունենալով իր ազատ արտահայտված կամքին համապատասխան մտնելու մյուսի կազմի մեջ, այդ ինքնավար ազգատարածքային կազմավորման բնակչությունը մնում է ամբողջ ֆեդերացիայի իշխանության ներքո։ Մարզը հռչակելով «անկախ միութենական տարածք», ուր դադարում է Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրության և հանրապետական մյուս օրենքների գործողությունը, և ամբողջովին ընդունելով համամիութենական օրենքների ուժը, համագումարը դե-ֆակտո սահմանեց միութենական (ֆեդերալ) տարածքի կարգավիճակ։

Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, շարունակելով ԼՂԻՄ-ի բուն բնակչության ինքնորոշման իրավունքի ժխտումը, ինչպես և պետք էր սպասել, Ազգային խորհրդի ստեղծումը հայտարարեց «հակաօրինական» և «հակասահմանադրական»[1]։

Խոսքն այժմ ԽՍՀՄ Գերագույն խորհրդինն է։ Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ բնակչության խաղաղությունն ու անվտանգությունը կախված են ժողովուրդների ինքնորոշման լենինյան սկզբունքին հետևելու, ԽՍՀՄ սահմանադրության հիմնադիր սկզբունքները հարգելու և իր միջազգային պարտավորությունները պահպանելու նրա պատրաստակամությունից։

1 «Իզվեստիա», 1989 թ., սեպտեմբերի 3։

Հավելված I

ԼՂԻՄ-ի հայ և ադրբեջանցի բնակչության թվաքանակի աճի դինամիկան 1921—1989 թթ. 1921 թ. բազային փաստական թվաքանակի և 1940, 1960 և 1978 թթ. բնակչության բնական աճի տվյալների հիման վրա։

Տարիներ	Հայեր		Ադրբեջանցիներ		% -ներ
	աճը % -ով	մարդկանց թվաքանակը	աճը % -ով	մարդկանց թվաքանակը	
1	2	3	4	5	6
1921	27.40	128060	14.70	7594	5.93
1922	27.40	131569	14.70	7706	5.86
1923	27.40	135174	14.70	7819	5.78
1924	27.40	138878	14.70	7934	5.71
1925	27.40	142683	14.70	8050	5.64
1926	27.40	146592	14.70	8169	5.57
1927	27.40	150609	14.70	8289	5.50
1928	27.40	154736	14.70	8411	5.44
1929	27.40	158975	14.70	8534	5.37
1930	27.40	163331	14.70	8660	5.30
1931	27.40	167807	14.70	8787	5.24
1932	27.40	172405	14.70	8916	5.17
1933	27.40	177128	14.70	9047	5.11
1934	27.40	181982	14.70	9180	5.04
1935	27.40	186968	14.70	9315	4.98
1936	27.40	192091	14.70	9452	4.92
1937	27.40	197354	14.70	9591	4.86
1938	27.40	202762	14.70	9732	4.80
1939	27.40	208317	14.70	9875	4.74
1940	27.40	214025	14.70	10020	4.68
1941	27.70	219890	15.77	10168	4.62
1942	27.99	225979	16.83	10328	4.57
1943	28.29	232305	17.90	10502	4.52
1944	28.58	23875	18.96	10690	4.48
1945	28.88	245702	20.03	10892	4.43
1946	29.17	252797	21.09	11111	4.40
1947	29.47	260171	22.16	11345	4.36
1948	29.76	267837	23.22	11596	4.33
1949	30.06	275808	24.29	11866	4.30
1950	30.35	284097	25.35	12154	4.28
1951	30.65	292720	26.42	12462	4.26
1952	30.94	301690	27.48	12791	4.24
1953	31.24	311024	28.55	13142	4.23
1954	31.53	320739	29.61	13518	4.21
1955	31.83	330852	30.68	13918	4.21
1956	32.12	341382	31.74	14345	4.20
1957	32.42	352347	32.81	14800	4.20
1958	32.71	363768	33.87	15286	4.20
1959	33.01	375667	34.94	15803	4.21
1960	33.30	388066	.36	16355	4.21
1961	32.38	400988	35.01	16944	4.23

1	2	3	4	5	6
1962	31.46	413971	34.02	17537	4.24
1963	30.53	426993	33.03	18134	4.25
1964	29.61	440031	32.04	18733	4.26
1965	28.69	453060	31.06	19333	4.27
1966	27.77	466058	30.07	19934	4.28
1967	26.84	478999	29.08	20533	4.29
1968	25.92	491858	28.09	21130	4.30
1969	25.00	504608	27.10	21724	4.31
1970	24.08	517223	26.11	22312	4.31
1971	23.16	529676	25.12	22895	4.32
1972	22.23	541941	24.13	23470	4.33
1973	21.31	553991	23.14	24037	4.34
1974	20.39	565797	22.16	24593	4.35
1975	19.47	577333	21.17	25138	4.35
1976	18.54	588571	20.18	25670	4.36
1977	17.62	599486	19.19	26188	4.37
1978	16.70	610050	18.20	26690	4.38
1979	16.70	620238	18.20	27176	4.38
1980	16.70	630596	18.20	27671	4.39
1981	16.70	641127	18.20	28174	4.39
1982	16.70	651834	18.20	28687	4.40
1983	16.70	662720	18.20	29209	4.41
1984	16.70	673787	18.20	29741	4.41
1985	16.70	685039	18.20	30282	4.42
1986	16.70	696479	18.20	30833	4.43
1987	16.70	708111	18.20	31394	4.43
1988	16.70	719936	18.20	31966	4.44
1989	16.70	731959	18.20	32548	4.45

Հավելված II

ԼՂԻՄ-ի բնակչության հաշվարկային և փաստական (ըստ մարդահամարների տվյալների) համադրումը՝ հիմնված բնակչության բնական աճի վրա (մարդ)։

Տարիներ	հայեր		ադրբեջանցիներ	
	փաստական թվաքանակը	հաշվարկային թվաքանակը	փաստական թվաքանակը	հաշվարկային թվաքանակը
1921	128060	128060	7594	7494
1939	132800	208317	14100	9875
1959	110100	375667	18000	15803
1970	121100	517223	27200	22312
1979	123100	620238	37200	27176
1989		731959		32548

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

1. Բնակչության կամքով պետական սահմանների որոշումը ժողովուրդների ինքնորոշման լենինյան կոնցեպցիայի արմատական հարցն է 21
2. Ժողովուրդների ինքնորոշումը միջազգային իրավունքի հրամայական նորմա 33
3. Սահմանադրական ճգնաժամ, թե՞ իրավաբանական անդրադիտություն (ժողովրդի ինքնորոշման իրավունքի և պետության տարածքային ամբողջության սկզբունքի հարաբերակցության մասին) 51
4. Ինքնորոշման «տնտեսական անհնարինությունը» քաղաքական պատրվակ է 76
5. Ինքնորոշումը ժողովուրդների միջև և պետությունների միջև խաղաղության ու բարեկամական հարաբերությունների գործոն է 89
6. Ի՞նչ է հարկավոր վերակառուցել ազգամիջյան հարաբերություններում 96
7. Ինքնորոշման սկզբունքի հիման վրա փոխզիջման սահմանակարգային ձևերի որոնումը 105

Յուրի Գեորգի Բարսեղով

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔՆ Է

Юрий Георгович Барсегов

ПРАВО НА САМООПРЕДЕЛЕНИЕ ОСНОВА ДЕМОКРАТИЧЕСКОГО РЕШЕНИЯ МЕЖНАЦИОНАЛЬНЫХ ПРОБЛЕМ

(На армянском языке)
Ереван «Айастан» 1990

Խմբագիր՝ Լ. Ս. Դողոսյան
Նկարիչ՝ Վ. Մ. Մատուրյան
Գեղ. խմբագիր՝ Դ. Ա. Պապոյան
Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Մ. Արշակյան

ИБ № 7066

Հանձնված է շարվածքի՝ 11.12. 1989 թ.: Ստորագրված է տպագրության՝ 22.01. 1990 թ.: Ֆորմատ՝ 84×108 1/32: Թուղթ՝ տպագրական № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 6,51 պայմ. տպագր. մամ. 5,81 հրատ. մամուլ: Տպաքանակ՝ 40.000: Պատվեր՝ 725: Գինը՝ 35 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան, 28:

Издательство «Айастан», Ереван—9, ул. А. Исаакяна, 28.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան: Երևան, Թումանյան փող. 23/1:

Типография № 6 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли.
Ереван, ул. Туманяна, 23/1.

35 ч.